



Բ Ա Գ Ի Ն

Թ ՎԱՐԻ 1970 ՓԵՏՐՈՒՄ
digitised by A.R.A.R.©

ԹԻԻ 2

باكين
 مجلة شهرية ، ادبية وفنية علمية
 مدير المسؤول
 السيد اوتين كارنيك قزنجيان

PAKINE
 REVUE MENSUELLE
 LITTÉRAIRE & ARTISTIQUE
 Propriétaire
 Dr. A. KAZANDJIAN

բ Ա գ ի ն
 ԱՄՍԱԳԻՐ
 ԴՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
 ԵՒ ԱՐՈՒՇՄՑԻ

ՎԱՐՑ ԽՄԲԱԳԻՐ
 Կ. ՍԱՍՈՒՆԻ
 ԽՄԲԱԳԻՐ
 Գ. ՄԱՊԵԱՆ
 ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ
 ԱՆԴԱՄԱՆԵՐ
 Ե. ԳԵՂԱՐԻ
 Տ. ՈՍԿՈՒՆԻ
 Բ. ՓԱՓԱԶԵԱՆ
 Ն. ՊԱՐԹԵՆԵԱՆ
 Ժ. ԱԹԱՐԵԱՆ
 ՀԱՄԱԳԻՐ ԱՆԴԱՄԱՆԵՐԵՆ
 Ժ ԵՒ. ՊՕՑԱԶԵԱՆ

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

Ե. ԿԱՐԱՊԵՆՑ
 Ա. ՍԵՒԱՆ
 Ն. ՊԵՇԻԿՅԱՆԸՆԱՆ
 Թ. ԳԱՌՕՆԷ
 Ա. ՀԱՅԿԱԶ
 Ն. ԶԱՐԵՈՒՏԵԱՆ
 Ե. ՊԵՐՊԵՐԵԱՆ
 Ս. ՍԱՆԻՆԵԱՆ
 Մ. ԹԱՐԻԶԵԱՆ
 Կ. ՍԱՍՈՒՆԻ
 Ե. ԳԵՂԱՐԻ
 Տ. ՈՍԿՈՒՆԻ
 Ա. ՏՕՆՈՑԵԱՆ
 Վ. ԴԱԻԹԵԱՆ

 ՆՇՄԱՐՆԵՐ

Խմբագրութեան հասցէ

G. SASSOUNI
 Rue Sélim Boustani,
 Beyrouth-Liban

Հեռաձայնի թիւ 296898

Կողմի մկար
 ԱՐԱՆԿԱՄ ԳՈՒՐԳԵՆԵԱՆԻ

Բագրու

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԳԱՆՈՒՐԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

Թ. ՅԱՐԻ. ԹԻԻ Զ

ՓԵՅԸՈՒԱՐ 1970

ԳԼՅՈՒԹ

ՅԱԿՈԲ ԿԱՐԱՊԵՆՑ

Դ Ղ Ե Ա Կ Ը

Մառախուղը այնքան էր թանձրացել, որ նրան թուում էր, թէ ամպերի միջով է քայլում։ Երբ հասավ բլրի լանջին, կանգ առավ եւ մշուշի միջից աշխատեց գտնել Փրավինթաունը, ուր անհետ թողել էր իր անցեալը։ Քաղաքը չքացել էր։ Մի պահ լոյսի մի շող պատուեց մէզը եւ հեռում փռուեց Գէորգի Քաղի ծովափնեայ համայնապատկերը՝ փխրուն ու անպաշտպան։ Ատլանտիանը սպառնում էր կուլ տալ իր կրծքում ցցուած այդ հողաշերտը։

Բռնեց զատիփեր արահետը։ Նրա մարմինը ծանրացել էր։ Դժուարութեամբ էր առաջ շարժւում։ Ամէն քայլափոխին նա տեսնէ խորն էր զգում իր ներքին ամայութիւնը։ Յուր թթացել, դարձել էր հողեվարքի նինջ։ Խոնաւ գրտինքի մէջ նրա մարմինը հետզհետէ սառում էր։ Ձէր ուզում լսել իր իսկ ոտնաձայնը։

Արահետը կտրուեց։ Սկսուեց ապառաժը։ Պարզունակ օրերին Փրավինթաունի իր աշխատասենեակից այնքան մօտ ու հասանելի էր թուում հին հաւուրց գլխակը, իսկ հիմա, ամբողջ օրը քայլելուց յետոյ, աներեւութացել էր այն։

Դեռ երեկոն չէր իջել, երբ միանգամից մթադնեց աշխարհը: Մի անկողնավոր կապոյտ արծաթ արտացոլեց ժայռը: Մի տեղ ոտքերի տակ զղբողաց ըլուրը եւ յանկարծ պատուռեց երկինքը եւ այդ ճեղքից յորդեց անձրեւը՝ ուղղահայեաց՝ ճիշդ իր գլխին: Մայթաբեց եւ երեսն ի վար բնկաւ ժայռակոյտի վրայ: Մի անասնիկ յողնութիւն ճնշում էր նրա մարմինը: Կռուկեց ու մնաց: Ուզում էր անէնաւ: Նրա ճակատից արեան բարակ առուակները իջնում եւ խառնուելով անձրեւին ներկում էին սպիտակ շապիկը:

Այդպէս լաւ էր ամեազորդակից մեծակ ու ամապատան սակայն պիտի շնչել պիտի շարունակել եթէ ոչ գիտակցօրէն գտնէ ենթագիտակցօրէն ամէն ինչ դէպի վախճան է գնում դէպի չլինելութիւն եւ կանգ եւ անել բայց դու պիտի շարունակես պիտի ասես մի քան անգամ մի քան որ իմաստաւորութի գոյութիւնը մի խօսք այդ էլ բաւական է այնպէս շուտով կ'իջնի մօտալուտ լռութիւնը եւ լռութիւնից չեմ վախենում չէ՞ որ առանց խօսքի ի գուր է կեանքը դու գնա՞ դու շարունակիր քո ողբերգութիւնը սակայն ո՞ւր եմ ի՞նչ եմ անում այս ժայռի վրայ հեղեղ է հեղեղ վախճանն է աշխարհի եւ ես միակ վերապրողն եմ ողջ տիեզերքում մի խօսք մի բառ այդ էլ բաւական է...

Ի սկզբանէ Բանն էր ի սկզբանէ կ—մ էր որից եղաւ մարդ ուգում էի այլ բաներ էլ ասել բայց ուսուցիչի շառաշուն ապտակը վերջ դրեց մտածումներին երկու շաբաթով արտաբանեցին զպրօցից այ քեզ աշխարհ չեմ ուզում լսել ճշմարտութիւնը յետոյ ես ինձանից չէի հնարել ամէն մարդ գիտէր այդ ասում էին քե կրօնագիտութեան մեր ուսուցիչը ամէն շաբաթ պարբերաբար պոռնկատուն է յանձնում էի էլ ակնի գործութիւն իրեն միայն քե քաղ չգայ կանգնի գրատախտակի առջեւ եւ իրեն սուրբ ձեւացնի հենց որ ուզում ես մի քան ասել գալիս դմբում եմ գլխիդ այս էլ եղաւ ազատութիւնն հերք անիծած բոլորի կարեւորը դեպակն է եթէ կարողանամ մի կերպ վեր հասնել մնացածը դիւրին է եւ կը լինեմ ու Աստուած իսկ նրանից յետոյ մեծ կարող եմ հարթել մեր հաշիւը մայրս այդ առաւօտ ուղղակի անտանելի էր սաք կաթ խմեցի՞ր եղունգներդ մաքրեցի՞ր բրդէ շապիկդ հագա՞ր կրկնակօշիկներդ ո՞ւր են նորից կարգրե՞լ եւ աչքդ դուռ գնա՞ հիւանդացիւր ու ռատկիր մայրս էի շորեկաթ եղբորս վեր ցցուած յետոյքին եւ երանի տալիս նրան որ վաշելում է կեանքի բարիքները մայրս ամէն անգամ երբ այդպէս ինձ կշտամբում էր ինձ քում էր որ նա այդ անում էր ինչ կարօտից դըրդում նա այնտեղ նսկատում արիւն է քափում իսկ դու անառակ նամակներ եւ գրում քանդակն նա ձեռքում քափահարեց Անիքայիմ գրածս նամակը որի վրայ ամբողջ գիշերը գցել էի եւ որը յիմարաբար քողել էի բանկանիտ գրպանում այդ կինը ի գուր է տանտիկնութիւն անում նա կարող է լրտես դառնալ եւ բոլորի գաղտնիքները ձեռք բերել միայն քե մ'վ գործ կը տայ այդքան գէրակ մի կնոջ շուն-շան-սրդիները ամէն ինչ սովորեցնում եմ բացատրում եմ ներկի գաղտնիքը սակայն քերանում եմ ասելու քե ինչու պիտի նկարել Գեղարուեստից Ակադեմիայում առաջինն էի երկու ռսկեայ կրծքա-նշան տտացայ պատառներին գլխապտոյտ գին էին վնարում չէ չէ վանդաքա մարմինը չի խօսում մեռած է ոչինչ չի ասում մեր հարեւանի սեւամորթ աղախինը ակնի կեանք աւելի իր աչքերում ոչ ոչ մի արտասուիւր յանցանքը քան չէ եւ չգիտեմ քե ինչ եմ ուզում վար իջիր պատառնակներից եւ հագ-նիր գուցէ վաղը գուցէ վաղը վերադառնեմ ինձ իմանում քե ինչ եմ ուզում սակայն նայնիսկ իմանում քե ինչ եմ ուզում ի՞նչ է լինելու արդիւնքը երբ մի օր պիտի ոչնչանան բոլորը իմ գործերը քո կեանքը բոլորի կեանքը քան-գալաններն ու արուեստից կանառները եւ խելագարում եմ Բէաթրիս երբ

պատկերացնում եմ անմիա սակորենքդ եօթ կանգուն հողի տակ իսկ դու ինձ առում ես գոյատևելի գոյատևելի յանուն ինչի՞ ես ինչպե՞ս պիտի լեցնեմ այս անհուն բացը ինչպե՞ս պիտի քայլեմ ծովափում երբ գիտեմ որ քիւրաւոր էակներ այլեւս չպիտի վերադառնան ծովափ այլեւս չպիտի խալտան տալաների մէջ եետաքրքիր բան ինչե՞ւ է անձրեւը այսքան գազը իջնում մաւկաւոր ես երկշոտ եմ խաբերայ ու տոհմեկ խաբում եմ ինձ ու խաբում այլոց ստեղծել եմ խորհրդանիշներ եւ նրանց հաւատում եմ որպէս հշմարտութեան հանգանակների հանգանակների մէջը հանգանակներով մեզ սին օրօրում եմ մէկ էլ աչքերդ բացում ես կեանքը եկել ու անցել է անմիտ տեքավանդակ ու անհանգրուան սակայն ծիծաղելին այդ չէ ծիծաղելին այն է որ այս բոլորը կատարում է օրէնքով ծէսով ու հանդիսաւորութեամբ երբ գիտես որ ամէն ինչ ամենքեք է երբ գիտես որ քաւալգլոր արշաւում ես դէպի վայրենակամը վայրենակամի էլ մէրը գոնէ մարդ իմանայ թէ ինչու է վախսնունում Պրաֆեսէօր Գուգէնհայմ քաւալ առում է՞ քէ կտրելոքը ստեղծագործութիւնն է որ մարդը ձգտում է ստեղծագործելով հասնել աստուածութեան եւ ձեր այդ խօսքին մէկ սէնք էլ չեմ տայ ի՞նչ կ'աւելիք հապա երբ ստեղծագործելով մարդը հասնում է մի կէտի երբ այլեւս ուզում է իմանալ վերջնական նպատակը գուցէ չգոյութիւնը ինքնին նպատակ է եւ յիշում եմ ընկերոջ Մարիօ Կապալիմոյին այդ անգուցակամ մարդուն որը իր փառքի գագաթնակէտին հրացանը բերանին քրեց ու վերջ տունց իր դեգերումներին եւ այդպիսի խիզախութիւն չունեմ եւ ուզում եմ գիտենալ իսկ նրանից յետոյ հէրն ամիծած հայր ասա՛ ինչպե՞ս էր մակասում քեզ շքանշան պարգեւեցի՞մ սակայն դու կաղում ես ինչե՞ւ եմ քեզ փայտէ տոբ տուն ջուր մնաց քո սեփական ստիք ես բարի պտուղ չեմ եղել բայց քեզ սիրում եմ միայն թէ խօսիր մի բան ասա՛ ասա՛...

Նա բացեց աչքերը։ Դադարել էր տնձրիւր։ Բլուրն ի վար ամպերն արշաւում էին դէպի Առլանտանի բացերը։ Միայն երևում էր Քէյփ Քաղի աղեղամէկ պոչը՝ փարփող ծայրին։ Դարձաւ ու մաղցեց վեր։ Բարձունքում լուր էր։ Վերջապէս վերջանում էր եւ դեպի լոյսի մէջ կանգնել էր գղեակը՝ սեւ ու խոփոտ։ Ըմբռնեց բացարձակ մենութիւնը։ Դղեակի տնձրիւրընկալ դանդաղածը անորոշ հրճուանք պատճառեց նրան։

Ո՞վ է ապրել աշտեղ։ Ի՞նչ է ասել։ Ի՞նչ է մնացել։ Պիտի մնա՞լ։ Ուզեց վիճանալ, մերուել կառոյցին եւ մնալ։ Թո՛ղ Փրավինսթաունի նկարիչները իրենց հոգիները քերեն եւ պատառ առ պատառ պատառաին յանձնեն։ Ինքը կը մնայ վէճ եւ բարձունքից ժամանակին կը յառի։

Բասալտի մի ահագին երակ ճեղքել էր ընդերքը եւ խուժել վեր։ Բլրի վրայ տարածելով իր սեւ բաշը, Դղեակը կարծես շարունակութիւնն էր։ Մասունը ծովից բարձրացել, ցրուել էր ժայռի վրայ եւ կռուել պատերին։ Քայլից մինչեւ լերան պռունգը։ Այգտեղ տափարակ տարածութիւնը յանկարծ բեկւում եւ զահավէժ իջնում էր ծով։ Կառոյցը կանգնել էր վիճի բերանին՝ խորխոր, ամբարտաւան։ Մարմարէ աստիճանները միանում էին վիթխարի դարպասին։ Երկարաւուն եօթը նեղ պատուհաններ նայում էին ծովը։ Երբեմն մարում էր ծովի խուլ գլորդոցը։

Կանգ առաւ։ Մի տեղից բրէ՛ի բուժ հարուածներ ծայն էր գալիս։ Քարացաւ։ Արագ դարձաւ շուրջը։ Մի պահ դադարեցին բրէ՛ի զարկերը։ Թեքուեց աջ եւ բռնեց գղեակը երթող միակ կածանը։ Բրէ՛ի զարկերը զնալով աւելի յստակ էին լսում։

Երբ մօտեցաւ, արեւն արդէն հեռացել էր։ Կիսամութի մէջ մի կին

բաճով փորում էր։ Այդ կէտում վտիտ Ժողկաթուղիներ կային։ Կինը նկատեց նրան, կոթնեց բաճին եւ դէմքին թափուած երկար Հիւսերը յետ չպրտեց։

Երկուսն էլ սպասեցին։

— Ի՞նչ ես փորում։

— Գերեզմանն եմ լեցնում։

— Ո՞ւմ գերեզմանը։

— Ամուսնուս։ Արշալոյսին վախճանուեց։

— Այստեղ ես ապրում։

— Այստեղ էինք ապրում երեք տարուց ի վեր։

— Ես կարծում էի, թէ ամայի է դառնալը։

— Այսօր ամայի է դառնալը։

Կնոջ սպիտակ դիւերանոցի թաց, ցեխոտ եզրերը կպչել էին նրա մերկ ոտքերին։ Յետի բիծեր կային նաեւ նրա թեւերի, վզի ու աջտերի վրայ։ Նրա աջ ոտինքը դուրս էր պրծել չապիկի տակից՝ անփայթ ու ինքնամփոփ։ Նա դրաց կնոջ աչքերի վիշտը եւ ինքն էլ լուռ տառապեց։

— Մենա՞կ ես։

— Մենակ եմ։

— Ինչպէ՞ս բերեցիր դիտելը։

— Քարշ տալով։

— Այստեղ հողը փափուկ է, — ասաց նա։

— Անմբերը խռնվարեց։ Փոսը ջուրով լեցուեց եւ հենց տիղմի մէջ էլ թաղեցի։

— Երանի շուռ գայի եւ քեզ օգնէի։

Եւ այլեւս առանց խօսք փոխանակելու, կնոջ ձեռքից առաւ բաճն ու ոկսեց լեցնել կիսատ գերեզմանը։

Հետզհետէ լեցուեց փոսը, դարձաւ հողաթումբ։

— Ո՞վ էր։

— Գրող էր։

— Ինչո՞ւ մահացաւ։

— Անդամաւոյծ էր։

— Ձէ՞ր կարողանում գրել։

— Ոչ, որովհետեւ անդամաւոյծ էր։ Տասնեքեք հասոր հեղինակելուց յետոյ մտնում էր, թէ այլեւս ասելիք չունի, իսկ մինչ այդ իր գրածների մէջ իմաստ չէր գտնում։ Մի օր էլ, անցեալ Դեկտեմբերին, անդամաւոյծ եղաւ։

— Ի՞նչ էր ուզում ասել։

— Ձգիտեմ։

— Ի՞նչ էր ուզում ասել, — յուզուած վրայ բերեց նա։

— Ձիմացայ, երբե՛ք չիմացայ։

— Խեղճ մարդ, — ասաց նա եւ դէն չափտեց բաճը։

Գիշերը վրայ էր հասել երբ նրանք հեռացան հողաթմբից։

Դիտակից ներս կեանքը այլ երեւոյթ ունէր։ Որքան խիստ ու անառիկ էր դիտակը դրոխտ, այնքան ջերմ ու հիւրընկալ էր ներսից։ Նրան թուաց, թէ ինչ որ արշաւանքից անցած միջնադարեան մի մատենադարանում է գրութեւնում, ուր իշխողը խուսափած գրքերի ու հին գինու հոտն էր։ Գրադարաններ ու գրքի խառն ի խառն դէպքեր ամէնուր, ցաք ու ցրիւ մոմակալներ, այլազան արձաններ ու կիսանդրիներ, կաշուէ կոպիտ աթոռներ ու բազմաթուրներ եւ այդ բոլորի մէջ անփայթ ընտանիութիւն։

Առաջին անգամ երբ կինը նայեց նրան, տեսաւ ճակատի ճեղքուածք։

— Դու արիւնում ես : Ի՞նչպէս պատահեց :
 — Ձգիտեմ, — ասաց նա եւ փոփ շօշափեց թարմ վէրքը :
 — Պիտի լուանամ քո վէրքը : Բաւական արիւն ես կորցրել : Քո շապիկը ամբողջովին արիւնլուայ է :
 — Ոչինչ, — ասաց նա :
 Կինը մինչեւ գօտկատեղին մերկացրեց նրան, լուաց նրա վէրքն ու մարմինը : Դեղի սուր հոտը սթափեցրեց նրան : Պղտոր լոյսի տակ նա տեսաւ կնոջ դէմքը՝ վշտահար ու զնդեցիկ : Նրանց հայեացքները հանդիպեցին :

Սեղանի վրայ կար հաց, ձուկ ու դինի :
 Դահլիճի բոլոր մոմակալները վառուած էին :
 Փայտէ երկար սեղանի հանդիպակաց ծայրին նստել էր Կինը : Նրա ուկէ հիւսերը շողի պէս թափուել էին ուտերին : Կանաչ էր հագնել նա : Նա այնքան անօգնական էր երեւում բարձրարժեք դմբէթի տակ : Նրան թուաց, թէ տաճարում է գտնուում՝ մասնակից հաղորդութեան սեղանին :
 Նրանք երկար ժամանակ չխօսեցին :
 Կայծակը ամենի սլաքներ էր ակօսում : Կրկին անձրեւ էր տեղում, այս անգամ թե՛ զնդակոծելով դէպի ծովը նայող միակ պատուհանների ապակիները :
 — Ես չգիտէի, որ զղեակում մարդիկ են ապրում : Քաղաքից դղեակը միայն մի սեւ կէտ է :
 — Ամուսինս գոցել տուեց հիւսիսային պատի բոլոր լուսամուտներն ու մուտքը :
 — Ինչո՞ւ :
 — Նա միայն ծովն էր ուզում տեսնել :
 — Ահա թէ ինչու Փրափինսթաունից ես երբեք լոյս չտեսայ զղեակում :
 — Նա ժամեր շարունակ նայում էր ծովին :
 — Դու սիրում ես նրան :
 — Ես նրան սիրում եմ : Ազնիւ մարդ էր :
 — Ինչո՞ւ էր ուզում դրել :
 — Գրելը նրա համար կենսական պահանջ էր :
 — Ի՞նչ էր ուզում գրել :
 — Ձգիտեմ : Ձգիտէր : Վերջին տարիներին զղեակը գրել էր նրան : Գրում էր եւ գրածը ոչնչացնում : Խօսքերը նրան հալածում էին : Երբ զգաց որ դադարել է, կաթուածահար եղաւ : Նա ցաւադար մարդ էր, ուստուած էր : Նա ամէն օր ուզում էր իրեն վար նետել դիմացի ժայռից, բայց վախեւծում էր :
 — Ինչի՞ց : Մահի՞ց :
 — Թէ՛ մահից, թէ՛ կեանքից :
 — Երբեւէ խօսե՞ց քեզ :
 — Մի օր, կէս դիշերին, գերմարդկային ճիգ դործ դրեց եւ շշմաց զափսոս մարդը : Այդքան : Այլեւս չխօսեց :
 — Ողբերգութիւն :
 — Ամուսինս ողբում էր մարդու ողբերգութիւնը : Նա իմ գրկում անգամ մենակ էր :
 Նա լեցրեց իր բաժակը եւ անյադ ծարաւով ըմպեց դինին : Դրսում

տարերքը ոգորումի մէջ էին մտել: Առյանտեանը մօնչում էր եւ մոլեգին հարուածում ժայռուտ ասիւրը: Նրան թւում էր, որ ահա շառաշով կը խորտակուեն դղեակի հիմքերը եւ փրփրադէզ ալիքները կը խոյանան ներս: Նա դուրսը հակեց սեղանին եւ մի ակնթարթում զգաց մարդու անասելի մենու-թիւնը տիեզերքում:

Եւ յանկարծ դղեակը կենդանացաւ երգհչոնի հնչիւններով:

Կնոջ մատների հպումից ձայների շատրուաններ էին բարձրանում վեր, մի պահ անշարժանում միջոցում, ապա հառաշով թափւում, կրկին կէտկիտւելու եւ սլանալու վեր: Յետոյ հնչիւնները մերում էին դղեակի պատերին, բեկոր առ բեկոր միանում իրար՝ կազմելով ճարտարապետական բիւր ձեւ ու կառոյց՝ կրկին աներեւութանալու զմբէթի սիւների մէջ: Այնտեղ, ուր վաճառն էր, սկսում էր նորը՝ նախ հեղ ու մեղմիւ, ապա որպէս խելագար ուրական՝ միշտ կրկնուելով, բազմապատկուելով, աննիւթանալով:

Աչքերը կնոջը յառած՝ նա համբարձեց վեր, դուրս եկաւ գիշերի խաւարից եւ դարձաւ աստղ ու տիեզերային անկիւնից դիտեց դղեակն ու իր պատերի մէջ ամփոփուած կանաչադգեւոտ էակին:

Թեքուեց ու համբուրեց կնոջ վրայ:



Զգիտէր ներկան: Նա չգիտէր, թէ դղեակի ո՞ր յարկաբաժնի ո՞ր սենեակում է գտնուում: Տենդը լափում էր նրա միսը: Առատադից հարիւրաւոր արեգակներ իջնում եւ կիզում էին նրա դանկը: Նրա գլուխը օրօրում էր բարձի վրայ, իսկ կրծքից հրարուխ էր ժայթքում: Նրա մարմինը փետուրի պէս լողում էր անհուն տարածութիւններում: Երբ աչքերը բացեց, իր սնարի մօտ կանգնած էր կինը՝ մերկ ու լուսէ:

— Մենակ եմ, — շնչաց կինը:

— Մենակ եմ նաեւ ես:

— Գրկի՛ր ինձ: Վախենում եմ:

— Ինչի՞ց ես վախենում, Բիանա՛:

— Մահուանից: Խնդրում եմ գրկի՛ր ինձ, ամո՛ւր, շատ ամուր, որ—պէսդի շմեռնեմ:

— Ես չեմ ուզում որ դու մեռնես, Բիանա՛: Ուզում եմ, որ դու լինե՛ս միշտ: Մի՛շտ լինես, որպէսդի ես կարողանամ ստեղծել, որպէսդի քեզմով լինեմ նաեւ ես, որպէսդի ներկը մնայ պատտառի վրայ, որպէսդի լինի մի քան:

— Գրկի՛ր ինձ, այս գիշեր նամենամենաւոր գիշերն է իմ կեանքում: Համբուրի՛ր ինձ այնպէս, որպէսդի այլեւս չդգամ գերեզմանի խաւարը: Խնդրում եմ, համբուրի՛ր ինձ:

— Մեզ միայն սէրն է մնացել, մի կաթիլ շողը անշարժութեան անմիջիջ գիշերում: Հիմա որ այրել եմ բոլոր պատտառներս, հին ու նոր ապրումներս ներկը, աղատ եմ ինչպէս մանուկ... Ա՛հ, Բիանա, պիտի տեսնէիր խաւարոյի ծիածանը, պիտի տեսնէիր տարիների անդոհանքիս բոցը: Ամբողջ Փրավինսթաունը խախճանքի մէջ էր: Հաւաքուել էին խաւարիկի շուրջ եւ պարում էին: Այդպիսի քան վաղուց էր որ չէին տեսել: Երբ մոխիրը սառեց, սառեց նաեւ իմ խղճի խայթը եւ կեղծիքը, որ հիւսել էի ինքնախաբէութեամբ: Բայց դու արտասուում ես, Բիանա: Արի՛ դիմկա, որպէսդի քեզանով ամօքեմ նաեւ իմ վիշտը:

Նա ուղեց բարձրանալ անկողնուց, բայց չկարողացաւ: Այժմ արեւները

եկել ու հրդեհել էին նրա մարմինը: Ձեռքը երկարեց ու բռնեց կնոջ աջը, որն անշուշտ աղանդաւորական էր: Կինը դողում էր եւ արցունքի կաթիլները հոսում էին նրա մարմինն ի վար: Թէժ մատներով հպեց կնոջ սրունքը, շոյեց կուրծքը, ապա շոշափեց նրա բերանն ու դէմքը, կարծես յաւիանանապէս յիշողութեան մէջ գրգռելու համար նրա գիմարածերը: Մի պահ ետք նրանք նոյնացել էին:

Կնոջ մարմինը սկսեց հալչել: Գոլորշիացաւ ռաուտյը եւ իր երակներէ մէջ դզաց խուժումը նրա արեան՝ ինչպէս լաւայ: Ամէն ինչ դադարեց, չգոյացաւ: Յետոյ տարերային քառսի միջից վերադոյացաւ նիւթն ու ձեւը: Սկսուեց կեանքը՝ նախ որպէս անլսելի երգ, ապա աստիճանաբար որպէս տիեզերային ահռելի համանուագ:

Մարումը այրում էր: Տենդից նրա շուրթերը ճաքել եւ արիւնոտուեւէ էին: Աչքերը խուփ՝ նա սկսեց պատմել իր կեանքի պատմութիւնը:

...Մօրս լաւ չեմ յիշում երբ հայրս պատերազմից վերադարձաւ մայրս արդէն գնացել էր մի օր էլ երբ դպրացից տուն եկայ փոքր եղբորս գտայ աւազանում նա փորի վրայ լողում էր առանց շարժուելու ոտքին թռկ կայեցի եւ դուրս հանեցի հանգիստ բնել էր որչափ ճշացի չարքնացաւ միասին բնեցի՜ք պարտէզում մինչեւ որ հայրս տուն եկաւ յետոյ անծանօթ շատ մաքրիկ եկան մեր տուն եւ այդ օրումսից եւ չսիրեցի խունկի հետը հայրս երբեք չէր խօսում ինձ հետ նա միայն աչքերում ասում էր թէ միեւնոյնն է մի օր պիտի բաժանուեմք նա միշտ գրգռելի էր եւ բանաստեղծ էր հայրս բայց երբեք չգրեց միայն կարդում էր այլոց գրքերը եւ գայրացած բաներ էր ասում որ եւ չէի հասկանում առնում էր գրքերը ստիճանով նորագում քերթիկները եւ օրեր շարունակ թողնում մամուլի տակ մինչեւ որ տափակ բաներ էին դառնում մի Ձատիկ օր հայրս ինձ մի տուփ ներկ նուիրեց եւ ասաց Հենրիկ կով նկարի տուն ու մարդ եւ նկարեցի կով ու տուն սակայն չկարողացայ մարդ նկարել որքան փորձում էի փորը առած մանուկ էր դուրս գալիս այդ պահին հայրս գրկում էր ինձ եւ հեկեկում եւ չէի սիրում հօրս հեկեկանքը վայսնում էի հօրս հեկեկանքից յետոյ երբ մեծացայ եւ էլ սկսեցի գիշերնեքը հեկեկալ երբ իմացայ որ փոքրիկ եղբայրս մահացել է եւ գիտէի որ նա մեծուկ է ուզում էի գիշերները գերեզմանաց գնալ եւ իմ հաստ առնալով ծածկել իր հողաթումբը օրպէսզի չմտնի եղբայրս իմ եղբայրը լաւ եղբայր էր մի ամառ էլ նրան տեսայ Բոմբէի բանուկ մի փողոցում սալայատակին պառկած նրա փորը այնպէս առած էր որ երես դարձրի նոյնը տեսայ նա եւ Պանամա՝ յում եւ այլեւս արդէն եմ ոչ մի տեղ չգնալ շտեմելու համար սովալուկ մտնուկներէ հիմա որ հայրս էլ գնացել է ոչ ոք չի յիշում նրան ոչ ոք չգիտէ թէ ով էր նա թէ արդեօք երբեւէ եղե՞լ է նա եւ ամենասարսափելին այն է որ եւ չգիտեմ նրան ով էր նա եւ չգիտեմ նրան շատերին հարցրել եմ ոչ ոք չգիտէ չեմ գտնաւում ոչ ոք չգիտէ իմ հայրը ուր է հիմա ժամանակ չեղաւ նոյնիսկ մէկ քառ խօսելու եւ չեմ գտնաւում իմ հօրը չգտնաւեցի սակայն պիտի գտնաւեմ նա միշտ մի բան ուզում էր ասել սակայն չասաց մի օր պիտի ասի օրպէսզի իմաստ ստանայ իր կեանքը իմ կեանքը քն կեանքը Բիւսնա քն արգանդի նորարարութիւն կեանքը որի շունչը գգում եմ շնչիդ մէջ...

Անձրեւը իջնում էր դղեակի վրայ:

Նա չգիտէր ուր էր: Ուարժափելով իջաւ աստիճաններից, անցաւ սեն-

եակից սենեակ, միջանցքից միջանցք եւ գտաւ գուռը, որ բաց էր։ Դրսում գորշ էր աղջամուղլը։ Քայլից մինչեւ բլրակների քարէ ցանկապատը եւ վար նայեց։ Մովը սեւ հայելի էր դարձել։ Մի քանի ծովամայր օրհասական ճիւղեր էին արձակում։ Մի անգ հորիզոնում թէ երկնքում անկանոն յաճախականութեամբ վառւում էր կարմիր մի լոյս։ Մերթ ընդ մերթ նա լսում էր նաեւ դանդի միապաղաղ, ազնկտուր ձայն։ Գլուխը վեր բարձրացրեց եւ իր կիզուող այտերի ու բերանի վրայ զգաց անձրեւի զովը։ Տենդի մէջ այլուում էր նրա մարմինը։ Ակամայ սկսեց իջնել ծովափը տանող ոլորապատոյտ շաւիղով։ Մի անգ ծունկը մացառուաթի զարնելով երեսի վրայ գլորուեց։ Կրկին բարձրացաւ ու շարունակեց դաժնովէ՛տ երթը, այս անգամ դժուարաւ, ծախ օտքը քարշ տալով։ Լերկ սպառաժներին հասնելուց յետոյ մէզը նօսրացաւ եւ աւելի յստակ լսուեց ծովի խոր տնջոցը։ Երբ յետ նայեց, զդեակն այլեւս կորել էր ամպերի մէջ։ Գնալով հօրանում էր ալիքների դուպարը։ Մովը շնչում էր անծայրածիր զազանի պէս՝ հաղարաթոք ու սպառնազին։

Մի անանուն ուժ հրում էր նրան դէպի ծովի մութ երախը։ Յուզքոտ ալիքները զալիս փաթաթւում էին նրա սրունքներին, քանդում ոտքերի տակի աւազը եւ ներս քայում նրան։ Սեւ մի ալիք ուռնացաւ վեր, մտրակեց նրա կուրծքն ու երեսը։ Յաջորդեց երկրորդը, երրորդը։ Նա կուլ գնաց, զգաց զազանի ահարկու թաթը եւ մահուան վարադոյրը։ Կառչեց մի ժայռի, վեր մազլցեց եւ գլուխը յենեց քարին։

Նա մոռացել էր ամէն ինչ։ Պարպուել էր հողին, գտուել, ի սպառ մաքրուել։ Նա միայն զգում էր կանչը, ծովի անդիմադրելի կանչը դէպի սկզբնաւորութիւն, դէպի բանը, բանը, բանը, որ պիտի առուի, ո՞վ պիտի տսի, մնալները չեն կարող տսել, արդէ՛ն տսել են, եթէ տսելի՛ք կայ, թե՛րեւս չկայ, թերեւս երբեք չի եղել, հայրս ուզում էր տսել, ցուցէ գիտէր, չառաց, ո՞վ եմ ես, ո՞վ եմ ես, ես պիտի լինեմ, որ իմաստաւորութի կեանքը, տիեզերքը, ես պիտի յօսեմ քեզ, Բիանա...

Յ. Կ.

Ուաշինկթըն, Նոյեմբեր, 1969



Վերջալոյսի տաղեր

ԱՆՊԱՐԵԼԻՆ

Մինա՛կ ըլլալ, աստղերուն տակ եւ լուսնին,
Մէկուն կաթը ըմպել, միւսին՝ մեղրն ամուշ.
Հեռո՛ւ մարդոց, քաղաքներու կանչէն սին.
Ըլլալ լըռին, ըլլալ անտէր եւ անյուշ:

Կանգնիլ հալարտ տիեզերքին դէմ առ դէմ,
Տիեզերք մը ի՛նքզ ալ, ոգի, հո՛ւր անշէջ.
Մեծ գաղտնիքին քակել համագոյցը դժխտ,
Ու ողջունել նա՛յն Աստուածը իրար մէջ:

Ուսիդ վըրայ արարչութեան ծիրանին,
Գուզճը հոգիդ փոխակերպուած ալ լոյսի,
Աշխարհէն վեր, մարդերէն վեր, առանձին,
Յանժամանա՛լ, առանց վիշտի եւ յոյսի...:

ԽՈՐՀԱՌԹԵ՛Ն ԽՈՐԹԵ՛Ն...

Համատարած ճիւղին վըրայ հանդարտիկ.
Գիշերին մէջ կը հասի մեզրը լուսնին՝
Ու կը ծըլի թիւր ծաղիկներ մեղեդիկ,
Մուրին ծոցը՝ իբրեւ աստղերը յոյսին:

Խաղաղութեան վրայ հոգիիս իմ սրտում,
Վշտին արցունքն յակիճքի պէս կը կաթի.
Ու քեւ կ'առնեն երազներըս անպատում,
Նքք սիրտըս հո՛ւր կարօտով կը կզկաքի:

Ձիւն ու լուսին, վիշտեր, արցունք ու ծիծաղ
Հոգիէս դուրս՝ եւ հոգիի՛ս մէջ կ'ապրին.
Ճակատագրի խորհուրդին խորը խաղաղ,
Միաճուլուած են մերկան ու ապառնին...:

ԱՐՄԷՆ ՍԵՒԱՆ

Գ. Այբե

digitised by A.R.A.R.@

ՆՇԱՆ ՊԵՇԻԿԹԱՇԼԵԱՆ


Ստորև արուած Նշան Պէշիկթաշ-լեանի գրութիւնը շորս մեծերու 100-ամեակին նուիրուած ճիշդինչի համար պատրաստուած էր որ զժրախտաբար մէր ձեռքը ուշ հասաւ:

Մեր հրգորդ Երզնթարանը, ինչպէս կը սպասուէր, բաւական անտիպ մանրամասնութիւններ կը հաղորդէ Երզնթարին մասին:

Գրութեան վերջաւորութեան հայ նոյնքան զեղեցիկ խոստում մը, Պէշիկթաշլեանի ճշտումը, ի մասին Փանոսիին:

Մենք անմիջութեամբ կը սպասենք խոստացուած այդ վերջութեամբին:

Ա. Երզնթար



Ե. ՕՏԵԱՆԱԿԱՆՆԵՐ

Ա.

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԵՒ ԼԵՒՈՆ ՇԱՔԸՐԵԱՆ

Ո՞վ չգիտէր որ Օտեան Երուանդ Երեւելի խման էր:

Առաջին աշխարհամարտէն ետքը, զինագաղարի շրջանին, ամէն հրեկոյ, վերապրող Օտեան կը գտնուէր մէկ մեհ-եանին մէջ Բագոսի: Երբեմն յաջորդաբար կ'այցելէր Երկու-Երեք մեհեաններ, մերթ քանի մը բաժակակիցներով, որոնք նոյնը շէին մնար: Կը փոխուէին կեդրոնական ղէմքին հետ գործող կոնծարանները:

Սակայն, կար մէկը, որ ամէնօրեայ իր բաժակակիցն էր անբաժանելի: Այդ

մէկը իր բազոսական քրմակիցն էր, եղբայրակիցը, իր թիկնապահը, հաւատարիմը, հիացողը, հարազատը, կաթնեղբայրը (անշուշտ կաթ առիւծի): Կարծէք Օտեան ու ան ըլլային երկուորեակներ Միամի: Միասին կ'աշխատէին, միասին կը ճաշէին ու կաթը միասին կ'ըմպէին (թիւրիմացութեան տեղի չտալու համար, աւելցնենք որ երբ «կաթ» կ'ըսենք, կոժու, ոչխարի, այծի կամ աւանակի կաթին համար չենք, այլ կաթին համար ենք առիւծի: Կրնան գտնուիլ այս պարզ տարբերութիւնը չկուսող անմեղ միտքեր...)

Վերջապէս, այդ անբաժանելի բաժակակիցը Լեւոն Շաթըրեանն էր:

Լեւոն ո՛չ ընկեր էր, ոչ ալ պարոն: Պարզապէս Երուանդ Օտեանին փարոժ, փակած հոգի մըն էր: Հառակով միջա-

digitised by

A.R.A.R.®

կէն վեր, հանճարով միջակէն վար, թուլիկ էր ու թթուած: Կարծէք քացա- խով կամ ալքոլով լիցուն կարասէ մը նոր դուրս ելած վարունկ մըն էր, այնքան մեղմ ու այնքան թթու, որ եղած էր ան- ճաշակ, Երուանդ Օտեանը միայն կրնար դաշն համտեսել:

Օտեանին պէս, Ծաթըրեան ալ մաս կը կադէր «Վերջին լուր» երեկոյան օրաթերթին սպայակոյտին, սա տարբե- րութեամբ, որ Օտեան կը պատկանէր թերթին խմբագրութեան, մինչդեռ Ծա- թըրեան՝ վարչութեան: Հակառակ ի՞նչ վարիչի մը պէտք ունենալուն, եղած էր վարիչ, նոյնիսկ վերիչ:

Այդ գործէն զատ, այդ շրջանին, Պուլոյ մէջ, օրաթերթերը լոյս չէին տես- ներ ամէն երկուշաբթի: Այդ պարագա- յէն օգտուելով, բացը դռնէն համար երեք-չորս թերթեր լոյս կը տեսնէին շա- քաթը անպամ մը, օրերը երկուշաբթի: Ինչպէս «Երեւան», «Առաւօտ», «Երկու- շաբթի» ու «Շաբաթ»: Վերջինը կը պատ- կանէր լեւոն Ծաթըրեանին, ու իր Վէ- խուր աշխատակիցն էր, բնականաբար, Երուանդ Օտեանը, որ իր «Ինքնաւ Ա- դա»-նէրու շաբթով շահաւոր շաբաթա- թերթի մը վերածած էր «Շաբաթ»-ը:

Քանի մը տարի, ամէն երեկոյ, Օտե- ան ու Ծաթըրեան իրենց իրիկնաբանու- թիւնը, այսինքն բաղոսեան երեկոյան արարողութիւնը, որուն պոլսահայերը կ'ըսեն կոնծարանութիւն, կը կատարէին միասին, բաղած դէմ դէմի:

Զիրենք կը նմանցնէին Հաճի Հեփա- տին (Օտեանը) ու Գարակէօզին (Ծա- թըրեանը):

Եթէ մէկը Օտեանը փնտէր, պէտք էր ըսել.

— Ծաթըրեանին հետ է:

Եթէ մէկը Ծաթըրեանը փնտէր, պէտք էր ըսել.

— Օտեանին հետ է:

Իոկ Էթէ մէկը թէ՛ Օտեանը, թէ՛ Ծաթըրեանը փնտէր, պէտք էր ըսել.

— Պառպա Թանաշին գինետունն են:

✱

Երբ Պուլոյ մէջ, Յովհ. Թումանյան- նի այցելութեան առթիւ եւ Յ. Ճ. Սի- րունիի բաղմունքի աշխատանքներուն շնորհիւ կազմուեցաւ Հայ Արուեստի Տո- նը, Օտեան մաս կազմեց այդ բնկերակ- ցութեան գրական բաժնին:

Ծաթըրեան ո՛չ գրադէտ էր, ոչ ալ արուեստագէտ, Հայ Արուեստի Տան ճիւ- ղերէն մէկուն վրայ թառելու համար:

Ուրեմն Հայ Արուեստի Տանը հաւա- քոյթ ունեցած երեկոյները, Օտեան-Ծա- թըրեան միութիւնը կը ստանար հարուած ու կը բաժնուէր երկուքի:

Անպամ մը, երեկոյան հաւաքոյթ ունէինք Հայ Արուեստի Տան անդամնե- րաւ, Բերայի Եփրատին վրայ գտնուող համբաւալ Թոքաթլիի վերնախորհրդ: Օտեան մեղի հետ էր:

Յանկարծ, հայրենակից մը, վարէն վեր գալով ու մեր սեղանին մօտենալով՝ գաղտնօրէն ըսաւ.

— Վարը, որահին մէկ անկիւնը, Ծաթըրեան՝ տանկլոյի գաւաթ մը օղիի առջեւ նստած, աղու պէս կուլայ...

— Ինչո՞ւ...

— Օտեանէն զինքը բաժնած ըլլալ- նուղ համար:

— Իրա՞ւ կուլայ...

— Եւ ի՞նչ լաց: Սրտանց կուլայ ու կը հեկեկայ...

Քանի մը հոգի վար իջանք, ստու- դելու համար:

Լուրը ճիշդ էր: Ծաթըրեան խմած օղիները վերածած էր արցունքի եւ զա- նոնք կը թափէր իր աչքերէն տղի ու լե- ղի:

Երբ քովը գացինք, մեղի ըսաւ.

— Ինծի Օտեանէս բաժնեցիք: Կա՛մ Օտեանս ինծի տուէք եւ կամ զիս ալ ան- դամ արձանագրեցէք Հայ Արուեստի Տան: Ես միս միակս մնացի: Զիս որ- բացուցիք: Ես առանց Օտեանիս չեմ կըր- նար ապրիլ, չեմ կրնար, չե՛մ... Պիտի անիծեմ այդ Արուեստի Տունը... Մօ՛, «տուն» կ'ըսէք, փայտաշէն չէ, թիթեղա- չէն չէ, թուղթէ շինուած տուն մը ան-

զամ չունիք։ Վրան մը չունիք։ Աւր-
ուհստն կ'ըսէք, մինչդեռ օդի խմել չգիտ-
ցողներ կան ձեր մէջ...

Եւ նորանոր արցունքներով կը ջրէր
զէմքը ու կը խմէր փառաւորապէս, ը-
սելով։

— Վար չ'երթար կոր օդին, տոանց
Օտեանիս։ Աս առիւծի կաթը խափատար
կ'ուզէ...

Երբ վեր ելանք, Օտեանին լուր չտը-
ւինք, վախճալով որ կը յուզուի եւ կ'ըլ-
լայ յանկարծամահ։ Կամ առնուազն կը
բաժնուի, կը հեռանայ մենէ, միանալու
համար իր անարուեստ, սակայն, խմե-
լու մեն մասնազէտ բաժակակիցին։

Շաթրեան տանկլոխ դաւաթներ
պարպելով կը սպասէր ջրմապետին բա-
զասին։

Երբ վերջացաւ մեր հաւաքոյթը, տե-
սանք որ Շաթրեան կանգնած է սան-
դուխին ներքեւը ու անձկազին կը սպասէ
Օտեանի։

Շաթրեանին աչքերը ուռած էին,
որովհետեւ ողորդած էին օդիով եւ ար-
ցունքներով ու կարմրած էին։

Վար իջնող մեր անդամներէն ո'չ մէ-
կուն բարեւը կ'առնէր, ո'չ մէկուն բա-
րեւ չէր տար Շաթրեան ճիշդ Արու Լա-
լա Մահարիի պէս։

— «Բարեւ չէր վերցնում, բարեւ չէր
տալիս, անցնող ու դարձող կարաւաննե-
րից...»

Իր աչքերը կը փնտռէին Օտեանը։

Վերջապէս, տեսաւ իր քրմապետը,
ու ողբերգական ժպիտով եւ լալազին ա-
ղաղակեց։

— Ո՞րք ես, Օտեանս, մեռա՞յ մի-
նակութենէս... Օդին Օտեանով կը սա-
հի... Աս անաստուած խայտառակները
բաժնեցին քեզ ինձմէ...

— Հոս եմ, Լեւոնս, ա՛լ ազատ եմ,
ա՛լ մինակ չեմ։ Վաղուքնէ սկսեալ, դուն
քու պարապ պահերուդ տտանաւոր դրե-
լու փորձեր ըրէ, որ քեզի անգամ ընենք
Արուեստի Տան դրական բաժնին, իբրեւ
քանգարաւոր քերթող, իբրեւ պատուա-
կան պուշտ, բանաստեղծ։ Ես ալ քեզի
կ'օգնեմ։ Յանդեր կու տամ. նա՛ քանի մը

հատը կանխիկ։— Գինի՞, գինի՞, առա-
քինի, գինեստուն, խմաստուն, քոնեաք,
քառեակ, Բայմաք, սեղան, իշխան...

Շաթրեան արտասուհեղձ դրկեց
Օտեանը, եւ սկսան համբուրուիլ արկե-
ռի՛ կարօտով, որ կարծէք իրարմէ հեռու
ըլլային տարիններէ ի վեր։

Թեւանցուկ ուղղուեցան ուրիշ բա-
զոտաստուն մը, Հայ Արուեստի Տան հա-
ւաքոյթին պատճառով ընդհատուած ի-
րենց իրիկնարանութեան զուգերդը շա-
րունակելու համար։

Շատ դարմանալի ու ամբողջովին ա-
նըմբունի է որ քեմալական շարժումին
մայրաքաղաք մուտքին պատճառով՝ երբ
երկու բաժակակից անբաժանելիները,
հազարաւոր հայերու պէս հեռացան Պո-
սէն, զատուեցան իրարմէ։

Օտեան զնաց Ռուսմանիա, ապա Լի-
բանան, վերջապէս Եգիպտոս։ Իսկ Շա-
թրեան Յունաստան, Սեյանիկ։

Այնուհետեւ երկուքն ալ շատ չաղ-
րեցան։ Հազիւ քանի մը տարի։ Իրարու
հանդէպ ունեցած կրակէ կարօտն էր,
որ մահացուց դիրենք, թէ սառայցէ կը-
րակը, որ օդին էր։ Մուսթաֆա Քեմալը
ու ապա Մահը բաժնեցին զանոնք երկրի
վրայ։

Անշուշտ երկուքն ալ արժանացան
երկնից սուրբ արքայութեան, քանզի եր-
կուքն ալ միայն մէկ մեղք ունէին, այն-
քան ներելի։— ալքովամուրթիւնը։ Վը-
նասակար իրենց անձին. ուրիշ մարդու
վնաս չունէին։ Օղտակար իսկ էին. կը
խնդացնէին։

Անտարակոյս, արքայութեան մէջ
են, եւ անկասկած արժանացած են Նո-
պէլեան Մրցանակին. ներողութիւն. պի-
տի ըսէի Նոյ Նահապետեան Մրցանա-
կին, եւ անդնետկանին մէջ ալ կը շարու-
նակեն խմել քոնեաք, օդի ու դինի։

Կ'ըմպեն կենացը։

— Երկիր կոչուող մուրազիին, ու-
րուն ըմպելիներուն համը ուրիշ էր,
մինչդեռ արքայութեան մէջ խմելիքները
միւռոնի համ ունին։

Շաթրեան կ'ըսէ։

— Երուանդիկ, կարելի ըլլար տէ,

մէջ մըն ալ Երկիր երթայինք, եւ իրիկուն մը Պառպա Թանաչին տղուն Վանկէի խանութին մէջ, մեր գլուխները բռնէինք...

Օտեան անշուշտ կը պատահանէ.

— Ծօ՛ւ Լեւոն, խենթ բաներ կ'ըսես... Եթէ մեր գլուխները բռնենք, մեր ձեռքերը կ'ալըրին: Կը մոռնաս որ մեր գլուխներուն վրայ, Հրեղէն լուսապսակ ունինք Հիմա...



ՕՏԵԱՆ ԵՒ ՇԱԹԸՐԵԱՆ

ԲԵՄԻ ՄԸ ՏԱԿ

Միշտ Զինադադարի շրջանին, երկուս մը, Ռերայի Օտէոն Թատրոնի բեմին վրայ, Պէնչեանի օփերէթի խումբը ունէր ներկայացում:

Բեմին յատակը կային զարդախուցեր:

Վերջին արարին, աշտեղ իջած էի, ընկեր մը փնտրելու համար, երբ պարպ ու դուռը բաց զարդախուցի մը մէջ տեսայ Երուանդ Օտեանը ու իր բաժակակից Լեւոն Շաթըրեանը:

Նստած էին մէյ մէկ աթոռի վրայ, իսկ սեղանի վրայ կը կրէր շին մը ձոնեաքի, որուն երեք չորրորդը պարպուած էր: Սեղանին վրայ կային երկու սկահակներ զրպանի, որոնք կը լեցուէին ու կը դատարկուէին:

Օտեան նման էր իմաստասէրի. իսկ Շաթըրեան՝ աշակերտին փրփրոփայի:

Օտեան երբ գիտ տեսաւ, կանչեց իր քով, ձոնեաք մը Հրամցուց, ու ըսաւ.

— Աթոռ մը ճարէ ու եկուր նստէ:

Երբ տեղադրուեցայ, Օտեան բառերը բերնէն թափթփելով՝ բարբառեցաւ.

— Ժամանակին, Փրանսոցի բանաստեղծի մը քերթուածը կարդացած եմ, ու շատ տպաւորուած եմ: Գոց չեմ գիտեր: Բաւական երկար կտոր մըն էր: Կարճ ալ ըլլար՝ զոց չէի կրնար ընել:

Գոց ալ ըրած եթէ ըլլայի, մինչեւ Հիմա մոռցած կ'ըլլայի: Բայց նիւթը միտքս է ու երբեք չեմ մոռնար. ըսեմ ու մտիկ ըրէ: Գիշեր մը, բանաստեղծը կը Թափառի Փարիզի մայթերուն վրայ: Թափառելէն ալ գէշ. կը քաշքշէ ինքզինքը: Պահէմական մըն է, սեւ թշուառութեան մէջ թաւալած, սեւ ցեխերու մէջ թաթխուած: Քլաշար ըլլալու մաս մը մնացած է: Շատոնց է որ ո'չ անհիշուած է, ոչ ալ մարդերը կտրած: Անկուտի է: Հովկուլ անկուտի ու անօթի: Մանաւանդ ծարուի, սաստիկ ծարուի: Կը հասկնաս չէ՞: Բանաստեղծ է մարդը: Անշուշտ վրան գլուխը Հին է: Ինչպէս ըսինք, փորն ալ անօթի: Պառկելիք տեղ ալ չուրի: Աչքերը ինկած են խոռոչներու մէջ: Թէեւ քալելու ուժ չունի, բայց կերպով մը կ'երթայ: Ո՛ւր կ'երթայ, ինք ալ չի գիտեր: Աննպատակ կ'երթայ: Արդէն քանի՞ հոգի նպատակով մը կ'ընթանայ կեանքի մէջ: Բայց շատերը երթալիք տեղ մը ունին, շնորհելիք խշտակ մը, անկիւն մը կամ անկողին մը: Շատերուն համար ուտելը նպատակ է: Մեր նպատակն ալ նուիրական խմելն է: Գանք բանաստեղծին, որ պապակ ունի թըլլառ աննպատակների ու անօթութեան զայլի: Մարմնացումն է տառապանքի: Մենք ալ ճանչցանք Մեծ Տառապանքը աքսորի տարիներուն: Տեսանք սովը ու արսափը միասին, Մենք այդ բանաստեղծէն աւելի գէշ վիճակներու մէջ ինկանք: Ան գոնէ հալածուած չէր: Նորէն դառնանք բանաստեղծին, որ փողոցի մը անկիւնը դարձած պահուն, կը տեսնէ Յիսուսը, որ զթալից ակնարկով կը նայի իրեն: Կանդ կ'առնէ երկեղածութեամբ: Հրա՛ջ, տեսի՛լ... Կը յուսայ: Յիսուս պիտի բարեփոխէ իր կեանքը միայն մէկ բառով կամ մէկ շարժումով: Յիսուս ալ կանգ առած է եւ կը նայի իրեն: Բանաստեղծը կը խաչակնքէ. Յիսուս նմանապէս: Բանաստեղծը կը մօտենայ Յիսուսին, ու ձեռքը երկարելով՝ ցած ձայնով կ'ըսէ. — Ո՛վ Տէր, գթութիւն. ա՛լ չեմ կրնար տոկալ Տառապանքին...

Ահաւոր յուսարարութիւն, հիասթափութիւն, պատրաստեալ...

Բանաստեղծը կը հասկնայ, որ Յիսուս կարծածը ինքն իսկ է. իր պատկերն է, որ երեւցած է խանութի մը ցուցափեղկին հայելիին մէջէն: Հէք բանաստեղծը այնքան շարժարուած, այնքան խաշուած ու խեղճացած էր, որ կը նմանէր շարժարեալ, խաշեալ Յիսուսին, եւ ինք իր Յիսուսի նմանիւր չէր գիտեր...

Ու պուշտը պարտասուն կ'իջնայ դեմին...

Օտեան վերջացուցած էր իր նկարագրութիւնը:

Հարցուցի.

— Ինչո՞ւ յիշեցիք այդ բանաստեղծը, ու բովանդակութիւնը բանաստեղծութեան պատմեցիք...

— Ձեմ գիտեր... Այնպէս... Յիշեցիք... Գեղ տեսնելով յիշեցիք... Մարդիկ կան, որոնք սա կամ նա բանին կը նմանին... Բանաստեղծը մը բանաստեղծի նմանելու է... Մանաւանդ երբ երիտասարդ է... Միտ ու արիւն ունեցող մը չի նմանիր բանաստեղծի... Այսօր, քերթողներ ունինք, որոնք կը նմանին մարդիկ կամ մտավաճառի... Այո՛, բանաստեղծը բանաստեղծի նմանելու է...

— Արտաքին նմանութիւնը բաւական չէ: Երեւիլը ու ըլլալը տարբեր բաներ են:

— Անշուշտ: Թէեւ բացարձակ բան չկայ, բայց արտաքինը յաճախ ներքինին հարողատ հայելին է. մարմինը հոգիին կաղապարը կ'առնէ, նաեւ արտայայտութիւնը. օրինակ մեր Շաթրեանը. անոր նայողը կը համոզուի անմիջապէս, որ խմող է. եթէ քիչ մը խորունկ նայի՝ կը համոզուի նաեւ, որ խմողը խորհող ալ է: Եւ իր մեծութիւնը հոն է, որ կը խորհի առանց ուղեղի, կը խորհի իր մազերով...

— Եթէ մարդիկ կը խորհին՝ զէշ ունի, որովհետեւ մօտերս պիտի դադրի խորհելէ, մնալով մաղաղութի, լուսանալու...

Շաթրեան, որ կէս քունի մէջ էր,

իր անունը լսելով՝ քառորդ մը արթնցաւ ու հարցուց.

— Ի՞նչ կ'ըսէք, ի՞նչ կը խօսիք... Մենք բեմին տակը մօտեք լսելու եւ կենսաբի ողորդութեան ու կատակերգութեան արժանեքը գրկելու եւ խոկալու համար:

— Թէ այդ արժանեքը ջրելու համար, ըսի:

Շաթրեան շարունակեց.

— Եթէ խօսիլ ըլլար մեր նպատակը, այս իրիկուն, գինետուն մը կ'երթայինք: Մի՛ խօսիք, խորհեցէ՛ք: Որոհողը կը խմէ, խմողն ալ կը խորհի... Լեցուցէք գաւաթները:

Օտեան լեցուց սկահակները եւ Շաթրեանին նայելով՝ ըսաւ.

— Ֆեմմէն մըն է. թէ՛ կը խմէ, թէ՛ կը խորհի, թէ՛ կը խոկայ:

Ըսի.

— Գանք ինքզինքը Յիսուսը կարծող բանաստեղծին. ուրեմն աշխարհի ամէն կողմը բանաստեղծները մնացած են տնութիւն...

— Այդպէս է: Ես փա՛ռք կու տամ ճակատագրի, որ բանաստեղծ չեմ ծընած: Ապրուստս կը շահիմ լայնօրէն: Դրամները թոխիք առած զէպի իմ կողմս կու դան: Երկու ձեռքերս պատնէջ կ'ընեմ, որ արգելք ըլլամ, բայց անօդուս. խայտառակ դրամները երկու ձեռքերուս վրայէն ցատկելով՝ նորէն ու միշտ ինծի կու դան: Դրամը բանաստեղծները չի սիրեր...

Շաթրեան դարձեալ արթնցաւ ու յայտարարեց.

— Պարագրական մը գրելու վրայ եմ, «Շալիդ»-իս համար: Վերջանալը մօտ է:

— Ի՞նչ է նիւթը խմրադրականիդ,

— Հարցուցիք:

— «Բանաստեղծը ինք իր մութը կանն է ու ինք իր Յիսուսը»:

— Հոյակապ եւ սքանչելի...

— Գիտաւոր ու վսեմ...

Յանկարծ, լսուեցաւ որոտընդոտ

ծափահարութիւն...

Բեմին վրայ քաշելու ձայներ...

Յուշարարը ծակէն վար իջաւ եւ ուղ-
ղըւնցաւ վեր:...

Մաքահարութիւնը կը կնուցեաւ:

Օտեան ըսաւ:

— Լեւոն, խմբադրականիդ վերնա-
դիրը ծափահարեցին: Մնացածը մի՛ ը-
սեր, կ'ելլեն կը սուլեն:

— Ձեն սուլեր: Գեղեցիկը պնակա-
տել դիտէ ժողովուրդը, երբ մանաւանդ
գեղեցիկին միացած են խոհեր, խորունկ
խոհեր:

Գերասանները վար վազեցին, սրբը-
ւելու, հանուելու եւ հաղուելու համար:
Վարի ներկայացումն ալ վերջացած
էր:

Օտեան ու Շաթրեան ելան ոտքի:
Սկահակները դրին իրենց գրպանը, իսկ
քոնեաքի դատարկուած շիշը չարտեցին
անկիւն մը: Ապա, «գիշեր բարի» մաղ-
թելով ինծի, սկսան սանդուխէն վեր
բարձրանալ, օգնելով իրարու:

Գերասանուհի մը սանդուխին վրայ
հանդիպելով երկու հանրահաշիւ բազմ-
սականներուն, ըսաւ:

— Մենք վերը խաղանք, դուք վարը
խմէք:

Օտեան պատասխանեց:

— Վերը եղողները հարկաւ կը խա-
ղան. վարը եղողներն ալ հարկաւ կը խ-
մեն ու կը խորհին: Ասանկ է աշխարհի
օրէնքը: Նայէ որ վար չի յնաս...

✱

ԵՐՈՒԱՆԻ ՏԵՐ ԱՆԴՐԷԱՍԵԱՆ՝

ՕՏԵԱՆԻ ՄԱՍԻՆ

Տասնեակ տարիներ առաջ էր, դեռ
երիտասարդ էի, ամուրի: Կը բնակէի Թա-
ղը Լատինական, որուն առ կամ նա սըր-
ճարանին մէջ, չարաթը մէկ-երկու ան-
գամ կ'ակմբուէինք զորդներս, մեր մէջ
ունենալով երէց ու երեւելի զորդներ:
Շարաթը մէկ-երկու անգամ ալ մենք մե-
ղի կը հաւաքուէինք, յանուն հոգեւոր
չորոյցի:

Երեկոյ մը Հինդլարթի, Լատինական
Թաղի լուսահեղեղ կեդրոնական պողո-
տային ծախ մայթէն վեր բարձրացած ա-
տենս, հանդիպեցայ Երուանդ Տէր Ան-
գրէասեանին, որուն հետ խօսակցելի կ'ու-
ղէի, քանի մը մասին հարցում ուղղելով:

Մասնք մեր սրճարանը սովորական,
Մոն Սէն Միշէլ, երկուքս միմեկ, դուրս
գլուխի:

Ամէն անգամ որ իրեն հետ բլլայի,
հմուտ հայադէտին կ'ուղղէի հարցում-
ներ, պատկանող մեր Մեծաքանչին զա-
նազան ներութիւններուն, մանրամաս-
նութիւններուն: Ինք հայերէնը կ'անուա-
նէր «մայրենի»:

Կը հարցնէի ու կը հիանայի իր հա-
յադիտութեան, առանց ստկայի սիրած
բլլալու իր լեզուն, ինչպէս իր Թարգմա-
նութիւններուն հայերէնը:

Գերբուշէ էր իր բարբառը, զուրկ սա-
հուն եւ յափշտակող դնացէ: Յոգնեցու-
ցիչ էր ու մերթ նոյնիսկ տաղտկացու-
ցիչ: Երբեմն կրկնէր իր խոսքով մը կը
յայտնուէին հին վանքերու եւ տաճար-
ներու լուստգիծեր, սակայն, դժնդակ էր
ընթանալ այդ քարոտ զետեղէն, որուն
մէջ թէեւ կային այնքան նշխարներ:

Ունէր լեզուին գիտութիւնը, առանց
ունենալու լեզուին գեղարուեստը: Ընդ-
հանրապէս այդպէս կ'ըլլան հայադէտնե-
րը զարմանալիօրէն:

Ինք կը դնահատէր, կը դովէր, կը
պերադատէր, նոյնիսկ կը դադարեցնէր
իմ հայերէնս: Արտայայտուած է բերա-
նացի: Նամակով ալ:

Հարցումիս վարպետօրէն պատաս-
խանելէ ետքը, սկսանք խօսիլ սարէն-ձո-
րէն:

Երբեք չեմ մոռնար իր սա խօսքը:

— Ծիւղ վաթսունընը տարեկան եմ:
Վտանգաւոր կամուրջ մըն է վաթսունը-
նը: Եթէ անցնիմ ու հասնիմ եօթանաս-
ուներո, դեռ ատեն մըն ալ կ'ապրիմ:

Մաղթեցի արեւշատութիւն, քաջող-
ջութեամբ:

Իր ըսածին պէս ալ եղաւ:

Մեր խօսակցութիւնը ոստոտելով՝
հոսաւ Երուանդ Օտեանին:

Ու յանկարծ, ըսաւ .

— Գիտե՞ս թէ ի՞նչպէս դրուած է Վսապիւրի նամականիքն : Ուրկէ՞ պիտի գիտնաս : Պատմեմ ու մտիկ ըրէ : Այն շրջանին, «Բիւզանդիոն»-ի խմբագիր էի : Օտեան ալ, շարաթը անգամ մը, երգիծական գրութիւններով կ'աշխատակցէր, յոգուած գլուխ ստանալով երեք մէճիւս (վաթսուն գրուշ) : Օր մը, խմբագրատուն եկած էր յոգուած բերելու, երբ Բիւզանդ Քէշեան, բաւոր խմբագիրներուն ներկայութեան, ըսաւ .

— Պարոն Օտեան, ձեր դրած երգիծականները մենէ առէ մէկը կրնայ գըրել : Անոնց մէջ գրեթէ արամաութիւն չկայ : Եթէ այսպէս պիտի շարունակուի, պէտք չկայ : Սանկ յաջող երգիծական գրութիւններ բերէք, ու ես երեքի տեղ վճարեմ վեց մէճիւս :

Օտեան կ'ստացարժիւր եղաւ : Ո՛ր մէկ բառ արտասանեց : Մնաք բարովի շարժում մը ըրաւ ու հեռացաւ :

Անկէ հաջը, Օտեան խմբագրատուն չեկաւ, ըստ սովորականին :

Անցաւ քանի մը շաբաթ : Օր մըն ալ երեւցաւ Օտեան, ի ձեռին ունենալով առաջին նամակը Փանջուների :

Քէշեան կարգաց . շատ հաւեցաւ ու ապեց : Թերթին քիւրաժը աւելցաւ : Խրժարագրապետը խոստումը յարգեց, վճարելով վեցական մէճիւս ամէն անգամ : Ու այսպէս, եթէ Քէշեանը չըլլար, Օտեան գրած պիտի չըլլար Վսապիւրը, ինչպէս նաեւ յաջորդ շաբաթերը :

✽

Ըսաւ ընտիր գրիչներու Փրանսայի, երգիծարանը ամբողջական գրադէտն է : Եւ Երուսանդ Օտեան իբրեւ կատարեալ երգիծարան, ամբողջական գրադէտ մըն է :

Ուրիշ սուրբի կը վերապահենք մեր գոտումը, ի մասին Փանջուների :

Ն. Պ.



Ք Մ Ա Ս Տ Ո Ւ Ք Ե Ի Ն

Իմաստութիւն, դու իշխել ես միշտ, ամենաւր,
կոչուել ես դու ամեն-ամէն ինչի համար,
Աստուածային սահմաններում ես դու եղել,
Եւ աւագի հատիկներում փոքուն ու ռուր:

Ե՛ւ հրճուանքն է քո մէջ եղել, ե՛ւ վտանգը
Ե՛ւ հիւռուել ես խաւում ու լուռ մտքերի մէջ,
Ե՛ւ հրճուանքով կեանքին հայռալ ապրող մարդը
Օրօրեւ է քեզ իր մտքում անվերջ-անվերջ:

Իմաստութիւն, ամօժէր, անվերջ է ուղին քո,
Դու կը տանես մարդուն դէպի յաւերժութիւն,
Հեշտ ու դիւրին է միշտ ապրել քեզնով կեանքում,
Բայց եւ դժուար եւ անգութ ես, իմաստութիւն:

Է Թ Մ Ա

Էլ մանուկ չես հիմա, եւ ոչ քոթովախօս,
Գիտես արդէն լրիւ կեանքի մասին,
Գիտես ամէն մի ինչ իբր իմաստը ունի
Եւ չկայ ոչ մի բան դատարկ ու սիւն:

Հիմի պատանի չես իզմերով ոսկեղէն
Օ՛, շատ-շատ յայտեր են քօշնել հիմա,
Անբայիմ սէրն էլ հիմա, քո բորբ հոգում
Վերացել է յաւեւ, համգել արդէն:

Հակատիդ բաց դաշտում անցել է շատ վաղուց
Փամանակն ակօսներն իր փորելով,
Էլ դժուար է ապրել միշտ ծիծղում, ժպտերես
Այս ճամբան պիտ' կարես լսել խորհելով:

Էլ մանուկ չես հիմա եւ ոչ քոթովախօս,
Փամանակն երբեքիւ է հազը հակտիդ,
Հիմի դու սերմ ցանիք այդ հողում գէթ անխօս,
Թող իմաստաւորութի բերքը կեանքիդ:

ՌԻՄԱ ԳԱՌՕՆԷ

ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶ

Թ Ր Ա Շ Ո Ւ Շ Ա Ն Ն Ե Ր

Արձակուրդի այս օրերուն պէտք է միայն արձակուրդի մասին գրել յիմար մտածումով չէ, որ նամբայ ելայ այս առաւօտ այս յօդուածը գրելու համար, այլ՝ տեսակ մը կարօտի կանչին հնազանդելու համար: Ի՞նչ էր կարօտացածս, անցնող այդ օրերն ու անցնող այդ օրերու քարեկամներս — անցնէ՞նք մտանք չկան երես — թէ՛ անցնող այդ օրերուն իր լուսինն համոզող կանաչ օրերս... Զգիտեմ: Դատելէ առաջ, կը խնդրեմ որ չխնդա՞վ վրաս: Ես պատմեմ՝ դուք մտիկ ըրէ՛ք: Գործողութիւնը տեղի կ'ունենայ հանգիստի զուրկութեան, կեղծութեան, տեսակ մը բուժավայրի մէջ գտնուող հայու ժը հիւրանոցին մէջ ու շուրջ: Հիմա չկայ այդ հաստատութիւնը, պատմութեան կարգ է անցած, մեղմիկ չեմ գիտեր, թէ իր տէրը ո՞րք է, թէ մեռած: Ներկայիս, աշխարհի վրայ, մանաւանդ Հիւսիսային Ամերիկայի մէջ, այնքան շուտ կը փոխուի մտէն քան որ...

Եթէ պատահի, որ փողոցէ մը երեք ամիս չանցնիլու, եթէ այդքան ժամանակամիջոցէ մը ետք որեւէ գործով հոն երթաս, ամէն քան փոխուած կը գտնես: Սա կամ մտ տունը պակասած է, ուրիշ մը՝ աւելցած, աւելի ուրիշ մը՝ ձեռ ու դիմագիծ փոխած: Երբեմն ալ, քան զիտցած փողոցը ամբողջովին սրբուած է քաղաքի քարտէսէն:

Բուժավայրին մէջ գտնուող հայու այն հիւրանոցը, որուն մասին խօսեցայ քիչ վերջ, հագիւ կարելի էր հիւրանոց որակել, տեսակ մը պանդոկ էր, ուր ինծի պէս պարզ մարդիկ, ամառուայ տաք օրերուն, կու գային հոն՝ քանի մը խաղաղ օր անցընել: Լողալու կ'երթային հանգիստի զուրկութեան, կը խնդրեմ հանգիստի զուրկութեան՝ ոչ թէ իրենց ունեցած իրական ու երեսակային հիւանդութիւններէն բուժուելու համար, այլ՝ սովորութեան իրենց տարբեր տալու:

— Եթէ օգուտ չընէ, վնաս ալ չի տար էր իր ճշմարտանք:

Շատեր կ'օգտուէին՝ կամ կը կարծէին, թէ կ'օգտուէին: Ինծի կը թուի, թէ կ'օգտուէին՝ պանդոկի ռեկուպիտացիոն, խաղաղ ու անկաշկանդ մթնոլորտին սփռած անդորրութեան: Օրը կ'անցընէին ծալանալով, ուտելով, խօսելով, կատակելով, գրական ու երաժշտական հարցերու մասին կարծիք յայտնելով, վնասներ տալով, նարտ, պրիմ ու փինսքըլ խաղալով, ու քիչ մըն ալ՝ ...բարբառելով:

Պանդոկին դիմաց կը տարածուէր ընդարձակ դաշտավայր մը, որ քաղաքի տղոց խաղավայրն էր: Առաւօտ կանուխ, երբ քունէն արթննայի, անոր ամբողջ լայնքին կը տեսնէի գինուորական կարգով, մէկ գծի վրայ յառաջացող սարեակներու երկար շարքը, որ կ'արածէր՝ ու դաշտը կը մաքրէր իր միջատներէն: Յետոյ կու գային տղաքը ու երբեմն մահու աղիւկները՝ իրենց մարդիկի համագոյնտով, ու պէտք ունէր մըտնալ կը սկսէր: Զրի հանդիսատեսներ էինք ու յաղթանակները ծափահարողներ: Երբեմն ալ, շրջուն վանառորդէ մը պաղպաղակ կը գնէինք բոլորին ու ձեռով մը վարձահատոյց կ'ըլլայինք:

— Կեանքէն հինգ տարի կու տայի ամենց հայ ըլլալը տեսնելու համար, — ըսի օր մը քովս կեցող մտերիմ քարեկամի մը, որ երես չկայ այս աշխարհին վրայ:

Խանդավառամեծով մայեցաւ ինծի, ու միտէմ ի՞նչ անցաւ, չգիտեմ, ժողովեցաւ :

Բայց ես այս բաները պատմելու համար չէր որ ճամբայ ելայ... Բայց, ինչպէս որ հաւանաբար շուրջ զրազներու ալ կը պատահի, շեղեցայ մաւ-բէս... Յանախ պատահած է, որ վերջուշը մոլաբեցնէ գիւս :

Պանդոկի բնակիչներս, ամէն օր կառք լեցուելով, կ'երթայինք նոր ակէ մը ջուր խմելու, նոր ջուրի մը համը նայելու : Կ'ըսէին, քէ լման ութսուն ջուր կայ քաղաքին մէջ ու շուրջ : Կը հաւատամ, քէ չափազանցուած էր այդ քիւր : Թէ հողին տակ հանքերով ու փոփական ճիւղերով օծուն աշխարհ մը կար՝ կասկածէ դուրս էր : Ամէն ջուր տարբեր համ ու բուրում ունէր : Թե-րեւ բուրում բառով այդ ջուրերէն ոմանք որակելը աններելի ռճիր համար-ւի : Բուրումը հանելի է : Վարդը, շուշանն ու մանիշակը, լաւ օդին ու լաւ խորովածը կը բուրեն : Բայց այդ ջուրերէն ոմանք կը հոտէին...

Միայն երկու ջուր գտանք քեզեան համով ու հաճելի, ու երկուքն ալ կը հասնէին ձորերու կողերէն ու նեղ շաւիղով մը կտրելի էր հասնիլ անոնց : Մէկը մանաւանդ, համեղ էր, շա՛տ համեղ, ու՝ գո՛վ : Մօտակայ բանջարա-նոցէն մեր գնած քարով վարունգները կը լեցնէինք աղբիւրին առջեւ գտնուող աւազէ փոսիկին մէջ, ու քանի մը բռնէի տոբ, երբ անոնք լաւ մը պոկէին, չթրտացնելով կ'աւտէինք : Մեկ մէջ հիւանդ տաճմոս ունեցողներն անգամ կը մարսէին զանոնք առանց դժուարութեան :

Օր մը, բանջարանոցի տիրոջմէն տասներկու քանչելի քաշուշան գնելով, հետս եկրանոց բերի ու տուի տանտիրուհիին :

— Տիկին Շուշան, այս ծաղիկները քեզի համար գնեցի :

Խեղճացաւ, կ'սորումն ճաշը պատրաստելով էր գրադուած : Ձայնս քէ բողբոլաւ իմաստը, յանկարծակիի բերին զինքը : Երբ ինծի դարձաւ, շըր-բունքները կը դադային : Գոգնացով սրբեց ձեռներու խոնաւութիւնը ու եր-կիւզածութեամբ առաւ ծաղիկները, հագիւ յաջողելով, առանց լալու շնոր-հակալութեան բառ մը ըսել :

— Ինձի՞ համար :

— Այո՛, քեզի համար : Ի՞նչ կայ գարմանալու, տովորական բան մըն է :

— Ինձի համար տովորական բան չէ... Կեանքիս մէջ առաջին անգամն է, որ մէկը ինծի ծաղիկ կը նուիրէ :

— Ատա՛ր համա՞ր յուզուեցար :

Գլխով «այո» ըսաւ :

Ալ չկեցայ իր քով : Գացի դուրս ու դրան առջեւի մեծ քղիկի շուքին տակ նարտ խաղացողները դիտողներուն միացայ :

Մէկը «գիւ-չէչ» կ'ուզէր, միւսը «սէօթա-խուհար»...

Կը դիտէի խաղացողները ու կը հետեւէի իրենց կռուին ու բացագան-չութիւններուն : Բայց դէմքիս առջեւէն չէր հեռանար Տիկին Շուշանի դէմ-քը՝ երկու յօնքին ճիշդ մէջտեղը կիտուած դեղին-կապույտ աստղով :

Արարական անապատներէն ու վրաններէն յիշատակ նշան մը, որ բազ-մաթիւ հայուհիներու տառապանքին ու գերութեան վկայականն է անկաս-կած :

Կեանքիս մէջ, երբեմն ուզելով, երբեմն չուզելով, շատ վիշտ ու քիչ մըն ալ ուրախութիւն ցանած եմ հոս ու հոն, երբ անոնց հաշուեյարդարին նստիմ, ուրախութեան ցանկին է՛ն վրան կը դնեմ Տիկին Շուշանին նուի-րած ծաղիկներուս առթիւ գգացած երջանկութիւնս :

Ա. Հ.

ՆՈՒՊԱՐ ԶԱՐԻՈՒՏԵԱՆ

ՄԱՀՈՒԱՆ ԿԱՄՈՒՐՋԸ

(Վ Է Պ)

Գ Ի Ր Ք Ե Ր Ր Ո Ր Դ
ՈՒՆԱՅՆՈՒԹԵԱՆ ԱՓԵՐԸ

ԳԼՈՒԽ Բ.

Կը քաշուիմ դպրատան մէկ անկիւնը: Պէտք է անպայման քնանալ այսպիսի ջրագրորէն օրուրնէ մը ետք: Եւ սակայն քունը կը նմանի թակարդներով անկանուած անտառի մը: Ամէն անգամ, որ կուպերս իբրտու կը միանան, հեղձուցիչ զգացումներու վրահակ մը կը նուաճէ ուղեղս եւ անձկութիւնը կը հոսի երակներու մէջ, ինչպէս թռչնաւոր ջուր մը: Ճիշդ է, որ յոյսը կը լուսաւորէ էութիւնըս, եղիպտական մոմիայի մը վրայ հակող լապտերի մը պէս: Այս կռիւնարին պիտի յաջորդէ գինադադար մը անպայման: Արդէն տեսիլքներու մշուշին մէջն ինձի կը ժպտի Զապէլին կարօտայի գէմբը: Վերջապէս կը քնանամ...

Յանկարծ կ'արթննամ: Եղբրական երդ մը կը զարնուի անկողններուս: Ոտքի կ'ելլեմ եւ կը քալեմ մինչեւ մատուռին դուռը: Գաւիթին մէջտեղ գտնուող աւազանին շուրջը, տասնեակ մը խամաճիկներ կը դառնան շուրջանակի: Կը դանդաշեն, կը դալթին, կ'իյնան ու կըր-

կին ոտքի կը կանգնին եւ սեղմուած բըսունցքները ուղղելով դէպի աստղերը՝ միասին կ'ոռնան:

— Աստուած խաչուած է, Աստուած խաչուեցաւ երկու հազար տարի առաջ լեբկ բլուրի մը դազաթը: Պիտի ցնցենք երկինքը եւ երբ աստղերը վար իյնան, մէկիկ-մէկիկ դանոնք պիտի բղկտենք:

Շուրջսարը կանգ կ'առնէ յանկարծ, երբ կը յայտնուի կղերականը: Մարդկային խամաճիկները կը վազեն աջ ու ձախ, կը հաւաքեն քարեր ու կը նետեն մատուռին կողմը: Քարերէն մէկը կը ցաւցնէ կուրծքս եւ մութ գիշերուան մէջ կը պոռամ:

— Կը բաւէ՛, կեցէ՛ք. մարդ մը կը քարկոծէք, ձեր եղբայրներէն մէկը կը քարկոծէք:

Ահռելի քրքիլ մը կը պատասխանէ կանչիս եւ քարայրային ձայն մը կ'անդամալուծէ դիս:

— Եղբայր մը, ողջ եղբայր մը՝ այդ անկարելի է: Երկար ժամանակէ ի վեր ողջեր չկան երկրին երեսը: Մենք բոլորս ալ մահուան դաւակներն ենք:

Կը փորձեմ խօսիլ, որոշ ճիշ մը կը լռեցնէ դիտ եւ կանաչի ձայն մը կը խօսի ուրուառեսիլ խաւարին մէջ:

— Հինգ զաւակներ ունէի, հինգ գեղեցիկ զաւակներ, — կը պատմէ ձայնը, — չէի ուզեր որ մահը մօտենայ իրենց մաղերուն: Ամէնէն պզտիկը հազիւ երեք ամսուան էր: Օր եղաւ, որ Թիֆլիս շրջան, որովհետեւ բան մը չէինք ուտեր: Պզտիկը կը Ծծէր ու կը Ծծէր, եւ որովհետեւ կաթը չորցած էր, արիւնս սկսած էր Ծծել: Կը շարշարուէի ու կը լռէի: Գիշեր մը, բոլոր զաւակներս միասին, զիս շրջապատած՝ հաճ, հաճ, կը պոռային: Հեռացայ իրենցմէ, կտրեցի ստինքներս սուր քարով մը եւ իրենց բաժնեցի, որպէսզի ուտեն ու չլան այլևս: Բայց ասիկա չբաւեց, որովհետեւ միշտ կը քաշէինք անապատի մէջ եւ տեղ չէինք հասներ: Մեռան մէկը միւսին ետեւէն: Քաշեցինք օրեր, այս հինգ դիտներով ընտանոթուած: Բայց գինուորները, թեւեթս խլեցին իմ սիրելիներս եւ զանոնք չուներուն նետեցին...

— Ե՛ս, — պոռաց ուրիշ կանացի ձայն մը, — տասներեք տարեկան աղջիկ մը ունէի, գեղեցիկ եւ հրեշտականք ման: Գիշեր մը, ոտակալները եկան թախտի մեր վրանին շուրջը: Աղջիկս հասկցաւ անոնց նպատակը եւ ինծի ըսաւ. «Մամա՛, մի՛ ձգեր որ զիս տանին, եթէ մօտենան զիս սպաննէ: Եւ ես ըսալանեցի իմ տասներեք տարեկան հրեշտակալ: Սեղմեցի կոկորդը, մինչեւ որ աչքին դուռները դուրս ցայտեցին ակնակապիճներէն եւ կուրծքը կեցաւ հեւալէն: Ա՛հա՛, պոռացի երբ ոտակալները ներս մտան, առէ՛ք աղջիկս, Ժախեցէ՛ք որո՛ւն որ կ'ուզէք: Նկատելով որ իրենց հաշիւները սխալ արդիւնք տուած էին, այդ հրէշները վրաս խոյացան եւ սկսան բռունցքով ու ոտքով հարուածել, մինչեւ որ փոռեցայ գետին. յետոյ մէկը միւսին ետեւէն աչքերու առջեւ բռնաբարեցին տասներեք տարեկան աղջիկս: Անկարելի է գիտանալ այս տեսարանին: Կը քաշուիմ մատուռին մէջ, կը

մտնեմ դպրատուն ու կը գոցեմ դուռը: Դուրսը կը վերսկսի դժոխքը: Խամահիկները կը վերսկսին ոռնալ, զբջալ, եւ անիծել: Անոնց նետած քարերը կը զարնելն մատուռի պատերուն եւ ցատկելով մինչեւ երկինք, կ'երթան մարելու աստղերուն նայուածքը, ա՛յն աստղերուն, որ անքթիթ լուսաւորեցին իրենց մարտիրոսութիւնը:

Արդէն արշալոյսը միջնաբերդի մը պէս սկսած է ցցուիլ ունայնութեան ավերուել վրայ: Յանկարծ դանդաղ մը կը շօշաւնէ՝ զիս շրջապատող արհաւիրքը վանելու համար: Ան մութի հարուած մըն է յաւիտենականութեան տրոյթ պատին վրայ: Հարուածներու կշռոյթը դանդաղ է: Մեռելները քնացնելու եղանակ մը:

Բայց ես ողջ եմ տակուին: Ես կենդանի եմ մեռելներու այս աշխարհին մէջ:

Մեքող արեղայ կը քաշէ դանդաղի շուրջը:

— Սկսան մեռնիլ մէկը միւսին ետեւէն, — կ'ըսէ կղերականը, — քանի մը մամէն, բոլորն ալ մեռած կ'ըլլան: Հիմա պէտք ունիմ քու օժանդակութեանդ: Պարտէզին անկիւնը, հոն՝ ուր խաչեր տնկուած են, փորելու գործիքներ կան: Յարմար տեղ մը գտի՛ր եւ փորէ՛ փոս մը բոլոր անոնց համար, որ մեռած են եւ բոլոր անոնց համար, որ պիտի մեռնին: Կը վարնամ, որ մեր բոլոր աղղը, օր մը...

Իւրաքանչիւր գիտիլ համար գերեզման մը փորել անկարելի է: Մէկ փոս բոլորին համար: Բայց փոս մը, որ ըլլայ լայն ու խորունկ, ինչպէս են Գեղտնիքի գիշերները:

Հող մըն է արեւէն խանձուած եւ հողիէն շրջած: Հազարաւոր անգամներ հերկուած հող մը, ուր հիմա մեռած են վարդենիի եւ շուշանի տունկերը: Այդ պատճառաւ փերուն է եւ բրիլլ կը մըրճորնուի անոր մէջ, ինչպէս նախնաճոտ

սիրահարի մը դաշտնը իր սիրունիկն սիրտը:

Կը դարձանամ այն ուժին վրայ, որ տակաւին կը գտնուի մկաններու մէջ: Նոյնիսկ չեմ մտածեր կանգ առնելու, որպէսզի չափեմ փորած գերեզմանիս լայնքը եւ խորքը: Վերածուած եմ փորոզ մեքենայի մը: Եւ փորը կը խորանայ սրալին պէս այրի կնով մը, որ կը կորսնցնէ իր վերջին գաւազը:

Եւ կը սկսիմ յիշատակներ արձատալ իմ ընկել:

Կը փորեմ Թիապարտի մը պէս, որ դատապարտուած է աշխարհին կեղծոնը գտնելու եւ անկէ հանելու խորհրդաւոր մետաղ մը: Բայց ես լաւ գիտեմ փնտռուած: Կը յուսամ վերագտնել կորսուած սէրս: Կը յուսամ շերտ մը հողի տակ տեսնել յանկարծ Զապէլին անձկագիտն ու նոյն ատեն խաղաղեցնող դէմքը:

Յանկարծ մտքերուս լատապէր կը փլի եւ փոսին խորէն ձայն մը կը պոռայ. «Կը բաւէ՞, կը բաւէ՞, կանգ ա՛ւ, դիմ կը վերաւորես»: Թորգոմ պսակած փոսին տակէն ինծի կը նայի: Յոյց կու տայ իր խոշտանգուած մարմինը եւ ձեռքերուն մէջ կը բարձրացնէ Վահանին աբիւրուայ դուխը... Եւ կ'ըսէ. «Մի՛ մոռնար մեզ, մի՛ մոռնար երդումդ»:

Զանգակը կը շարունակէ հատիկ-հատիկ սփռել իր եղբրական կանչը: Տիեզերքի հսկայ ծնծղան կը թրթռայ ճակատագրի մետաղէ մուրճին տակ, որ կ'աւետէ աշխարհին՝ ազդիս մահը...

Եւ ես աւելի աշխոյժով կը գործածեմ բրիւս: Կ'ուզեմ ճեղքել փորը այս անգութ մօրունին, որ ծնունդ տուած է այսքան դժբախտներու եւ դանձր լքած շարիքին ճիրաններուն տակ, եւ կը փորձեմ զայն պատժել իր անտարբերութեան եւ անհոգութեան համար:

Զանգակը կը լռէ, եւ սակայն բազուկներս կը շարունակեն քարձրանալ եւ իջնել: Գիտեմ, որ եթէ կանգ առնեմ երկվայրկեան մը իսկ, երկրագունդը պիտի դադրի թաւալելէ: Եւ անտեսանելի ձայն մը կը պոռայ ականջիս.

— Փորէ՛, միշտ փորէ՛, որովհետեւ

երբեք բաւական տեղ պիտի չգտնուի հոգին մէջ, պարունակելու համար մարդկային բոլոր առաւելանքները. որովհետեւ մարդը միշտ պիտի շարունակէ մարդուն գայլը բլլալ, որովհետեւ անդի պիտի ունենան ուրիշ շարժեր, ուրիշ միջոցներ գիտնէր իրարու վրայ դիպուած, զորս պիտի գործածեն իբր հոռւ նիւթ քիմիական գործարաններու մէջ:

Կը փորեմ գերեզման մը այն բոլոր գիտններուն համար, որոնցմով ո՛չ ոք կը զբաղի, բոլոր այն մարմիններուն համար, զորս թունաւոր ու վայրագ հով մը՝ ծնած քարբարոսութենէ եւ կոյր ատելութենէ, փրցուց կենաց ծառէն:

Այս կը աւելէ յաւիտենականութիւն մը: Եւ կամաց-կամաց անգամներս կը ծանրանան, կապարէ խաւ մը կը շրջապատէ զանոնք եւ ասէրս կը թաղուի սեւ ջուրով լեցուն տաշտի մը մէջ եւ կը փլշիմ բազուկներուն մէջ հողին, զոր շարշարեցի:

Երկնցած եմ մատուռի շուրին տակ: Մեծորոպ արեղայ կը յայտնուի դիմացէն, շալակին վրայ առած դիակ մը, որուն ոտքերը կը քուրին գետին: Դիակը կը զլորէ փոսին մէջ, յետոյ կը վերադառնայ կորագամակ: Կ'երթեւեկէ այսպէս բազմաթիւ անգամներ, միշտ բեռնաւորուած մարդկային մնացորդացով մը: Կէսօրուան մօտ՝ երթեւեկը կը դադրի: Բաւական հանգչած բլլալով, ինծի կարելի կ'ըլլայ ոտքի ելլել ու երթալ իր մօտը: Ան ինկած է հողակոյտին վրայ, ճիշդ փոսին եզերքը:

— Վերջացուցի, — կ'ըսէ, — երբ վերջին շունչս փչեմ, ափ մը հող նետէ վրաս, եւ կարճ աղօթք մը ըրէ, որովհետեւ դուն տակաւին կենդանի ես: Երբեք մի յուսահատիր, շարունակէ ճամբադ: Ուշ կամ կանուխ Սատուած ձեռք մը սիտի երկարէ մեզի: Շատ երկար ժամանակ ականջ դրինք մարդոց խօսքերուն, եղանք անհոգ, եղանք անփոյթ: Կը քնանայինք իժերու բոյնի մը մէջ, կը

պատկերները դասակարգելով մը մէջ՝ երգելով ու խնայելով։ Օրը հեռու չէ, երբ պիտի տեսնենք այս բաներուն վերջը եւ արդարութիւնն պիտի տրուի մեզի։

Կը դադրի խօսելէ։ Կը հակի կողմն վրայ, թեւեւէն մէկը գլխուն տակը ծալլըւած, մանուկի մը վստահութեամբ, որուն մայրը արթուն է իր անարին մօտ։

Ձեռն խորհրդէն նոյնիսկ իջեցնել իր կոշիկը բերեալուն վրայ։ Այս անշարժ ու պարտուած կերպարանքը կ'արժէ հիմա աշխարհ, որքան կ'արժէին այն մարդկային խամաճիկները, զորս նետեց փոսին մէջ մէկիկ-մէկիկ։ Անոնք կ'ոռնային խաւարին մէջ, կը հայհոյէին աղջկաներէն մէջ, կ'աղաղակէին Աստուծոյ անունը, որովհետեւ իրենց կրած անիրաւութիւնները եւ տառապանքը հասած էին մարդկային չափերէ դուրս։ Մեարտ պահգայ Աստուծոյ նուիրուած մարդ մըն էր։ Իր աղօթքը պիտի լսուի՝ արդեօք։ Մեարտ պահգայ սուրբ մըն էր, բայց ո՞ւր են իր վարձատրութիւնը եւ լուսապսակը։

Արեղային դիակը կ'իջեցնէ փոսին մէջ եւ վրան կը նետեմ քանի մը ակ հող, ծածկելու համար իր մարմինը եւ երկինքի աչքերէն պահելու համար մարդերու ամօթը։

Կը մօտենամ մատուռին։ Ձանդակը վերն է, անշարժ որբի մը պէս։ Կը սպասէ, որ մէկը զբաղի իրմով։ Երկու ձեռքերով կը սեղմեմ շուանը, եւ կը քաշեմ համաշափ, բայց չարժուած կ'արագացնեմ անզգալաբար։ Եւ աշխարհի ամայի տարածութիւններուն վրայ, աւազներուն վրայ, որոնք կը շարունակեն ու պիտի շարունակեն խմել եղբայրներուն արիւնը, չեմ սփռեր դանդաղ ու ջղայնացուցիչ կ'ուրթը մահապանգի, այլ տառայ եւ լուսաւոր հնչիւնը Ջատկուան առօրեաներու, փառաբանելու եւ պանծացնելու համար Մահը։ Մեռելները չէ, որ պիտի կերտեն մեր կեանքը...

Սպասուած եմ։ Շատ պիտի ուզէի երկընկալ հողին վրայ եւ ձգել որ հոսի վրայէս, արբազորածող գետի մը պէս, գիշերուան մութ եւ անմեղ շոյանքը։ Բայց ես մեռել մը չեմ եւ իրաւունք չունիմ

հանգիստի։ Կը նայիմ պարտէպին խորը, պատին շուքին տակ ցցուած խաչերուն եւ կը յիշեմ Մեարտ պահգային վերջին խօսքերը։

— Դիակներու աղեղութիւնն է, որ մեր հաւատքը կը զօրացնէ հողի անմահութեան հանդէպ։

Հողի անմահութիւնն։ Օրեր կան, երբ կը տարակուսիմ իմ իսկ գոյութեանս վրայ։ Կանգ կ'առնեմ պարտէպին կեդրոնը։ Կրնամ մեռնիլ այս ամայութեան մէջ եւ վերջին նայուածքս կրնայ չհանդիպիլ ոչ մէկ ուրիշ մարդկային նայուածքի։ Պէտք է մեկնիլ, պէտք է հեռանալ՝ գիշերը վրայ չեկած, եթէ ոչ այս բոլոր մեռելները, որ դիտ կը շրջապատեն, պիտի ցցուին դէմս, պիտի շրջապատեն դիտ, որպէսզի չբաժնուիմ իրենցմէ։ Պէտք է քիչ մը աւելի հող նետէի իրենց վրայ, որպէսզի չկարենային դուրս ելլել իրենց գերեզմաններէն։

Տաւրոս լեռնաշղթային անցայ Մարտինի մօտերը։

Յերեկները կը քալեմ ճամբաներէն հեռու, գիշերները կը մօտենամ գիւղերու։ Եթէ գիւղերը բնակուած գտնեմ, կը հեռանամ։ Բաւոր անոնք, որ տակաւին երգիք մը ունին իրենց գլուխներուն վրայ՝ հայեր չեն կրնար ըլլալ, այլ թըշնամիներ։ Եթէ գիւղը անբնակ գտնեմ եւ աւերակ՝ կը մտնեմ գտնէ մը ներս ու կը գիշերեմ։

Կ'ուտեմ երբ որ ձեռքս բան մը անցնի, կը խմեմ աւելի յաճախ։

Կը դանդաղեմ անողոր ճամբուն վրայ։ Հազուադէպ ծուլներու վերածուած՝ կը ծփան լլկուած մարմինիս շուրջ։ Լուսթիւնը եւ ամայութիւնը կը սաւառնին վերերը։ Անոնք կ'ուզեն կրծել գոյութիւնս, դիտ լուծել իրենց ոչնչութեան մէջ։ Բայց ես կը դիմադրեմ, ես ողջ եմ տակաւին, կ'ուզեմ գոյութիւնս շեշտել, տակաւին ունիմ ձայն մը, որ կրնայ փրշուր-փշուր ընել այն պատը, որ կը ջանայ դիտ արգելափակել։ Երբ եղած վայ-

բո շատ ամառի է եւ երբ կը զգամ որ էութիւնս պիտի լուծուի տեսարանին մէջ, այն ատեն կը պոռամ։

— Ես Միքայէլ Պարթեւեանն եմ, Միքայէլ, Միքայէլ։ Այս ձեռքերը, այս ոտքերը, որ կ'արիւնին՝ ինծի՛ կը պատկանին։ Այս աչքերը կորուսած իրենց ակնակապիճներուն մէջ՝ ի՛մս են. այս ականջները, որոնք չեն ճանչնար իմ ձայնըս իսկ՝ ի՛մ ականջներս են։ Այս է մարմինս, այս է ձայնս։ Ես մարմին մըն եմ, ես անապատ մը շէ՛մ, տեսարան մը շէ՛մ, ոչ ալ ծառ մը. ես մա՛րդ արարած մըն եմ, մա՛րդ մը...

Հիմա կը քալեմ մահացու կախարդանքներով շրջապատուած իրիկուան մէջ։ Կը քալեմ գէպի միակ ծագիկո, դէպի Զապէլը։ Բայց ի՛ր եւ ի՛մ մէջն կայ տակաւին կատարուելիք ահռելի երգում մը։ Կան երկու իժեր, որոնց գլուխը պէտք է ճգմեմ...

Սակայն ատենէ մը ի վեր, մեզմ հոգի, որ սկսաւ փչել հիւսիսէն, ինծի կը բերէ անշնչելի արտարուումներ։ Այդ նոյն դարձահոտութիւնը, որ կը շնչէի Համբարձման վանքին մասաններուն մէջ։ Եւ իւրաքանչիւր քայլիս հոտը կը զօրանայ, կարծես նեխութեան հիւլէները կը փշուռին ապակիէ շիւերու պէս եւ կը թափեն իրենց պարունակութիւնը։

Անորոշ ժխոր մը կը զարնուի ականջներուս։

Անմիջապէս կը լքեմ ճամբան ու կը բարձրանամ բլուրի մը զապթը, որ կը գտնուի ձախիս։ Ժայռերը եւ մացառնեքը արդեւ կը հանդիսանան վերելքիս։ Բայց ես կանգ չեմ առնիր։ Ինչ որ բլուր մը կը կարծէի, հիմա ինծի լեռ կը թուի։ Մէկ ժամէ ի վեր կը բարձրանամ եւ տակաւին չեմ հասած գագաթին։

Վերջապէս կը հասնիմ ապառաժի մը եղբրը։ Վարը, կը տարածուի ընդարձակ ծառաստան մը։ Այս իրիկուն լուսինն ալ ուզած է ներկայ ըլլալ աօնին։ Իր խաղաղ ու կաթնաթոյր լոյսը կը հոսեցնէ մութ սաղարթներուն վրայ։ Եւ տերեւներուն վարդոյրին ետեւէն կը նշմարեմ պլպլացող լոյսեր։ Քիչ մը աջիս, բացա-

տի մը կեդրոնը կը բարձրանան խորոյն կի մը բոցերը։

Հիմա անվախօրէն մօտեցած եմ խաբոյկին եւ լոյսերուն։ Մարդեր նստած շուրջանակի ծափ կը զարնեն ընկերանալով թմբուկի մը եւ սաղի մը։ Բայց ոչ մէկ պարող։ Թերեւս շատ հեռու ըլլալու համար է որ բան մը չեմ նշմարիր։ Բունէ բուն պահուելով, քիչ մը անշնչի կը մօտենամ խնջոյքին։ Մացառներու թումբեր զիս կը պահեն գէշ նայուածքներէ։ Հիմա կարելի է ամէն բան տեսնել ու լսել յատակօրէն։

Այն մարդերը, որ նստած շուրջանակի ծափ կը զարնեն, զինուորներ եւ ուտիկաններ են։ Մօա քսան հողի։ Դէմքերուն արտայայտութիւնը ցոյց կու տայ, թէ անոնք լաւ կերած ու լաւ խմած են։ Բոլոր նայուածքները ուղղուած են դէպի աջ, ուրկէ բան մը կը սպասուի։

Կը լսեմ ճիւղեր, աղաղակներ, հայհուլներ եւ յանկարծ դիմացի կողմէն եւրեան կու գան յիսուսի շափ երխաւորացուհիներ։ Տասնեակ մը ոտականները, մարակներով զանոնք կը քշեն դէպի բացատին կեդրոնը։ Կը զգամ, որ այս վայրին մէջ պիտի պատահի բան մը, սոսկալի ու սրտաճմիրկ դէպք մը։ Սրիւն գի մը սուր ու մեղամաղձոտ ձայնը կ'իլ-լաէ բոլոր աղմուկներուն վրայ։ Մարդերը, որոնք կը ծափահարէին, հիմա կ'արձակեն ուրախութեան ոռնոցներ։

— Օ՛հ, պարեցէ՛ք, կեաւուրի աղջիկներ։ Պարեցէ՛ք, — կը պոռայ ձայն մը մութին խորերէն։

Եւ մարակները կը սկսին շաշել խումբին շուրջ, զոր կը հրեն գէպի բացատին կեդրոնը։ Գլուխներն կախ, մաղերնին թափած միջին գօտիները, գոռնուկներու հօտի մը պէս գիբար հրելով, կը կծկուին իրարու վրայ, կը ջանան պատնէշ մը կանգնել իրենց անմեղութեամբ՝ իրենց աւելի տկար քոյրերուն։

Մարդերէն մէկը ոտքի կ'ելլէ քրքըլալով, կը մօտենայ խումբին եւ կը բաժնէ երիտասարդուհիներէն մէկը, կը քշէ առջեւ եւ յանկարծ վրան խոյանալով՝ կը պատռէ անոր հագուստները։ Եւ դո՛ւր

կ'արձակէ անմարդկային ճիշդ մը, հա-
լածուած երէկ մը աղաղակէ: Կը փորձէ
վերադառնալ իր հօտին դիւրկը, կորսուել
անոր մէջ՝ պահելու համար իր մերկու-
թիւնը: Ուրիշ մարդիկ ուրքի կը կանգնին
կատաղած: Կը նետուին միւս հայուհիներ
ընդ վրայ Բա կը պատուեն անոնց հա-
ղուտները: Յիսուս երիտասարդուհիներ-
ը մերկ են հիմա: Կարծիր բոցով խա-
րոյիլ արիւնով կը ներկէ իրենց մարմինն
սպիտակութիւնը, որ տակաւին ոչ մէկ
նշանած տեսած է:

Սրինգը, սազը եւ թմբուկը եռանդով
կը նուագեն պարի եղանակ մը: Մտրակ-
ները կը շաշեն ու անդուծորէն կը խած-
նեն մերկ մարմինները եւ իմ յիսուս քոյ-
րերս կը սկսին քալել իրարու ետեւէ խա-
րոյիլն շուրջ: Իմ յիսուս անմեղ ու ան-
պաշտպան քոյրերս: Անոնք կը կոչուէին
Աշխէն, Անահիտ, Գալանէ, Զապէլ,
Տիգրանուհի եւ Սեղա...

— Պարեցէ՛ք, պարեցէ՛ք, կեանքի
աղբիկներ, ուրախացուցէ՛ք մեր սրտերը:
Այսօր ա՛յնքան սպաննեցինք մեր եղ-
բայրներէն, ա՛յնքան գանկեր ճգմեցինք
մեր ներքաններուն տակ, որ մեր մկան-
ները յոգնած են: Ա՛յնքան փորեր ճեղ-
քեցինք մեր յղի մայրերէն եւ քոյրերէն,
որ մեր թեւերը անդամալուծուած են
այլեւս: Պարեցէ՛ք, պարեցէ՛ք, որպէսզի
մոռնանք վաղուան սպանդները, որ ե-
րէկուքնէ ա՛յլ աւելի ահաւելի պիտի ըլ-
լան:

Մարակները կը շաշեն, մարդերը
ծափ կը զարնեն, հարբած արիւնով եւ
վաւաչոտութեամբ եւ արինգը կ'աղաղա-
կէ, կ'ողբայ ու կը հեկեկայ լուսնի ան-
մեղ լոյսով օծուած խաւարին մէջ:

Պարոյկին բոցերը կը նուագին զգա-
լաբար, բայց ոչ ոք կը մտածէ զայն
հրահրել: Հոն, ծառաստանէն անդին, կը
զուլակեմ զոյուծիւնը ցաւատանջ ու ող-
բացող ամբոխի մը:

Հիմա իմ յիսուս քոյրերս կը պարեն
իրենց քան միւսին դահիճներուն հա-
մար, մերկ՝ ինչպէս էր իրենց մայրը Ե-
ւա, երբ զատուեցաւ Արամի կողէն: Եւ
մէկեկ-մէկեկ զետին կ'իյնան յոգնած ու

պարտասուն: Եւ այդ պահուն, մարդ-
զազանները կը խոյանան ու կը յօշոտեն
այս անշարժ մարմինները, մինչ խորոյ-
կը կը մեռնի եւ լուսինը իր դէմքը կը
ծածկէ զդուանքով:

Կատաղած եւ անկարողութեան պատ-
ճառաւ, Գլուխ կը զարնեմ ծառին կար-
ծըր կոճղին, ժայռը կը փորեմ հղուկո-
ղեցով: Ա՛հ, եթէ զէնք մը ունենայի-
մէկիկ-մէկիկ կը սպաննէի այս անասուն-
ները եւ կը մեռնէի հպարտ ու ժպտուն:

Քոյրե՛ք, ներեցէ՛ք մեղի, որ մեռանք
ձեզմէ առաջ: Ներեցէ՛ք, որ ձեզ առա՛ն-
ձին ձգեցինք մահուան եւ տառապանքի
ճամբաներուն վրայ: Ո՛վ անկամահաւ-
ած մարմիններ, ձեր աղաղակները կը
կորսուին դիշերուան անտարբերութեան
մէջ, մինչ մեր դիակները կը հոնգան
զարմացած հողերուն հետ եւ անդրերը
կը փորեն մեր աչքերը ու շերտ-շերտ կը
հանեն մեր մկանները:

Դէմքիս վրայ կը փռուիմ չթշնալու
համար աստղերու լոյսին վրայ, որոնք
անամօթաբար կը լուսաւորեն այս տե-
սարանը:

Այդք չի մոռնար իր հերթը: Արեւը
կը բարձրանայ պղծուած կապոյտին մէջ:
Բացատը ամայացած է: Միայն խաւոյ-
կին մոխիրները կը վկայեն, որ գիշերուան
զեպքերը կը պատկանին իրականութեան:
Հոն, ճամբուն կողմերէն կը բարձրանայ
յանկարծ վայնասուն մը: Կը նահանջեմ
ու կրկին կը մագլցեմ բլուրին կողմ ի
վեր եւ կրկին աչքերուս առջեւ կը տա-
րածուին ծառաստանը եւ մօտակայ լայն
տարածութիւնները: Ծամբուն վրայ կը
քայլէ միաւոր ոտաթկաններու ջոկատ մը,
եւ կը քակուի կծիկը մահուան կարուա-
նին: Միւսած շունքը կ'արթննան: Այլևս
ձանձրացած ու զրուած են մարդկային
միա ուտելի: Երկնցած բակերու պատին
շուքին տակ, անոնք չեն հաջեր այլևս:

Բազմութիւնը կ'անցնէ լուռ՝ բլուրին
ջովէն: Մայրեր եւ քոյրեր, մեծ պապեր
ու թոռներկներ: Ինչո՞ւ կը քայլեն անզո-
գար. ինչո՞ւ գիշերնք բերած են մինչեւ
այս կողմերը, երբ այնքան առիթ կար
զանոնք ոչնչացնելու մահուան ժողովուն

բը շատ ամայի է եւ երբ կը զգամ որ էսութիւնս պիտի լուծուի տեսարանին մէջ, այն ատեն կը պոռամ։

— Ես Միքայէլ Պարթեւեանն եմ, Միքայէլ, Միքայէլ։ Այս ձեռքերը, այս ոտքերը, որ կ'արիւնին՝ ինծի՛ կը պատկանին։ Այս աչքերը կորսուած իրենց ակնակապիճներուն մէջ՝ ի՛մս են. այս ականջները, որոնք չեն ճանչնար իմ ձայնըս իսկ՝ ի՛մ ականջներս են։ Այս է մարմինս, ա՛յս է ձայնս։ Ես մարմին մըն եմ։ Ես անսպասող չե՛մ, տեսարան մը չե՛մ, ոչ ալ ծառ մը. ես մա՛րդ արարած մըն եմ, մա՛րդ մը...

Հիմա կը քայլեմ մահացու կախարդանքներով շրջապատուած իրիկուան մէջ։ Կը քայլեմ դէպի միակ ծաղիկս, դէպի Զապէլը։ Բայց իր եւ իմ մէջս կայ տակաւին կատարելիք ահաւիթ երգում մը։ Կան երկու իժեք, որոնց զլուխը պէտք է ճզմեմ...

Սակայն ատենէ մը ի վեր, մեղմ հոգի, որ սկսաւ փշել հիւսիսէն, ինծի կը բերէ անշնչելի արտաբուրումներ։ Այդ նոյն դարշահոտութիւնը, որ կը շնչէի Համբարձման վանքին մատաններուն մէջ։ Եւ իւրաքանչիւր քայլիս հոտը կը զօրանայ, կարծես նեխութեան հիւլէները կը փշրուին ապակիէ շէշերու պէս եւ կը թափեն իրենց պարունակութիւնը։

Անորոշ ժխոր մը կը զարնուի ականջներուս։

Անմիջապէս կը լքեմ ճամբան ու կը բարձրանամ բլուրի մը գագաթը, որ կը գտնուի ձախիս։ Ժայռերը եւ մացառները արդէն կը հանդիսանան վերելքիս։ Բայց ես կանչ չեմ առնել։ Ինչ որ բլուր մը կը կարծէի, հիմա ինծի լեռ կը թուի։ Մէկ ժամէ ի վեր կը բարձրանամ եւ ասուկան չեմ հասած գագաթին։

Վերջապէս կը հասնիմ ապառաժի մը եզերքը։ Վարը, կը տարածուի ընդարձակ ծառաստան մը։ Այս իրիկուն լուսինն ալ ուզած է ներկայ ըլլալ տօնին։ Իր խաղաղ ու կաթնաթոյր լոյսը կը հոսեցնէ ձութ սաղարթներուն վրայ։ Եւ տերեւներուն վարազոյրին ետեւէն կը նշմարեմ պալապոյզ լոյսեր։ Քիչ մը ալիս, բացա-

տի մը կեդրոնը կը բարձրանան խորոյ կի մը բոցերը։

Հիմա անվախօրէն մօտեցած եմ խաբոյզին եւ լոյսերուն։ Մարդէր նստած շուրջանակի ծափ կը զարնեն ընկերանալով թմբուկի մը եւ սաղի մը։ Բայց ոչ մէկ պարող։ Թերեւս շատ հեռու ըլլալուն համար է որ բան մը չեմ նշմարել։ Բունէ բուն պահուրտելով, քիչ մը աւելի կը մօտենամ խնջոյքին։ Մացառներու թումբեր դիւ կը պահեն զէշ նայուածքներէ։ Հիմա կարելի է ամէն բան տեսնել ու լսել յոտակօրէն։

Այն մարդերը, որ նստած շուրջանակի ծափ կը զարնեն, զինուորներ եւ ստիկաններ են։ Մօտ քսան հոգի։ Դէճեւրուն արտայայտութիւնը ցոյց կու տայ, թէ անոնք լաւ կերած ու լաւ խմած են։ Բոլոր նայուածքները ուղղուած են դէպի աջ, ուրկէ բան մը կը սպասուի։

Կը լսեմ ճիշեր, աղապակներ, հայհուշներ եւ յանկարծ դիմացի կողմէն եւրեւան կու դան յիսուսի չափ երիտասարդուհիներ։ Տասնեակ մը ոտակոններ, մտրակներով զանոնք կը քշեն դէպի բացատին կեդրոնը։ Կը զգամ, որ այս վայրին մէջ պիտի պատահի բան մը, սոսկալի ու սրտամօլիկ դէպք մը։ Սրիւնդի մը սուր ու մեղամաղձոտ ձայնը կ'իշխէ բոլոր աղմուկներուն վրայ։ Մարդերը, որոնք կը ծափահարէին, հիմա կ'արձակեն ուրախութեան ոռնոցներ։

— Օ՛հ, պարեցէ՛ք, կեաւուրի աղջիկներ։ Պարեցէ՛ք, — կը պոռայ ձայն մը մութին խորերէն։

Եւ մտրակները կը սկսին շաշել խումբին շուրջ, զոր կը հրեն դէպի բացատին կեդրոնը։ Գլուխներն կախ, մաղերին թափած միջուկ գօտիները, գառնուկներու հօտի մը պէս դիւրար հրելով, կը կծկուին իրարու վրայ, կը ջնան պատնէշ մը կանդնել իրենց անմեղութեամբ՝ իրենց աւելի աւար քոյրերուն։

Մարդերէն մէկը ոտքի կ'ելլէ քթը՝ ջալով։ Կը մօտենայ խումբին եւ կը բաժնէ երիտասարդուհիներէն մէկը, կը քշէ առջեւ եւ յանկարծ վրան խոյանալով՝ կը պատռէ անոր հաղուստները։ Եւ զո՛ր

կ'արձակէ անմարդկային ճիշ մը, հա-
լածուած երէի մը աղաղակը: Կը փորձէ
վերադառնալ իր հօտին դէրկը, կորսուել
անօր մէջ՝ պահելու համար իր մերկու-
թիւնը: Ուրիշ մարդիկ ոտքի կը կանգնին
կատղած: Կը նետուին միւս հայուհիներ-
ուն վրայ եւ կը պատեն անոնց հա-
ղուստները: Յիսուն երիտասարդուհիներ-
ը մերկ են հիմա: Կարմիր բոցով խա-
րոյիլ արիւնով կը ներկէ իրենց մարմինն
սպիտակութիւնը, որ տակաւին ոչ մէկ
նշանած տեսած է:

Մընզը, սաղը եւ թմրուկը եռանդով
կը նուազեն պարի եղանակ մը: Մտրակ-
ները կը շաշին ու անգութօրէն կը խած-
նեն մերկ մարմինները եւ իմ յիսուն քոյ-
րերու կը սկսին քայլել իրարու ետեւէ խա-
րոյիլն շուրջ: Իմ յիսուն անմեղ ու ան-
պաշտպան քոյրերու: Անոնք կը կոչուէին
Աշխէն, Անահիտ, Գայեանէ, Զապէլ,
Տիգրանուհի եւ Սեղա...

— Պարեցէ՛ք, պարեցէ՛ք, կեաւուրի
աղջիկներ, ուրախացուցէ՛ք ձեր սրտերը:
Այսօր ա՛յնքան պայծառեցինք ձեր եղ-
բայրներէն, ա՛յնքան դանկեր ճգնեցինք
ձեր ներքաններուն տակ, որ ձեր մկան-
ները յոգնած են: Ա՛յնքան փորեք ճեղ-
քեցինք ձեր յղի մայրերէն եւ քոյրերէն,
որ ձեր թեւերը անդամալուծուած են
այլեւ: Պարեցէ՛ք, պարեցէ՛ք, որպէսզի
մոռնանք վաղուան սպանդները, որ ե-
րէկուրէն ա՛լ աւելի ահաբեկ պիտի ըլ-
լան:

Մտրակները կը շաշեն, մարդերը
ծափ կը դարնեն, հարբած արիւնով եւ
վաւառութեամբ եւ քրինզը կ'աղաղա-
կէ, կ'ողբայ ու կը հեկեկայ լուսնի ան-
մեղ լոյսով օծուած խաւարին մէջ:

Ուրոյիլն բոցերը կը նուազին զգա-
լաբար, բայց ոչ օք կը մտածէ զայն
հրահրել: Հոն, ծառաստանէն անդին, կը
գուլակեմ զոյրութիւնը ցաւատանջ ու ող-
բացող ամբոխի մը:

Հիմա իմ յիսուն քոյրերու կը պարեն
իրենց քսան միլիոն դահիճներուն հա-
մար, մերկ՝ ինչպէս էր իրենց մայրը Ե-
ւա, երբ զատուեցաւ Աղամի կողէն: Եւ
մէկիկ-մէկիկ դետին կ'իյնան յողնած ու

պարտաւոր: Եւ այդ պահուն, մարդ-
դաղանները կը խոյանան ու կը յօշոտեն
այս անշարժ մարմինները, մինչ խարոյ-
կը կը մեռնի եւ լուսինը իր դէմքը կը
ծածկէ զգուանջով:

Կատգած եմ անկարողութեանս պատ-
ճառաւ: Գլուխս կը դարնեմ ծառին կար-
ծըր կոնդին, ժայռը կը փորեմ հղունդ-
ներով: Ա՛հ, եթէ դէնք մը ունենայի.
մէկիկ-մէկիկ կը սպաննէի այս անասուն-
ները եւ կը մեռնէի հպարտ ու ժպտուն:
Քոյրե՛ք, ներեցէ՛ք ձեզի, որ մեռնեք
ձեզմէ առաջ: Ներեցէ՛ք, որ ձեզ առան-
ձին ձգեցինք մահուան եւ տառապանքի
ճամբաներուն վրայ: Ո՛վ անդամահատ-
ւած մարմիններ, ձեր աղաղակները կը
կորսուին դիշերուան անտարբերութեան
մէջ, մինչ ձեր դիակները կը հոնդան
զարմացած հովերուն հեա եւ տնդները
կը փորեն ձեր աչքերը ու շերտ-շերտ կը
հանեն ձեր մկանները:

Դէմքիս վրայ կը փուրիմ չթքնելու
համար աստղերու լոյսին վրայ, որոնք
անամօթաբար կը լուսաւորեն այս տե-
տարանը:

Այդը չէ մոռնար իր հերթը: Արեւը
կը բարձրանայ պղծուած կապոյտին մէջ:
Բացառը ամայացած է: Միայն խորոյ-
կին մոխիրները կը վկայեն, որ դիշերուան
դէպքերը կը պատկանին իրականութեան:
Հոն, ճամբուն կողմերէն կը բարձրանայ
յանկարծ վայնասուն մը: Կը նահանջեմ
ու կրկին կը մազլլիմ բլուրին կողմ ի
վեր եւ կրկին աչքերուս առջեւ կը տա-
րածուն ծառաստանը եւ մօտակայ լայն
տարածութիւնները: Ճամբուն վրայ կը
քայլէ միաւոր ոտտիկաններու ջոկատ մը,
եւ կը քակուի կծիկը մահուան կարաւա-
նին: Մեռած շունները կ'արթննան: Այլիս
ձանձրացած ու զգուած են մարդկային
միւ ուտիկէ: Երկնցած բակերու պատին
շուքին տակ, անոնք չեն հաջր ալլելու:

Բազմութիւնը կ'անցնի լուռ՝ բլուրին
քովէն: Մայրեր եւ քոյրեր, մեծ պապեր
ու թոռնիկներ: Ինչո՞ւ կը քայլեն անդա-
դար, ինչո՞ւ զիրենք բերած են մինչեւ
այս կողմերը, երբ այնքան առիթ կար
զանոնք ոչնչացնելու մահուան ճորդուն

մէջ: Իրենց առջեւ կայ Տաւրոսին պատ-
նէշը, յետոյ կը սկսի անծայրածիր անա-
պատը, ուր բուսիկ վաշկատունները կը
սպասեն ովասիսներու դռներուն առջեւ
յափշտակելու համար հայ մանուկները:
Բաժան-բաժան եզած սողունի մը
պէս կը քալէ դիակներու կարաւանը: Ա-
րեւը իր ճանկերը կը մխրճէ գանկերուն
մէջ եւ մտրակները կը յաջողին այս կը-
մախքներէն միտի շերտեր փրցնել տա-
կաւին: Մտրակի իւրաքանչիւր հարուա-
ծը շոյանք մըն է իրենց մարթին համար:

Ձիաւոր ոստիկաններու յետապահ
շոկատը կը յառաջանայ աւելի դանդաղ-
ութիւն: Ձիաւորները թէպէտ կը լազակրա-
տեն ու կը ծխեն, սակայն մասնաւոր
գրադում մըն ալ ունին, զոր կը կատա-
րեն կամովին: Անոնց միերուն սմբակնե-
րը վարժուած են գետին չգլչելու, այլ կը
ծանրանան մանուկներու կուրծքերուն եւ
գանկերուն վրայ: Մայրերը, որ ճամբուն
վրայ կը ձգեն իրենց գաւակները, չեն
տեսներ ինչ որ կ'անցնի կը դառնայ: Ե-
րեսուն հատ են: Ոստիկաններէն մէկը կը
ձամբէ գանոնք: Քիչ մը անպիսն ուրիշներ
ալ պիտի ըլլան, այնպէս որ, միերը պի-
տի շարունակեն իրենց ներքանները հո-
ղին շղպցնել:

Կ'իջնեմ բլուրէն ու կը վազեմ զէպի
բացատը: Գետինը ցանուած են խորկը-
ւած սիսեռներ: Մէկիկ-մէկիկ կը հաւա-
քեմ գանոնք ու կ'ուտեմ: Ու կը շարու-
նակեմ փնտուել: Նեխութեան հտը առած
է ամբողջ աշխարհը: Մտերը կ'ըլլան
աւելի ցանցաւ: Խուլ ժողով միշտ լսելի
է: Կը գտնուիմ բարձր տափաստանի մը
վրայ: Այլ կողմս կը սկսի խորունկ ձոր
մը: Գարշահոտութիւնը եւ ժողովը կու
դան այդ ձորէն: Շուրջս՝ ոչ մէկ շնչող
էակ: Կը շարունակեմ քալել դէպի ձորը:
Յանկարծ սաքս կը թաղուի հողին մէջ:
Կը նահանջեմ մէկու մը պէս, որ սաքսը
դրած է թակարդի մը մէջ: Հոնդիւնները
կը լսուին եւ հողը կը սկսի շարժիլ:

Սարսափելու պէտք չկայ: Նորու-
թեան մը առջեւ չեմ դռնուիմ: Մունկի
կու գամ եւ երկու ձեռքերով մէկ կողմ
կը քաշեմ հողը: Հոնդիւնը կ'ըլլայ աւելի

յատակ: Ահա ձեռք մը, ուս մը, գլուխ
մը: Երիտասարդ աղջիկ մըն է: Յիսուն
դոհերէն մէկը: Կը շնչէ տակաւին: Սա-
կայն, երբ կը փորձէ խօսիլ, բերանը կը
բանայ, միայն հոնգիւն մը կը լսուի:
Շուշը կ'իլլէ կողորդին վէրքէն: Կը նա-
յիմ աչքերուն մէջ: Կը խաշակնքեմ, որ-
պէսդի գիտնայ աղագութեան: Կը հասկը-
նայ ու կը ժպտի: Կը խօսիմ, բայց ու-
ղածը ուրիշ բան մըն է: Աչքերը չեն հե-
ռանար աչքերէն: Կը հասկնամ միտքը:
Կ'ըսէ կարծես:

— Եղբայր, երբ մը երգէ՜ ինձի,
հայերէն տխուր ու քաղցր մեղդի մը,
որպէսդի մոռնամ ցաւերս եւ քնանամ:

Եւ ես կ'երգեմ հայերէն տխուր ու
քաղցր երգ մը: Կրկին կը ժպտի, ողբ
մը կ'արձակէ, աչքերը կը գոցուին եւ
գլուխը կ'իջնայ ուսին վրայ: Ես կը
պառկեցնեմ իր հողէ անկողնին մէջ, իր
ընկերուհիներուն կողքին եւ հողը նե-
տեմ իրենց վրայ...

Տափաստանը կը վերջանայ ապառա-
տով մը, որ կը տիրէ ձորին վրայ: Ուղ-
ղամիդ ապառաժէն ետք կը սկսի զօրաւոր
զառիթափ մը, որ կը վերջանայ կանան-
չութեան մէջ: Անցնող կարաւանէն հոս
մնացած են միայն քանի մը ցնցոտիներ:
Գարշահոտութիւնը չեմ զգար, սակայն
հոնդիւնները եւ ողբերը երթալով աւելի
լսելի կը դառնան: Ոտքերուս տակ ար-
եան հետքեր կան: Ապառաժին կողերէն
արիւն կը հոսի դէպի վար: Եւ զառիթա-
փին վերջաւորութեան կը նշմարեմ մութ
զանգուածներ: Դիակներ են կիներու, ե-
րեխաներու, որոնք գիղուած են ձորին
յատակը: Անոնք որ միայն վերաւոր-
ւած են, սկսած են մազլիլ դէպի վեր:
Կառչելով թուփերուն եւ արմաւենիներուն
Շատեր տեղ մը չեն կրցած հասնիլ, եւ
երկու ձեռքերով կառած ժայռի մը, կը
սպասեն, որ ազատարար մը դայ իրենց
օղնութեան: Բայց չեն պոռար, չեն կան-
չեր: Արիւնը, որ հոսած է հազարաւոր
մարմիններէ հաւաքուած հեղեղի չորցած
հունին մէջ, լճացած է տեղ-տեղ եւ մի-
լիոնաւոր ճանճեր, պիծակներ, մթնոյններ,

կարծենք, օձեր, որդեր, շնագայլեր, բորենիներ, դայլեր, անգղներ ու բազաներ, օրերով մասնակցած են այս առասպելական խնճոթին:

Յանկարծ ժխտը մը կը պայթի աջ կողմէս: Կը նախանջեմ ու կը պատասպարւիմ: Խուժան մը մարդերու եւ կիններու, որոնց կը հետեւին հարիւրաւոր մանուկներ: Մօտակայ գիւղերու թուրք եւ քիւրտ բնակիչներն են, որոնք մասնակցելէ ետք ոստիկաններու կազմակերպած ջարդին, հիմա կու գան կողոպտելու դիակները: Կարծես այսքան թալանէ եւ կողոպտուէ ետք, կարելի ըլլար արժէքաւոր բան մը գտնել այս մեռելներուն վրայ: Ծնագաղլը ինչ ընէ, երբ առիւծը կը քալէ առջեւէն:

Իսոյ լաւ պրպտողը միշտ ալ կրնայ արժէքաւոր բան մը գտնել դիակի մը վրայ: Ոսկի ակռայ մը մոռցուած բերնին մէկ անկիւնը, ոսկեգրամ մը պահած կիներու առաստ մաղերուն մէջ,

Թանկագին քար մը, որ տակաւին կը մնայ ստամոքսին մէջ:

Եւ վայրագ մաքրագործումը կը վերջսկսի: Բոլորը մէկ կը թաւալին ձորին յատակը եւ կը սկսին խուզարկել եւ մորթաղերն ընել դիակները: Այնքան ճարտար են այս գործին մէջ, որ կը յաջողին աղաղակներ խլել այս մեռելներէն:

Ամբողջ օրը կը մնամ կծկուած թաքըստոցիս մէջ: Վերջապէս, արեւը մայրը մտնելէ անմիջապէս ետք, կը վերագառնան իրենց գիւղերը: Կը տանին ինչ որ մարդու մարմին չէ, մինչեւ իսկ ամէնէն աղտոտ քուրջերը:

Մեռելները հիմա կը քնանան ձորին մէջ՝ ամբողջովին մերկ: Մերկ՝ մինչեւ իրենց խեղճ մարմիններուն ներսիդին: Մարդերը՝ իրենց կուրծքերը փորուած կացիններով, եւ կիները՝ իրենց արգանդը քրկտուած գանակներով, որովհետեւ այս հրէշները կը յուսային հոն պահուած գտնել անդին հարստութիւններ:

(Շար. 9)

Ն. 2.



ԱՄԷՆՕՐԵԱՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Միջերկրականեան խոնաութիւնն է քաղաքին ճշտութեամբ.
Համբարներն կարծես զիգերս են սառած.

Կէս միլիոն մարդիկ,
Կարծես չեն սիրեր,
Կարծես չեն ասեր,

Երկնակամարը
Ո՛հ, որքան է ցած...

Նաեւրիա ~ Պիաֆրա.
Սեւ հաքիզոններ
Վայրագ տեղով մը
Կը կարմրին

— Տիբրոյիթ:

Թում ձոնզը կրֆով ինչ որ երգ կ'երգէ:

Մաշած երթիւն մը.
Ժամգատ պատերէն
Հին երկինք մը կը դիտեմ,
Որ ազգի մ'ամբողջ
Հայեացքը տնի:
Յուշեր՝
Պատկերապիտի
Տակաւ մոռացուող
Իրր ժապաւէն
Արեւան մէջ, լուռ՝
Ցաւ մը կը ծաւեն...

✽

Գիշեր մը ամբողջ
Այգիքան արեւներ իմ աչքերուն մէջ
Քաղաքին խառնած քայլերս մինակ
Զիս յատկանշող
Բառեր փնտռեցի...

Գիշեր մը ամբողջ
Այգիքան արեւներ իմ աչքերուն մէջ
Քաղաքին խառնած քայլերս ծարաւ
Փորձեցի զգալ
Երգը լռութեամբ...

Գիշեր մը ամբողջ
Այգիքան արեւներ իմ աչքերուն մէջ
Քաղաքին խառնած քայլերս որբի
Փորձեցի դէմք մը
Անպայման սիրել...

Շուրթներս
Հերման քիւրեղներ էին
Եւ դող չունէին...

ՖԻԵՍՏԱՆ...

ՄԱՏՈՆԱ...

Գիշերը իր մեզի քողը սահեցուց
Եւ փողոցներէն խեղ հոսանքի պէս
Ֆիեստան պոռթկաց :

Դիմակներ իրենց անջիւղ գոյութիւնը ծածկեցին :
Խամաճիկները իրենց դերով,
Հրմշտկեցին,
Խմբացին,
Իմ առջեւ, իմ ետ...
Եւ
Ոսկեհիւս իմ քուրջերով քալեցի գիմով... :

Լոյսեր ահռելի դարձաներով
Պատռեցին խաւար խորքը անհունի :
Ցրունցաւ մուծը :
Գինին յանգեցաւ :
Լալ մնացին՝
Արուեստական արքանեակներ,
Դիմակներ համր :
Եւ խուլ,
Խաւ կանչերը Ֆիեստայի :

Մթնշաղը կը կաթէր դառնութիւն մը կոպերուս :

Կին մը :
Մօտեցաւ, վայրագ կանչ մը աչքերուն
Հին գիմետան մը մուր սեմեակներէն... :
Ժանգոտ կամուրջ մը :
Կանգնեցաւ վրան :
Հին, արեւահամ մեղեդի մը բիրտ
Կը բարձրանար խենթ,
Կամուրջի տակէն... :

Դռը մը տեղագին
Սրունքներն յուզեց՝
Կառչեցաւ կուրծքին,
Մաւերուն, շունչին,
Մատներուն միջին,
Որ հիւանդագին
Կիրճով պարեցին,
Քրտնեցան կրճուտ
Կրճուտ հեւքերով... :

Ֆիեստան կորաւ :
Կորան դիմակներ, լոյսեր, հրթիռներ... :
Մնաց միայն ան՝
Դիւթիչ մերկութեամբ
Պարով իր վայրագ
Մերկ
Մերկ Մատնան... :

Յ. ՊԵՐՊԵՆՆ

ՍՈՒՐԷՆ ՍԱՆՆԵԱՆ

ԴԵՊՔԵՐԸ ՋՕՐՋԸԶ ԽՄԻՉՔԱՐԱՆՈՒՄ

ԴԻՋԻՆ ԵՒ ՌԻՐԵՆՆԵՐԸ

Dizzy Terry-ն եւ Baby Face Jerry-ն մեր քաղաքից չէին: Նրանք մի այլ քաղաքից էին եկել, ուր Դիպի Թերին gangster-ական իր խումբն էր ունեցել, իսկ Բէյքի Ֆէյս Ջերին նրա խորհրդականն էր եղել կամ նման մի բան:

Այն քաղաքում ուր «գործելիք» է եղել Դիպի Թերիի խումբը, «գործելիք» է եղել նաեւ Gigolo Georgio-ի gangster-ական խումբը:

Ջարլին ինձ պատմում էր, որ այդ երկու խմբերը կառավարի Հակառակորդներ են եղել միմեանց հանդէպ: Երկու կողմից էլ տեղի են ունեցել սպանութիւններ, դաւադրութիւններ եւ մատնութիւններ: Սակայն, Հակառակորդ կողմերը դիտակցելով, որ այդպէս շարունակել անկարելի է, որոշում են համադրանկայութեան Հասկացողութեան գալ եւ այդ ուղղութեամբ էլ բանակցութիւններ են սկսում: Ակզբնական խորհրդակցութիւնների համար Դիպիի խմբից բանադնաց է նշանակւում Բէյքի Ֆէյս Ջերին, իսկ Ջիգոլո-ի խմբից՝ նրա օգնականներից մէկը: Նրանք էլ համաձայնում են երկու խմբերի «գաղաթների» մի ժողով հրաւիրել եւ որոշում են այդ ժողովի վայրն ու ժամանակը:

Ջարլին ինձ պատմում էր, որ երբ Դիպին լսում է «գաղաթների» ժողովի մասին, ուզում է այդ ժողովի գումարումը չեղեալ յայտարարել, վախենալով, որ ժողովի ժամանակ Ջիգոլոն կը սպանի նրան, բայց յետոյ տեղի է տուել:

«Գաղաթների» ժողովը տեղի է ունեցել շքեղ մի հիւրանոցի մի առանձին ճաշարանում: Ոստիկանութեան ուշադրութիւնը չգրաւելու նպատակով, այդ ժողովին ճաշկերոյթի տեսք են տուել: «Գաղաթները» նստած են եղել երկար սեղանի երկու կողմերում, դէմ-դիմաց: Նրանց աջ ու ձախ կող-

մերում նստել են նրանց օգնականները, ձեռքներն ասորհանակի վրայ պահած, իր սպասաւորները բերել են բոլոր ուտելիքները եւ խմիչքները, ժողովականները սրահի դուռը փակել են ներսից եւ «գազաթներին» օգնականները հերթով ճաշակել են բոլոր ուտելիքները եւ խմիչքները, իրենց առաջնորդներին զերծ պահելու համար երկուստեք կասկածուող թունաւորումից։

Վերջապէս Ջիզուօ Զօրլիօն բարձրացրել է բաժակն եւ ասել.

« — Մեր կեանքում արտառոցութիւններ չատ են պատահում։ Դրանցից մէկն էլ մեր այս ժողովն է։ Մի քանի օր առաջ՝ ես, ո՛ւր որ պատահէի, պիտի շան-սատակ անկէ մէկին, որը վախկոտ է, նենգ է, ստոր է եւ մատնել, բայց այսօր նրա հետ նոյն սեղանի շուրջն եմ նստել... Բարեկեար Դիդի... »։

Ջիզուօ-ի «տղաները» ծափահարել են իրենց առաջնորդին։

Գլխարկը ծոծրակին հրելով (նա երբեք զլխարկը զլիկց չէր հանում) բաժակ է բարձրացրել նաեւ Դիդին ու ասել.

« — Այ՛ն համաձայն եմ, որ մեր կեանքում արտառոցութիւններ չատ կան։ Դրանցից երկրորդն էլ այն է, որ ես, Դիդի Քերիս, նոյն սեղանի շուրջն եմ նստել մէկի հետ, որի անունը Ջիզուօ է... Ամէն ոք գիտէ, թէ ինչ նշանակում է Ջիզուօ... Բարեկեար Ջիզուօ Զօրլիօ... »։

Հադիւ է Դիդին վերջացրել իր խօսքը, երբ նրա տղաները բարձրաձայն ծիծաղել են եւ ծափահարել իրենց սրամիտ առաջնորդին։

Ի զարմանք ամէնքին՝ Ջիզուօ Զօրլիօն էլ է ծիծաղել եւ դառնալով իր օգնականներից մէկին, բարձրաձայն ասել է.

« — Դիդին չի կարողանում ինձ ներել, որ ես նրա սիրուհին ձեռքիցը խլել եմ։ Այդ աղջիկն, գիտե՛ս հօ, ինչքան որ զեղեցիկ է, այնքան էլ որոմիտ է... Նա բաներ է պատմում Դիդի մասին, որ ես ծիծաղից, յատակի վրայ թաւալելու եմ տալիս »։

« — Ջիզուօ, — ասել է Դիդին, — ամէն մարդ գիտի, որ այդ աղջիկը՝ ... է... »։

« — Մի՛թէ, — իբր թէ շատ լուրջ զարմացել է Ջիզուօ Զօրլիօն, — իսկ ես գիտեմ, որ այդ աղջիկը քեզ հետ վարուել է, ինչպէս կամակոտ տիրուհին իր բթամիտ շան հետ... »։

« — Ջիզուօ... », — բացադանչել է Դիդին եւ ձեռքը տարել գէպի ատրճանակը։

« — Դիդի... », — շուշէլ է Ջիզուօն եւ արդէն պատրաստի ատրճանակը պարզել նրա վրայ։

Այդտեղ իրենց տեղերից վեր են թռչել Բէյրի Ֆէյս Զերին եւ Ջիզուօյի օգնականը եւ «գազաթներին» ականջներին բան են շնչացել։

« — Օ. Կ. » — ասել է Դիդին, ձեռքը հեռացնելով ատրճանակից։

« — Օ. Կ. », — ասել է Ջիզուօն, արհամարհանքով իր հակառակորդին նայելով, եւ ատրճանակը գրել է զրպանը։

Այդ ժողովի օրակարգի միակ հարցն է եղել «Վէնտյանական» մի համաձայնութեամբ մրցող կողմերի միջեւ քաղաքը բաժանել, այսպէս կոչուող «աղղեցութեան տարածութիւնների» այնպիսի մի ճշգրիտ բաժանում, որ, նոյնիսկ ամէնից անշան փողոցներն աղղեցութիւնների իրենց ենթակայութեամբ պարզուած լինեն այդ համաձայնութեամբ։

Չարլիի պատմելով, չնայած ժողովի ատելութեամբ յաղեցուած մթնոլորտին, այնքան, որ ամէն վայրկեան կարող էր սպանդի վերածուել այն,

բայց եւ այնպէս այդ համաձայնութիւնը կայացուել է եւ պաշտօնակիրն, այն է՝ Դիդիէն եւ Ջիզուօն, նոյնիսկ համարուել են :

Սակայն, այդ համաձայնութիւնն երկար չի տևել: Մի գիշեր Դիդիէն զողաներից մէկը սխալմամբ, թէ լրահասկան միտումով՝ մտած է եղել Ջիզուօյի տարածութիւնները, եւ հենց նոյն գիշերն էլ սպանուել է, Ջիզուօյի բրոյերին կողմից :

... Ի պատիւ սպանուածին, Ջիզուօն ծաղկեպսակ է ուղարկել, ինչպէս եւ իր բրոյերիցն երկուսին ներկայ լինելու իրենց ձեռքով սպանուածի թաղմանը :

Չարլիին պատմում էր, որ Դիդիէն վճռած է եղել անհետանալ թողնել այդ սպանութիւնը, բայց Բէյրի Ֆէյսը Ջիզուօն, որ Դիդիէն գլխաւոր խորհրդակցան է եղել, հակառակ է :

« — Բայ, — ասել է Բէյրի Ֆէյսը Դիդիէն, — անշուշտ վերջին խօսքը չունի է, դու ես որ պիտի ասես, թէ ինչ անել, ինչ չանել, բայց ես գտնում եմ, որ պէտք է հասուցանել: Այլ կերպ, նրանք կը մտնեն մեր սահմանները եւ ամէնքին էլ մէկ-մէկ մեր այդ աղայի մօտ կ'ուղարկեն: Մտածի՛ր, մենք կա՛մ պիտի հասուցենք կամ էլ լքենք այդքան տարածութիւնները, մեր իրաւունքները եւ հետանալ այս գեղեցիկ քաղաքից, որ այնքան դժուար է եղել մեր նկատմամբ... » :

« — Բէյրի Ֆէյս, — ասել է Դիդիէն, — հասուցել նշանակում է վերսկսել պատերազմը, իսկ մենք միայն մի քանի օր առաջ էր, որ խաղաղութիւն հաստատեցինք » :

« — Ձկայ խաղաղութիւն առանց պատերազմի, — ասել է Բէյրի Ֆէյսը եւ ինքն էլ զարմանալով իր ասածի վրայ, հպարտութեամբ միւս ցնդեր-ներին է նայել :

Ներկաները շահականալով, թէ ինչ ասաց Բէյրի Ֆէյսը, շատ են աղղուել: Մանաւանդ Դիդի Քերին :

Նա գլխարկը հրել է ծոծրակին եւ Բէյրի Ֆէյսին կարգադրել է .

« — Աւելի խելոք ծաղկեպսակ ուղարկիր, քան ուղարկել էր այդ Buster Ջիզուօն... Տղաներից երկու հոգի թող ներկայ գտնուեն յուղարկաւորութեանը... Դու ինքդ ներկայացիր Ջիզուօյին, եւ իմ անձնական ցաւակցութիւնները յայտնիր... » :

« — Բայց նա չարեց այդ վերջինը, — համաբժակուել է գիտել Բէյրի Ֆէյսը :

« — Եթէ Ջիզուօն վայրենի է, ապա մենք էլ վայրենի՞ լինենք », — բարկացել է Դիդիէն :

« — No, Sir ! », — պատասխանել է Բէյրի Ֆէյսը :

« — So, who will act... ? », — հարցրել է Դիդիէն :

« — Hairy Turk-ը », — ասել է Բէյրի Ֆէյսը :

« — Ես վստահութիւն չունեմ նրա նկատմամբ... Նա կարող է թըշնամու կողմն անցնել », — կասկած է յայտնել Դիդիէն :

« — Գիտեմ այդ մասին, — ասել է Բէյրի Ֆէյսը, — բայց թիկունքից խփելու մէջ Հէյրի Քուրթը եղակի է: Զիշդ է նրան վստահել չի կարելի, բայց այսօր նա մեր մարդն է: Յետոյ էլ այս գիշերուայ գործը նրա գործն է... Նեղ ընկած ժամանակ նա գիտէ կեղծել, շողորթիւ եւ բարեկամ երևալ... Հէյրի Քուրթը ե՛ւ լաւ նկնդ է, ե՛ւ լաւ թեկնածու, բայց » :

« — Good, good, — համաձայնել է Դիդիէն, — ուրեմն թող Հէյրի Քուրթը կատարէ... Եթէ յաջողի քսանհինգ դոլար իրեն նուէր տուր, իսկ եթէ ձախողի եւ փչացնի գործը, գիտես արդէն ինչ պիտի անես... » :

« — Yes, Sir !», — ասել է Բէյրի Ֆէյսը:

Հէյրի Թուրքը հենց նոյն դիշեր յետեւից խփել է Ջիզուլոյի գողանալից մէկին, եւ Բէյրի Ֆէյսից ստացել է քսանհինգ դոլարի նուէրը: Բէյրի Ֆէյսը միւս օրը մի խոշոր ծաղկեպսակ է ուղարկել ի պատիւ սպանուածին, եւ հենց իրեն, Հէյրի Թուրքին մի ուրիշի հետ ուղարկել է ներկայ գտնուելու յուղարկաւորութեանը, իսկ ինքը դնացել է Դիզիի անձնական ցաւակցութիւնները յայտնելու Ջիզուլոյին:

Երբ Ջիզուլոյի գողանալը Բէյրի Ֆէյսից վերցրել են նրա զէնքն ու տարել իրենց մեծաւորի մօտ, Ջիզուլոն ասել է.

« — Well, well, well, յոյս ունեմ, որ չես եկել նորից խաղաղութիւն հաստատելու առաջարկով...»:

Բէյրի Ֆէյսը, որ իր մէջ էր խտացնում դիւանագէտի, gangster-ի եւ բողոքական քահանայի յատկութիւններ, պատասխանել է.

« — Ո՛վ մեծագոր Ջօրջիօ, խաղաղութիւնը բարիք է, իսկ պատերազմը՝ չարիք... Անկցի՛ պատերազմը, կեցցէ՛ խաղաղութիւնը...»:

« — Պի՛նչո՛ւ ես եկել», — հարցրել է Ջիզուլոն:

« — Իմ առաջնորդ՝ Դիզի Թերին ինձ ուղարկել է իր անձնական ցաւակցութիւնները յայտնելու պատահածի համար, եւ վերջ տալու թիւրիմացութեանը, որ սկսուել է մեր միջեւ», — ասել է Բէյրի Ֆէյսը:

« — Գո առաջնորդը խաբարա ու նենդ մէկն է, — ասել է Ջիզուլոն, — նա սպանել տուաւ իմ լաւ տղաներից մէկին»:

« — Ո՛վ քաջ Ջիզուլօ, դուք ինչքան որ յանդուգն էք, այնքան էլ սուր յիշողութիւն ունէք, եւ չէք մոռացել անշուշտ, որ ուստի՛նք դուք եղաք, որ խախտեցիք հաշտութեան պայմանները», — ասել է Բէյրի Ֆէյսը:

« — Դուք մտել էիք մեր տարածութիւնները», — ասել է Ջիզուլոն:

« — Այդ թիւրիմացաբար էր կատարուել», — քաջատրել է Բէյրի Ֆէյսը:

« — Նախ ես չեմ հաւատում, որ այդ թիւրիմացաբար էր կատարուել, յետոյ էլ մենք չէինք կարող պարզել այդ», — ասել է Ջիզուլոն:

« — Խնդրում եմ մոռանալ անցեալը», — ասել է Բէյրի Ֆէյսը:

« — Նենդ ու ստոր Դիզիի հետ անցեալը չի մոռացուի... Կոխը կոխ է... Իսկ հիմա դնացէ՛ք այստեղից», — ասել է Ջիզուլոն:

« — Մեր այդ կոխը միայն ոստիկանութեան է ձեռնադրու», — ասել է Բէյրի Ֆէյսը եւ հեռացել:

Զ.

Ե Ր Ե Ք Ը

Այդ կռուի հետեւանքն է լինում, — ասաց Չարլին, — որ երկու խումբերի անդամները կոտորում են միմեանց ու ոչնչացնում այնքան, որ Ջիզուլոյի խմբից մնում է միայն ինքը՝ Ջիզուլոն, իսկ Դիզիի խմբից՝ Դիզին եւ իր զարտաքին գործոց նախարարը՝ Բէյրի Ֆէյսը:

« — Հիմա ժամանակն է այդ երեքին ձերբակալել եւ քաղաքում անդորր հաստատել», — խորհուրդ են տուել քաղաքի ոստիկանապետին:

« — Ոչ, — ասել է ոստիկանապետը, — ըստով այդ երեքն էլ իրար կը սպանեն կամ կը թողնեն ու կը հեռանան այդ քաղաքից»:

իրաւ, այդ խօսակցութիւնից մի քանի օր յետոյ Դիզին ասել է Բէյ-րի Ֆէյսին.

« — Ես հանգիստ չեմ կարող ունենալ, մինչեւ Ջիզզօնի մէջտեղից չիբ-րացուիք: »

« — Ես էլ նոյնն եմ, — ասել է Բէյրի Ֆէյսը, — Հետաքրքրական է, թէ ինչպէս ես ուզում անվախ եւ խորամանկ Ջիզզօնին մէջտեղից վերցը-նել... »:

« — Ես չէ, դու, — ասել է Դիզին: »

« — Ե՞ս, — իբր թէ զարմացել է Բէյրի Ֆէյսը, ձեռքով իր կուրծքը ցոյց տալով, — այդ մեծ պատիւ է ինձ համար, քոս, բայց դէժ է աւանդու-թիւններին եւ բարոյականութիւնը: Եթէ ես, նոյնիսկ, փորձելու լինեմ ա-նելու այդ, դու ինքզ պիտի թոյլ չտաս: Որովհետեւ թաղաւորների, աղը-ւականների, հարուստների ու քոսերի այրիների հետ միայն թաղաւորները, ազնուականները, հարուստներն ու քոսերն են որ ամուսնանում են: Նոյնն է նաեւ նրանց սպանութիւնների դործում: Եթէ մի թաղաւորի մի հասարակ մահկանացու է սպանում, ապա նա վիրաւորում է աշխարհի այլ թաղաւոր-ներին: Ասելու այն է, որ թաղաւորին թաղաւորն է սպանում, ազնուականին ազնուականը, հարուստին հարուստը, քոսին քոսը... »:

Դիզին թէեւ չափ է հպարտացել Բէյրի Ֆէյսի այդ պատուարի բա-ցատրականից, բայց սարսափելով Ջիզզօնին անձամբ սպանելու հեռանկա-րից, ասել է.

« — Անշուշտ, կասկած չկայ, որ ես գնահատում եմ թո իմ իրաւունք-ներին չխառնուելու հաւատարմութիւնը, բայց Ջիզզօնի սպանութիւնում ես քեզ արտօնութիւն եմ տալիս... »:

« — Բոս, — ասել է Բէյրի Ֆէյսը, — եթէ ես սպանեմ Ջիզզօնին, gangster-ական մեր արդարամիտ շրջանակներում դու կը կորցնես թո այդ-քան հեղինակութիւն վայելող անունը, երբ այդ անունը մեզ գեւ աշխարհ պէտք է: »

Այդ վէճը երկար է տեւել, որովհետեւ երկուսն էլ սարսափելիս են եղել Ջիզզօնի Զօրիշոյից: Վերջում համաձայնել են միասին սպանել:

Մի գիշեր, ժամը տասնմէկից յետոյ, նրանք գնացել են ու մտել Ջիզզ-օնի բնակարանն այն ժամանակ, երբ Ջիզզօնն նստած է եղել մի բազկաթոռի, ոտքերն երկարած է եղել յատակին եւ Դիզին սպաննելու մասին շատ մտա-ծելուց տարուած, քնած է եղել:

Դիզի եւ Բէյրի Ֆէյսի ուղածն էլ հենց այդ է եղել: Բէյրի Ֆէյսը ա-տրըմանակը հանել է ու ոտքերի փայրի վրայ դնացել կանգնել բազկաթոռի յետեւում: Իսկ Դիզին մօտեցել է Ջիզզօնին, ձեռքը քնքուշութեամբ քսել է նրա երեսին, իբր թէ նրա սիրուհիներից մէկն է եւ կանացի շաքարային ձա-նով ասել է.

« — Ջիզի, darling, էլ հերիք է քնես... Արթնացիր մի քիչ զուար-ճանա՞ք... »:

Ջիզզօնն էլ իրապէս ենթադրելով որ իր երեսը շոյող ձեռքը իր սիրու-հիներից մէկի ձեռքն է, առանց աչքերը բացելու բռնել է այդ ձեռքը եւ սկսել է համբուրել, բայց Դիզիի հոտն ու համը առնելով՝ ձեռքը յետ է հրել իրե-նից եւ աչքերը բացելով ու Դիզիին տեսնելով ասել է.

« — Անտանելի հոտ ունի թո ձեռքը, Դիզի: Մի՞թէ դու չես լուաց-ւում... »:

Դիզին էլ թէ.

« — Ես հօ Զիզօյ չեմ, որ ամէն օր լուացուեմ: »
 « — Well, well, well, — ասել է Զիզօյն, — քիչ առաջ երազիս ես քեզ
 ստեղծեցի, Դիդին: »
 Դիդին էլ թէ.
 « — Այսօրուայ երազի հակառակն է կատարում, Զիզօյ... »:
 Զիզօյն էլ թէ.
 « — Ի՞նչ օր է այսօր, Դիդին: »
 Դիդին էլ թէ.
 « — Այսօր Ուրբաթ է, Զիզօյ: »
 « — Ուրբաթ օրուայ երազն ինչ տեղն ու տեղն է կատարում, Դիդին,
 — ասել է Զիզօյն եւ ձեռքը տարել ու ծոցի զրպանից հանել է ատրճանակը:
 Բայց ինչ այդ վայրկեանին ծոծրակի վրայ դրացել է մի այլ ատրճա-
 նակի փողի պող ծայրը եւ ապա Բէյբի Ֆէյսի հրամանը.
 « — Զինքդ նետի՛ր եւ ձեռքերդ վեր հանի՛ր: »
 Զիզօյն դէմքը նետել է եւ ձեռքերը վեր է հանել:
 Բէյբի Ֆէյսը բռնել է Զիզօյի ձեռքերը, ծալել է մէջքի վրայ եւ հը-
 րամայել:
 « — Ելի՛ր տեղիցդ: »
 « — Well, well, well, — ասել է Զիզօյն եւ դառնալով Դիդին հար-
 ցրել է, — Հիմա ի՞նչ էք ուղում անել ինձ հետ... »:
 « — Ի՞նչ ես կարծում, ի՞նչ կարող եմք անել... Ուղում հնք, որ վաղը
 թերթիքը իրենց առաջին էջերի վրայ դնեն նկարդ... » — ասել է Դիդին:
 « — Բա՛հ, — զարմացել է Զիզօյն, — մե՛ղք, որ ես պիտի չտես-
 նեմ... »:
 « — Այո, ցուալի է, որ պիտի չտեսնես, — արտասացել է Բէյբի
 Ֆէյսը:
 « — Թաւալին իմ լուսանկարը չտեսնելը չէ, այլ այն, որ ինձ սպա-
 նողն այս ստեղծած առնէտը պիտի լինի, — Դիդին կողմն արհամարհանքով
 նայելով, Բէյբի Ֆէյսին ասել է Զիզօյն:
 Դիդին շատ է վիրաւորուել, որ իր օգնականի ներկայութեամբ Զիզ-
 օյն իրեն ստեղծած առնէտ է անուանել եւ Բէյբի Ֆէյսին ասել է.
 « — Պիտի բռնիր սրա ձեռքերը, որ ես նրան ցոյց տամ, թէ ով է ստե-
 լծած առնէտը... »:
 « — Go on, boss, — ասել է Բէյբի Ֆէյսը եւ Զիզօյին խորհուրդ տը-
 ւել, — Be a brave boy Gigie... »:
 Դիդին մօտեցել է Զիզօյին, աջ բռունցքը տարել ու բերել ու մէկ էլ
 հարուածել Զիզօյի ձախ կողքին.
 « — Թըրը՛մի... »
 « — Ասա՛... », — աղաղակել է Զիզօյն եւ ցաւից ծալուել երկտակ:
 « — Հա՛, հա՛, հա՛, — քրքջացել է Դիդին:
 « — Հա՛, հա՛, հա՛... », — քրքջացել է Բէյբի Ֆէյսը:
 « — Ուղիւր սրան եւ հիմա էլ աջ կողքն իմ կողմը դարձրու, — Բէյ-
 բի Ֆէյսին հրամայել է Դիդին:
 Բէյբի Ֆէյսն ուղղել է Զիզօյին եւ այս անգամ էլ նրա աջ կողքն է
 դարձրել Դիդին կողմը:
 Դիդին ձախ բռունցքը տարել է ու բերել ու մէկ հարուածել Զիզօյի
 աջ կողքին.
 « — Թըրը՛մի... »:

« — Աստ՛, — ճշացել է հէզ Զիզօյօն եւ այս անգամ փոխանակ երկ-
տակ ծաւուելու, աչքերը յառել է առաստաղին։

« — Հա՛, հա՛, հա՛...», — ծիծաղել է Դիզին։

« — Հա՛, հա՛, հա՛...», — ծիծաղել է Բէյրի Ֆէյսը։

« — Դու պիտի բռնի՛ր սրա ձեռքերը», — Բէյրի Ֆէյսին հրամայել է Դիզին։

« — Ապահով մնա՛, բոս», — վստահեցրել է Բէյրի Ֆէյսը։

Դիզին մտածել-մտածել է ու մէկ էլ գլուխը դէմ է առել Զիզօյի փորին եւ ալ բռնեցըով հարուածել է նրա ձախ կողքին, իսկ ձախ բռնեց-
քով նրա աջ կողքին։ Հարուածել է հինգ անգամ, առաջ անգամ, քսան անգամ,
քառասուն անգամ, ութսուն անգամ։ Քառասուն անգամ ալ ձեռքով, քառա-
սուն անգամ էլ ձախ ձեռքով։

« — Թը՛մփ, Թը՛մփ, Թը՛մփ...»։

Զիզօյն սկզբում ցուից ճշացել է ու տնքացել, տնքացել ու ճշացել,
մինչեւ որ նրա ձայնն աստիճանաբար նուաղել է եւ կտրուել վերջնականա-
պէս։

Դիզին էլ յոգնած իր հարուածների գործողութիւնից, գլուխը յետ է
քաշել Զիզօյից, կանգնել եւ հեռապատ հարցրել է։

« — Զիզօյ, էլ ինչո՞ւ չես գոռում...»։

Զիզօյն, որ այդ ժամանակ գլուխը վստահօրէն դրած է եղել Բէյրի
Ֆէյսի ուսին, ձայն չի հանել։

« — Զիզօյ, ես քեզ հրամայում եմ որ խօսես», — բարկացել է Դիզին։

« — Բոս, — ասել է Բէյրի Ֆէյսը մէկ ձեռքով Զիզօյի պահելով,
իսկ միւս ձեռքով նրա գլուխը շոյելով, — աշխարհիս վրայ, ոչ մի ուժ այլեւս
Զիզօյին չի կարող խօսեցնել...»։

« — Նա ինձ արհամարհում է», — չի հասկացել Դիզին։

« — Ո՛չ, բոս, — ասել է Բէյրի Ֆէյսը, — նա այլեւս ոչ արհամար-
հում է, ոչ էլ ռեւէ մէկին յարգում է այս աշխարհում... Նա գնաց միա-
նալու իր խմբին...»։

« — Մի՛թէ, — շփոթուել է Դիզին, — բայց թող տեսնենք...»։

Հազիւ Բէյրի Ֆէյսը ձեռքերը հեռացրել է Զիզօյից, Զիզօյն թրբմփ
ընկել է ու երկարել յատակին։ Պառկել է այնքան անշարժ, որ կարծես իր
ամբողջ կեանքում միշտ այդպէս պառկած է եղել եւ երբեք ոտքի վրայ չի
եղել։

« — Ես չպիտէի, որ իմ հարուածներն այդքան ուժեղ են», — հպար-
տացել է Դիզին։

« — Ո՛չ, բոս, — բացատրել է Բէյրի Ֆէյսը, — Զիզօյի կողքերը
թոյլ էին։ Ամէն մարդ մի քանից թոյլ է լինում։ Ես, օրինակ, սրտից շատ
թոյլ եմ։ Շուտ եմ զգացում...»։

« — Ես էլ նոյնն եմ», — ասել է Դիզին։

« — Գիտեմ, — ասել է Բէյրի Ֆէյսը, — գնանք, բոս, գնանք, թէ
չէ մեր երկուսին շատ ծանր է կանգնել այստեղ ու խեղճ Զիզօյին դի-
տել...»։

« — Խեղճ Զիզօյ... Թիչ առաջ ապրում էր... Իսկ հիմա... Դրժ-
ւոր է հաւատալ, որ այլեւս այնքան սիրելի Զիզօյն չկայ...»։ — վշտացած
ձայնով ասել է Դիզին։

« — Բոս, — ասել է Բէյրի Ֆէյսը, — քո այդ վիշտը գրաւում կ'ար-
տայալսես, իսկ հիմա մեզ պէտք է զնալ այստեղից...»։

« — Գնա՛ւ, դնա՛ւ, — բարկացել է Դիդին, — ի՞նչ է, դու անտառնե-
րում մեծացած անկիրթ վայրենի՞ ես. հանիք գլխարկդ եւ մէկ բոսէ՛ յարգիք
աննման Զիւզուլին... » :

Նրանք հանել են իրենց գլխարկները, դրել են իրենց սրտերի վրայ,
իջեցրել են գլուխները: Յետոյ էլ նրանք իրենց գլխարկների եղբերով սրբել
են իրենց աչքերը եւ ծիծաղելով ու իրար հրհրելով թողել ու հեռացել են:

✱

Դիդի Թերին եւ Բէյրի Ֆէյս Ջերին ոչ միայն George's խմբաբանում,
այլ ամէն տեղ, ուր ես սրանց տեսնում էի, միշտ միասին էին:

Բէյրի Ֆէյսը երեւի քառասունն անց մէկը պիտի լինէր: Նրա անդոյն
աչքերը ոչինչ չէին արտայայտում, բայց դէմքը մանկական էր եւ երեւի այդ
պատճառով էլ «Բէյրի Ֆէյս» էր կոչւում: Ամառ ժամանակ նա գլխարկ չէր
ծածկում, բայց միշտ էլ կոկ հագնւած էր լինում:

Հակառակ Բէյրի Ֆէյսին, Դիդին լաւ չէր հագնւում: Ամառը նա փո-
ղոց էր դուրս գալիս թեքասեան վերնապսակով միայն, բայց միշտ էլ
գլխարկով:

Ս. Ս.

(Շար. 2)



ՄԻՔԱՅԷԼ ԹԱԻՐԻՉԵԱՆ

ՉԱՐԵՆՑԱՊԱՏՈՒՄ

(ՀԱՏՈՒԱԾ ՄԸ)

Գլխահակ, լռին ու մտամուր
 Կ'ընթանայ ահա
 Մարդկային մարմնի ստուեր մը տարտամ:
 Սրտայնոց վշտի վերքեր ահաւոր,
 Կառչած են սրտին տղրուկի նման:
 Կ'ընթանայ լռին Աքովեանն ի վեր,
 Որպէս անծանօթ ու օտարական՝
 Իր հարագատ տան,
 Եւ ամբաստանած որպէս դաւանան՝
 Իր գազափարին եւ երկրին աւեր:
 Ուրացուած գրչի ընկերներէ բիր,
 Ու հալածական՝
 Ղեկավարներէ երկրին նորակազմ,
 Եւ անբազմալի անհատ մը որպէս՝
 Բռնութեան անոնս,
 Աքովեանն ի վեր կը քալէ տխուր,
 Հիասթափ, վհատ, ընկճուած ու լուռ:
 Լարած են անարգ զաւեր իրեն դէմ,
 Դարանակալ մութ դէմքեր խղածածկ,
 Նետուած են գրչի ընկերներն արդէն,
 Սո՛ւտ բամբասանքի ծանր լուծի տակ,
 Ողջը՝ քանտի մէջ անպաշտպան, անխօս,
 Մեռեալներն՝ անյայտ, հասարակաց փոս:

Ու տապալած են բոլորը մէկ-մէկ,
 Կայծակնահա՛ր, դէ՛գ
 Կաղնիներու պէս հաստարմատ ու սէգ:
 Մնացեր է ինք անընկեր ու որբ,
 Նախանձի՛, քէնի՛, կիրքերու դէմ բորբ:
 Հեռու չէ գուցէ ժամն իր օրհասի.
 — Ո՛ւր էք, ընկերներ... Բակս'նց, Աղաթի՛...
 Ո՛ւր էք հեռաւոր ընկերներ անդարձ,
 Մարդ-գազաններու ձեռքով յօշոտուած,
 Նե՛նգ դաւադրութեամբ մեռա՛վ վաղահաս,

Դուք հայրենիքի փառաբան նոխագ... —
 Բայց լուռ է շուրջը եւ ինք գազազած,
 Կ'ընթանայ տրտում Արովեանն ի վեր,
 Աչքին մէջ արցունք, հոգին մէջ մա'ղձ,
 Ու շրջապատը մահագոյժ ստուեր:
 Եւ կը հետեւին ֆայլերուն մոլոր,
 Առեւանգուած իր ընկերներուն
 Ուրուականները՝ քափօք առ քափօք,
 Ու մահատեսիլ անոնց աչքերէն՝
 Կը ցայտէ վրէժ, կը թռչէ արիւն,
 Գարձած մէկական զայրույթի գեղեցիկ:
 Քանի՜ անգամներ փալած եմ մէկտեղ,
 Արովեանի այս գառիվարն ի վեր,
 Քանի՜ դիրքի վրայ եւ շեռ ֆանի՜ հեղ,
 Մարտիկներու պէս ֆաջ ու անվեհեր,
 Փղած են գրչի պայֆարնէ՛ր անեղ,
 Գրչակներու՛ դէմ,
 Գանձաններու՛ դէմ,
 Փարիսեցի կե'ղծ գրողներու դէմ...
 Մնացեր է ինք սակայն հիմա որք,
 Նախանձի՛, քէնի՛, կիրքերու դէմ բոքք:
 Թշնամիներն իր տարֆած են արդէն,
 Վա'տ յաղթանակի ցնձուքեան համդէս,
 Տմարդօրէն գինք մետելով կրկէս
 Մա'րդ-գազաններու դէմ անապաւէն,
 Եւ անմարդկային հրեռանաճով մը սին,
 Կը սպասեն գանին ողջակիզումին:

Ու մտամուրը կը շրջի տխուր,
 Փողոցներուն մէջ երկրին նայիրի,
 Մինչ իր ֆայլերուն կ'ընկերակցին լուռ,
 Առեւանգումներ, սարսափներ յղի:
 Ուղղած են ժահրոտ սուտերներ սուրսայր
 Իր պայծառ հակտին՝ գրիչներ վարձկան,
 Որոնք անձնական շահերու համար,
 Հայրենիքի դէմ դարձած դաւաճան,
 Որոնք դարձնեցին խօսքեր թումարոյր,
 Գրչեղբայրն իրենց արակելով չիժձ,
 Որոնք մախանձի մուրէն դարձան կոյր,
 Եւ թէ սանձարձակ խեղաքարներ գիծ,
 Քիմախնդրօրէն, խոր տախտաքեամբ,
 Ստորագրեցին սեւ գրպարտագիր,
 Յզվացած իրենց յաղթանակով վառ,
 Հիւսեցին անարգ դաւեր ու ռնիր:
 Եւ անարգեցին չարամտութեամբ,
 Մարդկային հոգւոյն ձգտումներն ազնիւ,
 Երբ գրագէտներ անկեղծ, անկաշկանդ,
 Ազգային հարցեր յուզեցին անքիւ:

Եւ ձեռնարկեցիմ իսկայն ամռնց դէմ,
Ազգադաւ արշաւ, խեղագար սլայֆար,
Ու կեանքը դարձաւ դժոխք ու գեհեն,
Եւ խողովազուեցան մարդիկ անհամար:
Գանձանք՝ք ելան հսկաներու դէմ,
Ձիւնուած քնամոխով եւ մատնըչուքեամբ,
Եւ հարուածեցին հսկան կոնակէն,
Յաղթանակեցիմ սակայն վատութեամբ,
Անպարտը ինկաւ վատ եղբոր ձեռամբ:
Սե՛ւ զաղբը բռնեց Սիպրիոյ մամբան,
Առեւանգումեն՝ք եղան անհամար,
Որքա՛ն արժէքներ իջան գերեզման,
Բայց մարմինն անօնց չունեցաւ դամբան.
Որքա՛ն արժէքներ եղան ողջակէզ
Արեւի մահն հոգիներն երկէզ,
Որքա՛ն արժէքներ ծախի մէջ ազօտ
Հայրենիք «կորան» շիրիմի՝ կարօտ:

Այսպէս Բակունցն իսկ չարաշուք մի օր,
Գրչակիցներու խումբով մը համակ,
Հրացանագարկ ինկաւ վիրաւոր.
Ու մարմինն անօնց որպէս շան դիակ,
Ձեռնասայլերով բշտեցան, ափսո՛ս,
Նետուելու համար հասարակաց փոս:

Մնացեր է ինձ անպաշտպան ու սրբ,
Բորենիներու ցատումին դէմ բորբ:


Ու մտաւորը կը շրջի տխուր,
Օ՛, միթէ ա՛յս է երկիր Նայիրին...
Քաւութեա՛ն նոխա՛ւ իմ ընկերներ՝ք բիւր,
Օ՛, միթէ ա՛յս է երկիր Նայիրին...

.
Թունաւորուած է մթնուրտը ողջ,
Օ՛, միթէ ա՛յս է երկիր Նայիրին...
Ամէն կողմ մահուան ստուերը դողդոջ
Օ՛, միթէ ա՛յս է երկիր Նայիրին...

.
Ամէն կողմ արիւն, ամէն կողմ սարսափ,
Օ՛, միթէ ա՛յս է երկիր Նայիրին...
Ողջակէզ ընկերքն իմ պատրանաթափ,
Օ՛, միթէ ա՛յս է երկիր Նայիրին...

.
Մնացեր է ինձ սակայն եիմա ո՛րբ,
Նախանձի՛, բէնի՛, կիրքերու դէմ բո՛րբ:

Մ. Թ.



«ՈՒՌՈՒՑԻԿԱՅԻՆ ԴԱՄԱՐ»



Պարենցի կենսագրութեան մասին վախճանը բանաստեղծութեամբ պատկերացնող գիտացի էջն է՝ հաշիւահայտ և ներկայացնել «Երկիր Նայիրի» վեպին շուրջ ծագած հին վէճին առիթով Կ. Սասունիի մէկ նշմարը, որուն բնութիւնը յայտնաբերուի զարմանքով և հասարակաց ճշմարտութիւն։

Կ. Սասունի կը նշէ Պարենցի երկու գիտապէսը եւ կը պնդէ, թէ գեղեցիկօրէն Պարենցը աւելն կնքող կ'արշաւատի պարսկացիի սիւնին գամել խառնուի տարաւում ազատագրական շարժումը։ Բանաստեղծ Պարենցը, ընդհակառակէ, կը հասկնի զեպի տրուելը։

Նրբաւոր հանուած նոր փաստերը եկան վերանայելու, որ Պարենց իրապէս չկրցաւ արուեստագէտ տրուելու իր հոգիին կոմունիստական նկատմաներ պարտադրելու։ Այս ուղղութեամբ պերճաբան է մեզի փառք վերջին արձանագրութիւնը, պատմարան Աշոտ Յովհաննիսեանի գրած իր մէկ նամակը, ուր ըստ վեպը գրելու երկար ընդմիջում-

ներով եւ ամբարշտ մաս-մաս յանձնել տպագրութեամբ։ 2-րդ երատարակութեան համար ես նիւնովին կը սրբագրեմ վեպը, կ'անեմ մի շարք կրթատուներ, կ'աւելցնեմ մի շարք հաստատանք՝ աւելի ռաւացիկ պարճնելու համար բաշխելիքն արածը — մի խօսքով յայտնեմ, որ այդ շտկումներէն յետոյ վեպն մի բանի կը նմանի։

Պարենց կրցա՞ւ հուշագրիկ դարձնել բողոքականներ արածը, յաջողեցա՞ւ վեպին տալ բուշխական գունաւորում։

«Երկիր Նայիրի»-ի վերջին հրատարակութեան (1966) ծանոթագրութիւնը կազմող Ա. Պաքարեանի հաստատումով։

Հիման շտկումներ, ինչպէս յայտնի է, Պարենցը ոչ վեպի 2-րդ երատարակութեամբ ծանանակ, ոչ էլ զրամից յետոյ։

Կը նշանակէ, թէ հակառակ ալ ու մտք տրած իր հաստատմաներուն՝ Պարենցի դրելու առաջ չէնայ՝ գուցէ ուսուցիկ դարձնելու համար բողոքականներ արածը, մնաց բացարձակ միաներուն դործը, անհամայն խոստովանուած պատմական ճշմարտութիւնը, ուրիշ խօսքով՝ արուեստագէտի իր ապրումներուն առջեւ ընկրկեցաւ հաշիւահայտի կոտակեցականը։

Մեր Հայրենիքին մէջ օտար ուժերու ներխուժման վաղաշարժ որն իսկ, Պարենցի հոգիին մէջ սկսեալ ներքին այս վէճը, իր հոգիին մէջ ուժգին եղաւ համայնափայլին ու հայուն բախումը, որուն հետեւանքները ծանօթ են ամէնուն։ Պարենց չկրցաւ հակումներ ընել, յարգարել ինքզինք իրեն ամբողջական համայնափայլ եւ առօր համար լատ սուղ վճարեց...

Ուշագրաւ է ճշտատուն ատրի առաջ դրած Սասունիի նշմարը։

ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑԻ

«ԵՐԿԻՐ ՆԱՅԻՐԻ» ԵՒ

Մ Ա Ս Ի Ն



«Յառաջ»-ի Դեկտեմբեր 13-ի թիւով աժիտիումը տպուած էր այն դրական վիճարանութեան, որ տեղի ունեցաւ դրական ակումբի կողմէ Հայաստանի ներկայ դրականութեան մասին: Այդ աժիտիումին մէջ զետեղուած էր նաեւ իմ խօսքը, շատ համառօտ, ուր յիշատակելով Չարենցի գլխաւոր պորձերը, բոլորած էր «Վաճառանք» «Երկիր Նայիրի»-ն...

Այս «Վաճառանք»-ը կը ստիպէ զիս աւելի որոշ խօսիլ «Երկիր Նայիրի» վէպի մասին, դրական սխալ դատողութեան մը վերադարձին ազատ մը նալու համար:

Ե. Չարենցը ժամանակակից Հայ մեծ բանաստեղծներէն մէկն է, գերազանցապէս իր բանաստեղծական ստեղծագործութիւններով: Ես ինչպէ՞ս չեմ տէր ու ըսէի «Վաճառանք», որ մեծ է իր «Երկիր Նայիրի» վէպով, այդ պիտի նշանակէր, որ Ե. Չարենց մեր աչքին կարեւորութիւն ստացած է իր այդ արձակով, եւ որ այդ գրուածքը անոր ստեղծագործութիւններուն գլուխգործոցն է:

Մինչդեռ, ես պարզապէս ըսած եմ մանաւանդակէ մըն է «Երկիր Նայիրի»-ն, ուր կառուցուած Չարենցը պարտուած է արաւստագէտ Չարենցէն:

Հեղինակը ձգտած է իր այդ վէպով պատկերացնել իտէալը՝ «Երկիր Նայիրի»-ն (Տաճկահայաստանը) ազատելու համար: Սկիզբէն մինչեւ վերջը դուք կը տեսնէք Չարենցի երկու դիմագիծերը՝ կոմունիստը և բանաստեղծը, որոնք անողոք մրցման մէջ կը մնան: Կոմունիստ Չարենցը ամէն կերպ կ'աշխատի պարսականքի սիւնին դամել քառասուն տարուան ազատագրական շարժումը: Բանաստեղծ Չարենցը, ընդհակառակն, կը հակի գէպի արուեստը: Իսկ արուեստը կը սիրէ հարազատ գոյներ, հողերանական իրական վիճակներ, կենդանի տիպարներու բնական յուզումներ: Ու երբ գիրքը կը վերջանայ, դուք կը տեսնէք որ կոմունիստ Չարենցը պարտուած է, իսկ բանաստեղծը մնացած է իր իսկ ստեղծագործած գլխաւոր տիպարներուն հետ, անոնց հերոսական մահուան վայրկեանին:

Շատ հեղինակներ որոշ ծրագրով ճամբայ կ'ելլեն վէպ գրելու համար: Սակայն յաճախ պատահած է, որ գլխաւոր տիպարները որոշ աստիճանի մը

Հասնել է հոգի, քննադատող ուժ մը կը դառնան, ու հեղինակները կը քաշեն իրենց ետեւէն, տրամաբանական վտիճանի մը յանդէմու համար: Այսպէս ալ պատահած է Ն. Զարենցին: Ան իր գրքի վերջաւորութեան, չէ կրցած Մալուի Համօն (վէպի գլխաւոր հերոսը — դուք հասկցէ՞ք Դաշնակցութիւնը) իր ուղած տեղը տանիլ, այլ պարզօրէն հետեւած է Մալուի Համօնին, արեւստադէտի մը կատարեալ հրութեամբ:

Ողբերգութեան լրումն է: Երկիր Նայիրին հեղինակին կողմէ ներկայացուած է իբրեւ Մալուի Համօնի ճշգրիտ մօրմօքը, զարտի հիւանդութիւնը: Երկիր Նայիրին Վեւ կայ եւ չկայ... Հակասական որոնումներէն հոգի, Նայիրին (Տաճկահայաստանը) կը մնայ Մալուի Համօնի ուղեղային մշուշը, հոգիի արհաւիրքը:

Ահա ստիքը (Թուրքը, Կ.Ս.) կը մօտենայ Նայիրեան քաղաքին (Կարս), ու դուք կը սպասէ՞ք, որ հեղինակը բոլորովին նսեմացնէ իր հերոսը, զայն իսկապէս արժանի ընելու իր ճշգրիտ մշուշը: Մինչդեռ հակառակն է, որ տեղի կ'ունենայ:

— Ինչ էր մնում ամեյլալ Մագուի Համօնին: Փախչի՞լ, մնա՞լ, բայց ինչպէ՞ս կարող էր, ասացէ՛ք խոնարհ, փախչիլ Մագուի Համօն, կարո՞ղ է արդեօք փախչիլ մարդու հոգին եւ իր սեփական հարազատ մարմինը քողմել երի քերամ... Եւ Մագուի Համօն մնաց, ոչ միայն մնաց, այլեւ իր վրայ վերցրեց բովանդակ իշխանութիւնը, մի վերջին ճիգ եւս, գերմարդկային մի ճիգ գործադրել կամեցաւ, Մագուի Համօն, որ փրկի դուրսիւնը, թայց դուրսիւնը չփրկուեցաւ... — ուշ էր, բաւականին ուշ էր արդէն եւ դուրսիւնը չէր կարող այլեւս փրկել եւ ոչ մի, թէկուզ եւ գերմարդկային ճիգ...:

Ահա ի հոգի, կը սպասէ՞ք վերջին վայրկեանին, խաղաղական փախուստի մը ականատես ըլլալու... Բայց Զարենց ստիպուած է ըսել այն՝ ինչ որ կատարուեցաւ... —

«...Բայց այդ չէ ետեւեւ, ընթերցող, էտեւեւ այն է, որ բացի, ուրեմն, այդ բազում ժողովրդից, քաղաքում մնացին... ընկել վառօդեանը, Սերգէյ Կասպարիչը, քծիչը եւ Մագուի Համօն... մինչև վերջին վայրկեանը մը մնացել էին իրենց դիրքերի վրայ, մնացել էին բերդում եւ հեծն քերդում էլ գերի էին ընկել ռաբին — ընկել էին թշնամաւ արեւմաբաւ ձեռքը: ...Մի դաժան ճեղքամտութեամբ յամձնել էին ճրանց հարդանքի ձեռքը, որոնք եւ — երեւակայում է՛ք, — կայսիլ էին ընկ. վառօդեանին, Սերգէյ Կասպարիչին, քծիչին եւ իրան՝ Մագուի Համօնին... Ասում են, մի տախտակ են փակցնում երրորդ հեռագրասիւնի մէջտեղ, Մագուի Համօնին գլխովի երեւել, ու գրում են վրան, երեւակայեցէ՛ք Նայիրեան տառերով:

«Մ. Հ. Ա. Ն.

«Որ նշանակում է Մագուի Համօն Արմայ Նայիրի»

Վերջակէտ եւ վերջ:

Մենք գիտենք, սակայն, որ այդ տառերը կը նշանակեն «Մահ Համօնի պատուր Նորհատեանի»... Ալ չճանաչանք հերոսական եւ եղբարական այս իրական անցքերուն վրայ: Կանգ առնենք, ինչպէս բանաստեղծը կանգ առած է:

Բայց կայ վերջաբանը...

Ըստ երեւոյթին, բանաստեղծը իր գործը լրացնել է հոգի, վերէն վար կարդացած է իր «պոետական վէպը», ու տեսած որ կոմունիստ Զարենցը իր նպատակին չէ հասած, եւ ահա, ստիպուած է վերջաբան մը կցել վէպին: Կարդալէս կոմունիստ հեղինակը փրկելու համար:

Հեղինակը իր վերջարանին մէջ կը մասնագործի Հոգեբանական ուս-
լանքէն։—

«...Թող մերեմ իմա քժիշկներն, եթէ գտնեն քր չի կարելի ազն-
գային մարմնով աւ սրտի հիւանդութիւնը համեմ վարդկանց միջից անցանքի
եւ լանցերմերի օգնութեամբ»։

Այդ մորմունքն ու սրտի հիւանդութիւնը Հայրենիքն է, երկիր Նայիրին,
Գիտակցելով, որ այդ մորմունքը անքաններով մարդոց սրտէն կարելի չէ ու-
կել-հանել, Ձարհնց կը գիմէ կոմունիստական դիրքին ճանապարհին։—

«...Արիւն, միշտ է, շատ է հոսել, սակայն կեանքամի մնացածներն ար-
դէն ազատ են վերայիշեալ ազնոգային մարմնովից, աւ սրտի հիւանդութիւնից,
եւ այսօր իրենց երկիրն են շինում...»։

Այսինքն Դաշնակցական Հոգեկան մորմունքի՝ «Երկիր Նայիրի»-ի տեղ,
տառերի պարզ փոփոխումով՝ բուլղաբեկեան «Երկիր Նայիրի»ն է, որ շինու-
մն։ Այո՛, նոյն Հոգեկան մորմունքի եւ սրտի հիւանդութեան շարունակութիւ-
նը, ուրիշ ոչինչ։

Յետ դրութիւններն ու վերջարանները շատ սովորական են բուլղաբեկեան
մթնոլորտի մէջ անպարզ Հայ Հեղինակներու մօտ աւ ատիկա խեղճուկ միջոց
մըն է բարեյուսութեան վկայական ուսանալու կոմունիստական կուսակցու-
թենէն, իսկ էութիւնը կը մնայ Հակած իրականութեան եւ արուեստի կողմը։
Մէր գեղատեսիլը այս վերջինի մասին է։

Կ. ՍԱՍՈՒՆԻ

27 Դեկտեմբեր 1929



3. ԳԵՂԱՐԴ

Տ Ա Ղ Ա Ն Դ Ի Մ Ա Ս Ի Ն (*)

Ի՞նչ է *առաջը*: Բնածի՞մ քե՛ս ստա-
ցական երևույթ մը: Ի՞նչ չափով կ'օգ-
նէ գրողի՞ն՝ վտանգավոր գրողէտ դառ-
նալու:

Գրեցերու մէջ կը կարդանք տաղան-
դաւար գրողէտներու մասին: Կը ըսենք
բնմերէն՝ տաղանդաւոր բանաստեղծնե-
րու երկերուն արտասանութիւնը: Գրա-
կան քննադատներ եւ գրականութեան ու-
սուցիչներ, դասագրքերու թէ՛ դասարան-
ներու մէջ, յաճախ կը հաստատեն տա-
ղանդին ներկայութիւնը այս կամ այն
գրական երկին մէջ: Սակայն երբ պահ
մը կանգ կ'առնենք եւ կ'ուզենք ստուգել
տաղանդին բնոյթը, ճանչնալ անոր իս-
կութիւնը՝ ան կը մահէ մեր մտանքէն,
մեր մտածման մակարդակէն՝ անդիկի
պէս:

Յաճախ ալ, գրողի մը յատկութիւն-
ներուն բարենիչ մը ճարեչու մտահոգու-
թեամբ՝ առանց խղճահարութեան՝ մէկը
միւսին տեղ կը գործածենք՝ «չնորհալի»,
«տաղանդաւոր», «հանճարեղ» մակդի-
րները, յաճախ չկարենալով ճշգրտել
սահմաններն եւ սահմանումները:

Շփոթ է տարազը գրողէտներու եւ ի-
մաստասէրներու մտքին մէջն ալ: Վիճ-

թոք Հիւկոյի համար տաղանդաւոր գրո-
ղը կամ բանաստեղծը ան է, որուն ճակ-
տին դպած է Աստուծոյ մատը: Իսկ Լե-
ւոն Շանթ կը հաստատէ թէ՛ «եթէ ար-
ժէք մը ունիմ այն է թէ՛՝ կրցած եմ Ժո-
զովորդիս հոգիին մէկ կողմին արտա-
յայտելը հանդիսանալ»:

Բանաստեղծական պատկերաւոր ար-
տայայտութիւն մըն է Ֆրանսացի մեծա-
նուն քերթողին բերած տարազը եւ ձեւով
մը կ'ընդունի տաղանդին երկնատուր բը-
նոյթը: Իսկ հայ մեծագոյն թատերագրին
սահմանումով՝ ցեղային ժառանգութիւն
մը, առաւելաբար ստացական հարստու-
թիւն մըն է տաղանդը:

Կ'անդրադառնանք անմիջապէս, որ
հակոռակայ բեւեռներու միջեւ կը տուա-
տի մեր միտքը: Տաղանդը ստացական է
թէ՛ բնածին: Եւ եթէ շարունակենք տա-
ղանդի մասին քաղուածք մը ընել հայ թէ՛
օտար զանազան հեղինակներու սահմա-
նումներէն՝ դարձեալ անելի պիտի մատ-
նուրենք: Բառարաններէն ցաթող լոյսն ալ
պիտի չկրնայ անհետացնել «տաղանդ»-ը
պարուրող տարտամութեան մշուշը:

Գիտնականներն ալ աւելի չափով մը
պիտի չկրնան օգնել մեզի: Այսպէս, ա-
մերիկացի գիտնականի մը յատկանշական
ոտ՝ արտայայտութիւնը. «Տաղանդին է

(*) «Բագին»-ի երոշակամ գրայքներէն մէկն է
տօնկա, զոր երատարակութեամ կու տամք այսօր.
Երբ՝ աւելի քան երբեք՝ այս աւ փոխ տաղանդի
միւր յայտնումներով՝ սրբապգծութիւններ կը կա-
տարուի գրական երազարանի վրայ:

առ հարիւրը կազմուած է ներշնչումով, իսկ 96 առ հարիւրը՝ քրտինքով»:

Ըսել կ'ուզուի, թէ տաղանդի գրսեւորման մէկ շնչին (49%) տոկոսը ինքնեկ է, իսկ մեծ տոկոսը (96%) աշխատանքով ձեռք կը բերուի:

Այս բոլոր հաստատումներուն հաւանակ՝ հիմնականը կը մնայ քողարկւած: Ի՞նչ է տաղանդ կոչուած երեսոյթը: Առանձին կարողութիւն մը, յատկութիւն մըն է, եւ գոյութիւն ունի տաղմին մէջն իսկ, թէ կեանքը, ընկերութիւնը, որոշ պայմաններու տակ, կ'օժտեն ենթակայ մը տուեալ կարողութեամբ: Ընդունակութիւն մըն է, կարողութիւն մը, թէ կարողութեանց համագումար մը, որ կ'իրադրուի եւ շօշափելի կը դառնայ ստեղծագործական արդասիրով մը:

Ներկայիս կատարուող հոգեբանական եւ դիտաբանական քննարկներ իսկ չեն յստակացուցած տաղանդի եւ հանձնարի վերաբերեալ իրենց եզրակացութիւնները:

Հոս չէ որ պիտի քննենք գործնական հանգոյցը՝ գոյի հարուածով մը:

Բայց անչա՛հ չենք նկատեր հարցին քննարկումը: Թերեւս գտնենք համոզիչ աստիճանաւորումը գրական արժէքներու դասաւորման, մեկնելով գրական վաստակի մը մէջ յայտնաբերուած եւ իրագործուած ստեղծագործական կարողութեանց, ունակութեանց ներկայութենէն: Յայնժամ, հնարաւոր դառնայ թերեւս ամէն գրող չլուալ նոյն ընդմիջումը: Ունենալ տուեալներ ու մանաւանդ՝ այս օրերուն հազուադէպ դարձած բարոյական արժանիքներ՝ խիղճ ու պարկեշտութիւն, զանազանելու համար հաստը բարակէն:

Բառին պարզագոյն բմբունումով՝ ի՞նչ է գրական երկ մը, եթէ ոչ՝ ստեղծագործութիւն մը: Գրադէտը, եթէ, ի հարկէ, արժանի է այդ կոչումին՝ ստեղծագործող մըն է անկասկած, եւ համաձայն իր ստեղծագործութեան սրտ-

կիծ՝ կը վաստկի համապատասխան բարենիշը:

Որո՞նք են, ուրեմն, գրական այն կարողութիւնները, որոնք զսպանակը կը հանդիսանան գրական ստեղծագործութեան, ու միաժամանակ որակ մը կ'ապահովեն տուեալ երկի մը:

Ա. ԶԳԱՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.— Ասիկա զգայութիւններ ընկալելու եւ զգացումներ ներապրելու եւ արտաբերելու կարողութիւնն է, եւ առաջին անգամով անհաղթելով՝ ստեղծագործական արարքին: Կապ ունի հեղինակներու զգայարտնայնութեան հետ: Այժ, քիթ, ականջ, մորթ կ'անցնին գործի եւ տեսնց բերած զգայութիւններն են որ մեր իմացականութեան կողմէ կը վերածուին զազափարհերու, իսկ երեւակայութեան կողմէ՝ պատկերներու:

Ուրեմն, ստեղծագործող մը ինչ բան որ տեսնէ աշխարհի երեսին՝ կը նայի տնոր յափշտակութեամբ, իբր թէ հրաշալիք մը տեսած ըլլար, կ'ըսէ Վիլլամս, իսկ էմիլ Զոպէ կ'աւելցնէ, խօսքը ուղղելով գրողին. «Բնութեան դիմաց պէտք է կանգնիլ նախնական ու թաքմ հոգիով, զայն դիտել, թոյլ տալ որ թափանցէ մաքէզ ներս եւ արթնցնէ ինչ գորաւոր եւ ճշմարիտ զգայութիւններ» (ինչպէ՞ս չիլէ Քաղանցաբի՝ «Ալեքսիս Զորպա»-ն):

Գրադէտին կը պահանջուի հետեւաբար՝ կատարեալ անկեղծութիւն ամէն բանէ առաջ, անկեղծութիւն ինքն իր հանդէպ ու նաեւ՝ չբնականութիւն:

Զգայութիւններու անկեղծութիւնը եւ բնականութիւնը ինքնին կ'առաջնորդէ զգացումներու անկեղծութեան: Գրադէտէ մը կը կը պահանջուի զգացումներու շեղմութիւն, որով՝ հաղորդակցութիւն ունենալ: Տակաւին, հին դարերուն, կիկերոն կը պատգամէր. «Եթէ կ'ուզես դիտլացնել՝ լաց դուռն ինքզ առաջինը»: Ոչ միայն զգացում ուրեմն, այլ նաեւ որոշ շափով յուզականութիւն, յուզական խառնուածք: Այսինքն՝ գրելը պահանջ մը, հոգեբանաբանական հարկադրանք մը պիտի ըլլայ գրողին մէջ, որպէսզի ժայթ-

քէ դուրս, դառնալով վկայանելը անկեղծութեան:

Բայց հոս օգնութեան պէտք է հասնի անհրաժեշտ քանակաչափ մը. չափի զցացումն է ատիկա: Սահման մը պէտք է դնել զգալութիւններուն եւ զգացումներուն, տեղին դործածել զանոնք, արլայէս դիտենք որ քիչ մը աւելի զօրաւոր արեւը կ'այրէ ցորենի արտերը եւ կը զրկուինք բերքի ամէն յոյսէ:

Զգացական հարուստ եւ հաւասարակշիռ ներաշխարհ մը ապահով հաստատադիր մը կը թուի տաղտնիքի գոյութեան:

Բ. ԵՐԵՒԱՆԿԱՆՈՒԹԻՒՆ.— Երեւակայութիւնը մարդկային այն կարողութիւնն է, որ ոչ միայն դուրսէն ստացուած պատկերները կը վերարտադրէ մեր մտքի պատտաւին վրայ, այլեւ զանոնք կը վնայակերտէ, կու տայ անոնց նոր կեանք ու յարաբերակամութիւն դէմ յանդիման աշխարհի ու բնութեան:

Ամէն մարդու մէջ կայ, չափով մը, այս կարողութիւնը, բայց արուեստագետ-գետ-գրողներին մօտ ան կ'առնէ անսովոր, գերազանց համեմատութիւններ: Ստանաւորաբար չափանիշը կը դառնայ կարծես բանաստեղծին (մեր մէջ՝ մասնաւորաբար Պ. Դուրեան, Գ. Վարուժան եւ Սիամանթո):

Բայց երեւակայութիւնը չ'արժեւորւի իր արտադրած պատկերներու առատութեամբ, այլ այլ պատկերներուն ներութեամբ եւ հանգիստութեամբ:

Օրինակ՝ չենք կրնար ըսել՝ «Կաշնիի պէս գեղեցիկ աղջիկ մըն էր», որովհետեւ կաշնիին առաւելարար ուժ եւ առնականութիւն կը խորհրդանշէ: Ասոր համար ալ, նոյնիսկ այլապէս յաջողակ գրողներ եւ բանաստեղծներ կը սայթաքին երբեմն պատկերներու կերտումին մէջ:

Բայց մանաւանդ նոյն պէտք է ըլլայ պատկերը իր տեսակին, իր յարաբերականութեան մէջ, ոչ թէ կրկնութիւն մը, ուրիշներէ փոխառութիւն մը: Երկսայրի սուր մըն է այս կարողութիւնը, որ վար-

պետ ձեռքերու մէջ ռակայն նուաճումներ իրագործել կու տայ ենթակային: Այս իսկ պատճառով Նիզարի կը գրէ. «Պատկերը պէտք է ըլլայ լոկ վերջին աստիճանը ճշդութեան, կամ աւելի ճիշդ՝ պէտք է ըլլայ նոյնիսկ զազափարը՝ կատարելութեամբ արտայայտուած»:

Նոր պատկերներով, նոր հանգիստութիւններով արտայայտուելը, այսինքն վառ երեւակայութիւն ունենալը որոշ երաշխիք է տաղանդի: Աւանց անոր փայլատակութիւններուն, երփնացողութիւններուն պիտի աղքատանային բազմաթիւ գրագէտներ ու բանաստեղծներ, Հոմերոսներ ու Տանթէներ, Հիւկոներ եւ Նարեկացիներ:

Գ. ԻՄԱՑԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Գրական կարողութիւններուն թերեւս ամենակարեւորը՝ իմացակամութիւնը՝ «մարդուն ամէնէն թանկագին հարստութիւնն է» կը հաստատէ Սք. Օգոստինոս: Այսինքն՝ բան մը նախընտրու, ապա զայն ըմբռնելու ուշիմութիւնը, առանց որու ոեւէ գրագետ պիտի չկրնար դատել իրեն ու մարդիկ, կեանքի երեւոյթները, եւ ընել նոր յղացումներ:

Բանականութիւն եւ գաղափարութիւն անհրաժեշտ են գրողին համար, որպէսզի կարենայ ճշգրիտ զազափարներ արտայայտել, իսկ այդ մտքերը պէտք է յատկանշուին նաեւ իրենց պոյժատութեամբ, խորութեամբ, ինքնատուրութեամբ:

Եթէ բանականութիւնը պակսի գրողի մը մօտ, որքան ալ հարուստ ըլլայ ան զգացական աշխարհով եւ երեւակայութեամբ, կրնայ Հիւանդագին հոգեվիճակներ միայն արտաբերել: Ի զուր չէ ըսուած, որ խենթութիւնը եւ հանճարը սահմանակից են իրարու: Բայց վերջինը կը տարբերի առաջինէն այն պատճառով որ՝ ստեղծագործող էակին միտքը կը համադրէ, նպատակի մը կը ծառայեցնէ իր կերտած պատկերները, ստացած զգայութիւնները, մինչդեռ խենթութեան պարագային անոնք կը մնան անկապակից, քառասին վիճակի մէջ:

Իմացականութիւնը, ուրեմն, գմբէթ

կը կազմէ, իր տիրապետութեան տակ կ'առնէ զգացական եւ երեւակայական աշխարհները, եւ ամուր պատուանդան մը կ'ապահովէ ստեղծագործական երկին, տաղանդին:

Հոս կանգ կ'առնենք պահ մը, գրական այս երեք կարողութիւններուն վրայ արագ կերպով աչք մը նետելէ ետք, ուր հարց կու տանք, թէ զգայարաններով հարուստ, երեւակայութեամբ բեքբի, իմացականութեամբ խոր եւ պայծառ գրագէտ մը կարելի՞ է հռչակել տաղանդաւոր:

Այս կը պատասխանենք անմիջապէս: Արդէն յաջողութեան մեծ երաշխիք է, երբ զգացական, երեւակայական եւ իմացական հարուստ եւ ներդաշնակ տարրերով լիացած է ստեղծագործական երկ մը: Բայց այդքանը բաւարար չէ տաղանդին տաղանդաւոր կոչելու անոր հեղինակը:

Օրկանական եւ ֆիզիքական աշխարհներու մէջ չնչին քանակութեամբ նիւթեր կան, որոնց բացակայութիւնը սակայն անկարելի կը դարձնէ քմիական բազմազանութիւն մը եւ տուեալ տարրանիւթեր միասնաբար նպատակի մը ծառայեցնելը, համադրութի իրականացումը: Օրինակ՝ տիպադրներու անհրաժեշտ դերը՝ մարտողութեան մէջ:

Այսպէս ալ գոյութիւն ունի գրական գաղափար մը, որ ճաշակ կ'անուանուի: Բնագրական նուրբ զգացում մը, որ յաճախ դատողութեան տեղը կը բռնէ, եւ նախաբերութեան ճամբով կ'առաջնորդէ հեղինակը իր ստեղծագործութեան:

Ուրեմն՝ զգայականութիւն, երեւակայութիւն, իմացականութիւն, առաւել ճաշակ, եւ մենք կ'ունենանք տաղանդաւոր գրողը:

Կը պատասխանենք, այս անգամ՝ այո՛: Այս կարողութիւններուն հաւասարաշուշտ, համադրուած ներկայութիւնը կը վկայէ հեղինակի մը մօտ, եթէ կ'ուղէ՞ք՝ օրինակաւ տուիք տաղանդին: Կարողութիւններ, որոնք կը փոխանցուին նոյնիսկ անհատէ-անհատ՝ ժառանգական զծով:

Հոս կրնանք հետաքրքրական փակագրի մը բանալ եւ յիշել դոնէ քանի մը արուեստագէտներ ու գրագէտներ, որոնց յետնորդները եղած են նմանապէս արուեստագէտ կամ գրագէտ՝ առաւել կամ նուազ յաջողութիւն արձանագրելով: Ձենք մտներ դերասաններու աշխարհը, ուր երեւոյթը աւելի յաճախադէպ է: Բայց կը յիշենք Պախերու տունը, որ ութ յաջորդական սերունդի մէջ 57 երաժշտագէտ առաւ, որոնց քանեօթը՝ տաղանդաւոր: Նկարչներէն՝ Պելլիքինները: Գրագէտներէն՝ Հայր եւ որդի Տիւմաները, Թուրթոնները, Քորնէյլիները, մեր մէջ՝ Զարգարեանները, Ա. Գառնիկները, Օլականները: Տաղանդի համեմատութեան հարցը չենք արծարծեր, այլ կը թուենք փաստը այն իրողութեան, որ գրական խառնուածքի եւ օրկանական տուիքներու ժառանգաբար փոխանցում մը գոյութիւն ունի: Կը յիշուի մասնաւորաբար, որ յուզական եւ զգացական խառնուածքներ մեծ չափով ժառանգական կրնան ըլլալ: Օրինակ՝ Պայրընի մայրը կըբոտ եւ կէս խենթ եղած է: Շիրէր իր ծայրայեղ զգայնաւորութիւնը մօր մէջ ժառանգած է:

Բայց, գրագէտ մը, որքան ալ ժառանգական նման յատկութիւններով աշխարհ դայ, տաղանդի կը տիրանայ միմիայն այն ժամանակ, երբ իր կարողութիւնները պողին ու արդատարբին: Եւ այդ կարողութիւնները կու տան բերք ու վաստակ, եթէ պակսի արիւժ օժանդակ մը, հզօր ազդակ մը, որ գրագէտին ալիքնսն է այս անգամ: Այլ խօսքով՝ ճիշդ ու աշխատանքը, պատրաստութիւնը, որոնք նախապայման կը նկատուին տաղանդի՝ շատերու կողմէ: Այսպէս՝

Այս լիարժեք պէտք է դիտանայ գրողը: Այս չի նշանակեր անշուշտ, որ օրը տասներկու ժամ նստի եւ մեքենագրէ խելապատիկէն բխածը: Այլ՝ ճիշդ մը թափէ միշտ յաղթահարելու դժուարութիւնները, ուղղելու սխալները, անողոք ըլլալ ինքն իր հանդէպ: Ըսուած է, իրաւագիտութիւն, որ քննադատ մը պէտք է նստած ըլլալ իւրաքանչիւր գրողի մէջ:

բ.— Սորվիլ գրելու արհեստը։ Գրական իւրաքանչիւր սեռ իր օրէնքները ունի, իր կանոնները։ Ասոնց իւրացումը խարխուլումներէ եւ վրիպումներէ կ'ազատէ գրողը եւ կը կաղապարէ անոր գրելու քննիւնքը։ Կաղապարը հոս առնուած է իր լաւագոյն իմաստով, այլ երբեք՝ կաշկանդումի։ Նոր կաղապարներ ստեղծելու համար անհրաժեշտ է ճանշնալ դասականները, «հին»ները։

գ.— Սորվիլ, իմանալ մանաւանդ լեզուի, իւրացնել, բիրեղացնել զայն։ Առանց պայծառ ու ճշգրիտ լեզուի՝ կարելի չէ լրել ու պերճիմաստ արտայայտուիլ, արիւն ու շունչ փոխանցել բառերուն եւ Պախազասութիւններուն։ Եթէ ոճը առաւելաբար խառնուածքի հարց է, ապա միայն սորվելով կը տիրացուի լեզուին, իսկ առանց լեզուի կարելի չէ կերտել ոճական արուեստ։ Լեզուն է մեկնակէտը գրականութեան։

Փոյ վաւերի բացատրութիւնը ծանօթ է, որ կ'ընէ թէ՛ գզայութիւնը կու գայ գրագէտին, ինչպէս կու գայ լուսանկարի փառին։ Բայց մութ սենեակ մտնել պէտք է, լուսանկարը երեւան հանելու համար։ Այսինքն՝ գրագէտին ալ ինքնամոխոխում, կեդրոնացած ճիգ պէտք է՝ ստացած գզայութիւնները, յղացած պատկերներն ու գաղափարները ստեղծագործական երկի վերածելու համար։

Եւ կեդրոնանալու համար անհրաժեշտ է որ, գրագէտը, շուրջը եռացող կեանքին մէջ՝ «անապատ» մը ստեղծէ ինքն իր համար, դռնէ որոշ ժամերու, որոշ օրերու կամ շաբաթներու։

Ծիւղէտ կը բացատրէ թէ ինչպէ՛ս կը տաղանայի, անքուն գիշերներ կ'անցընէ մարդոցմէ հեռու, գրական էջ մը աւարտելու համար։ Անտրէ Ժիւս կը պատգամէ թէ՛ կարծրութիւններ, խոշոնդոտներ վշրելով է, որ արուեստ կը ստեղծուի եւ ստեղծագործութիւնը կը ծնի։

Յարատեւութիւնն ու կամքը հզօրագոյն դարբիններն են տաղանդին, եթէ անշուշտ բնածին յատկութիւնները ներդրոյ են գրողին մէջ, ընկալիւալ սահմանադրումներով եւ տարազաւորումով։

Տաղանդաւոր բոլոր գրագէտները մեծ աշխատասերներ եղած են։

Կէօթէ կը գրէ. «Տարիներ կը դնեմ երբեմն՝ բան մը արտադրելու համար»։

Գրել, խոկալ գրածին վրայ, արտագրել, մաղէ անցընել ամէն մէկ բառ, միտք ու պատկեր, ի հարկին պատուել գրուածքը եւ նորը գրել։ Այսպէս երկնրւած են տաղանդի կնիքը կրող բոլոր մեծ երկերը։

Սենքիէվիէ եօթը անգամ գրի առած է իր «Յո՛ւ Երթասո՞ւր»-ը։ Յ. Օշական մէկ երրորդի վերածած ու ապա միայն տըպած է իր «Մակ Պտուկ»-ը։ Մանթէ վ. Թէքէեանի քերթուածներուն պատճառով, զորս տարիներով դրսեանին մէջ կը պտըտցնէր։ Կի Տը Մոփասան գոհը գնաց իր տքնալան աշխատանքին։ Հիւկօ, ամբողջ օրը ոտքի, կատաղօրէն կը գրէր ու գրած թուղթերը կը նետէր սենեակին մէջ ասդին-անդին։ Երեկոյեան, պտուրտէն վերադարձին, կը հաւաքէր բոլորը եւ այդ ատաղձով վերջնականօրէն ձեռն ու մարմին կու տար իր քերթուածներուն։ Ուրեմն, տաղանդը կ'ենթադէ նաեւ, եւ անպայմանօրէն, աշխատանք, պատաստութիւն, մտապաշար եւ մանաւանդ յարատեւութիւն՝ կատարելագործուելու ճամբով, արանց որու կէս-ճամբան կը մնայ գրող մը^(*)։

Այս կէտը, այսինքն գրական ընտանուր կարողութիւնները տաղանդի վերածելու համար աշխատանքի անհրաժեշտութիւնն է, որ նոր դուռ մը կը բանայ տաղանդի բնորոշումը։ Բնորոշ մեր մշտնադիւրսի ստացականութեան, այդ ստացականութեան տոկոսին ու արժէքին մասին։

(*) Ասոր համար է որ շխտաւմնայից գրողներ կ'ազդեցնեն սկիզբը, քրոնէ յաջալի կ'ամենատեղ, առաջի պէս։ Իրենց տաղանդը գործով գրական շնորհներ կը ցուցաբերեն, գորս չեն գարգացներ հետագային յարատեւ աշխատանքով։ Որքան ալ «ծոծալ» տաղանդը կը մնայ կիսատ, կիսափալ նւ հեղինակը կամգ կ'առնէ կէս-ճամբան։ Լ. Բաշալեանի օրինակը ցայտում է այս ազգութեամբ։

Եւ Հոս է որ կը հանդիպինք զրեթէ հակոտնեայ տեսակէտներ պաշտպանող դպրոցներու :

Արդարեւ՝ կա՛ն մտածողներ, որոնք չնչին բաժին մը կը հանեն տաղանդը բնորոշող վերոյիշեալ բոլոր տուեալներուն եւ չափազանց գերադաս արժէք մը կու տան ընկերային ազդակին : Հէօֆին, Լաքոմպ եւ ուրիշներ կը պնդեն, թէ դրական-գիտական եւ արուեստի ամէն յղացք ժամանակի մը, միջովայրի մը, կլիմայի մը եւ արդէն ստեղծուած քաղաքակրթութեան մը պահանջին արդիւնքն են : Ինչ որ բնածին է՝ չափազանց անորոշ է : Միջովայրը, կրթութիւնը կը կարգաւորեն ամէն բան : Թէն կը զրէ՛. Եւրոստի ամէն դործ տեղի միջովայրի եւ տուեալ պահու մը ծնունդն է : Կէօթէ, իր կարգին, կը խոստովանի. « Եւրոստի կ'անենք մեծ վարպետ մը, կը պնենք որ օգտուած է իր նախորդներուն դործերէն, եւ անոնց կը պարտի իր համբաւը : Ռաֆայէլները մէկ օրէն միւս օրը չեն բուսներ հողէն : Եթէ չօգտագործեն ժամանակակից յառաջդիմութիւնը մեծ բան չ'արձանագործիր ստեղծագործողներու հաշուին » :

Քիչ մը մեղմելով Տիւրխէյմեան դպրոցի ծայրայեղութիւնը, որ ամէն ինչ՝ կրօն, գիտութիւն եւ արուեստ զուտ հաւաքական պտղաբերում կը նկատէ, միւս կը զրէ՛. « Որքան ալ անհատական թուի՝ ստեղծագործութիւնը միշտ ալ հարկատու է ընկերային դուրսդիւրի (զոնֆիսեան) : Այս ըմբռնումով՝ ոչ մէկ ստեղծագործութիւն անհատական է, խորքին մէջը » :

Մեր Չարենցն ալ ուրիշ բան չ'ըսեր կարծէք, երբ կը պատգամէ. « Ժամանակիդ շունչը դարձիք » :

Ուրեմն՝ տաղանդաւոր գրագէտը այն է, որ բանբերը, շեփորահարը կը հանդիսանայ իր ապրած ժամանակին ու հաւաքականութեան : Արդէն իսկ խմորուած դաղափարները, ժողովուրդի սրտին պոթկումները, յոյսերն ու ցաւերը կը համազրէ ու կը ձայնաւորէ : Ռատիօ

մը, Չարենցի բնորոշումով, բարձրագոյն ու հետադարձ : Այս անկիւնէն դիտելով՝ աւելի լաւ չ'ըմբռնուի՞ր Եւրոստի ինչպէս գերադաս կամ գնահատիք Լուրիս Բարեկամէսը կամ Եւրոստի Չանդակատունց գործերու հեղինակներուն տաղանդը :

Չենք կրնաք մերժել, ուրեմն, այս տեսակէտն ալ, որ տաղանդը (զոնէ որոշ շափով) հարկատու կը նկատէ նաեւ իր ժամանակին ու հաւաքականութեան : Այս պարագային հարց մը կը ցցէ իր գլուխը, ազատութեան հարցը, որ կենսութիւն է գրելու արարքին : Ընկերութիւնը կամ տիրող վարչակարգը կրնան կաշկանդել, ուրեմն, ստեղծագործելու կարողութիւնները, կրնան եռյիսկ խածնել զանոնք : Չենք խօսիր տակաւին բունպետութիւններու զօր գացող զրիւներու մասին : Բայց կ'ընդգծենք, որ դաստիարակութիւնը, բնացոյց քաղաքական վարդապետութիւնները եւ նեղմիտ միջովայրը կազապարի մէջ կ'առնեն գրողը :

Բայց չապտեցինք տակաւին տաղանդը տարաբերող բոլոր հոնաւորումները :

Տաղանդի բնորոշումը կարեւոր ունի նաեւ գրական քննադատութենէն, այսինքն գրական վարդապետութեան մը ակնոցէն : Նայած օրուան հոսանքին կ'արժեւորուի կամ կը նսեմանայ տաղանդ մը : Այսպէս՝ դասականներու շրջանին մտքի ազատարկութիւնն էին գերազանցապէս տաղանդաւոր համարուողները (սատոր համար ալ Պոլալոն մոռցաւ կամ անտեսեց Լա Ֆոնթէնը, մինչդեռ ասոր ֆլորանսական գրականութեան փառքը կը նկատուի) : Ասոր հակառակ՝ վիպապաշտներուն համար տաղանդաւորը ա՛յն գրագէտն էր, որ զգացումներու կենսախալ ցուցահանդէս կը ստրբէր (« Ah ! Frappe-toi le cœur : C'est la qu'est le genie ! » A. Musset) : Խորհրդապաշտներն ու պառնասեանները ունէին իրենց յատուկ չափանիշներ տաղանդի : Իսկ գերադասողները մէկզի նետելով միտք ու սիրտ՝ օթումաթիզմն եւ ենթադիտակցութեան գրասեղանն տուին միայն տաղանդի տիրոջը :

Իսկ ներկայիս... Ուրաջումները կ'ը

շարունակուին տակաւին գործներու կողմէ, այլ գործներու գործերը արժեւորելու: Մեր մէջ մանաւանդ՝ Վլաճան քաջաց զէնն իւրեանց:...

ԵԱՐԱՓԱԿՈՒՄ

Այս բոլոր թափառումներէն ետք, երբ մաղէ անցրեանք հապճեպ քաղուած այս տեսութիւնները, օրինակները եւ սահմանումները՝ ի՞նչ տարազ կրնանք տալ տաղանդ կոչուած երեւոյթին:

Որոշ է մէկ բան. ունինք մեկնակէտը, — ստեղծագործական վաստակը: Եւ այդ վաստակէն մեկնելով կարելի է գնահատել բանաձեւ մը անցրելի հեղինակին, ընդհանուր յայտարարի մը բերելով բոլոր ժամանակներու եւ դարկան բոլոր վարդապետութիւններու գաւառած չափանիւրը:

Եւ տուեալներ ունինք այդ գնահատանքին համար:

Տաղանդաւոր է ա՛յն հեղինակը, որուն զգացական աշխարհը կը մատնէ անկեղծութիւն, երեւակայութիւն կը կերտէ նոր եւ ինքնատիպ պատկերներ, իմացականութիւնը հարուստ է խոր ու վերանորոգիչ գաղափարներով: Ասոնց վրայ, իբր աղ ու համեմ ունի մաշակ մը գրական, համաշխարհային կառուցում եւ իմիջ եւ յայտնի, որոնք արդիւնքն են աշխատանքի, ինչպէս նաեւ՝ տիրապետուած լեզու, առանց որու անկարելի է յաջող գործ մը արձանագրել:

Տաղանդաւոր է ա՛յն գրագէտը, որ իւրացնելով հանդերձ իր ժամանակի ոգին ու թեքելը յառաջացումները՝ զոհը չէ եղած անոնց լարած թակարդներուն, շեղեալ ազատութեան մը պարագային իսկ կրցած է ճարել ստեղծագործական ազատ պահեր եւ կերտել իւրայատուկ աշխարհ մը:

Քիչ անգամ կը պատահի, որ առաջին երկով մը բիւրեղացած դէմք դառնայ հեղինակ մը, առանց որ հետագայ գործերը յաւելումը բերեն իր նուաճումին: Տաղանդը կը նմանի աւելի ծառի մը, որ հետըզհետէ կ'աճի ու կը պտղաբերի՝ հն-

թահողի հարստութեամբ, չըջապատի պայմաններուն օժանդակութեամբ, մշակուով:

Կը պատահի երբեմն, որ գրականութեան զարտուղի միջոցներով գրող մը մեծահամբաւ դառնայ ի կենդանութեան: Բայց, բարեբախտաբար, մահը իր հետ կը տանի այդ կեղծ հռչակը: Հակառակը նոյնքան փաստելի իրողութիւն է. իրենց ողջութեան ստուերի մէջ մնացած, անստեղծած հեղինակներ կան, որ յետ մահու կ'արժեւորուին իրենց գործով եւ կը վերամիջոցներ տալանդով:

Կը թուի ճեղի, թէ գրագէտը կը նըմանի որսորդի մը: Լաւ նշանառու ըլլալու համար պարտի վարժութեան: Իսկ լաւագոյն երէնքը միշտ հեռունքը կ'ըլլան, բարձունքներու վրայ, անտառներու խորը: Անհրաժեշտ է նպատակաւոր թափառում, մազցում, հեռացում սովորական բնակավայրէ՛ վերադառնալու համար վարազ մը, վազը մը շարկած: Պարտէղի ծառին վրայէն պատահական հարւածով թռչուն մը ձգողը կ'անուանի՞ որսորդ... Որսորդ չէ նմանապէս ան, որ օրուան մը պտոյտէն եւ քանի մը կրակումներէն ետք՝ երկոյնան մախաղին մէջ սիրուն թռչնիկով մը կը վերադառնայ սուր: Պէ՛տք է թիւրեան մը, Առվէր մը կարելի չէ տաղանդաւոր որակել, մէկական անմոռանալի քերթուած գրած ըլլալուն համար:

Տաղանդաւոր գրագէտի տիտղոսը կրելու իրաւունքն ունին անոնք, որոնք իրենց քովանդակ կեանքը ի սպաս կը դնեն գրականութեան եւ կը փրկեն այդ կեանքէն զարեւ շարունակ տաք ու կենսատրոփ մնացող կենսաշրթո մը (վէպ, պտտուածք, թատերակ, քերթուած եւայլն):

Աճք մըն է, արարք մը՝ տաղանդաւոր գրագէտին գործը, նուաճում մը թեքելիքի եւ մտքի, որմէ պէտք է օգտուին յետորդ սերունդներն ալ, ինչպէս օգտուեցաւ ինք՝ իր նախորդներէն:

Շնորհալի են անոնք, որոնք օժտեալ են գրական մէկ կամ աւելի յատկութիւններով, բայց չեն կրցած շնորհներու ամ-

բողոքութիւնը, մէկտեղել և ամբողջական, կարկառուն դորձ մը արտադրել, — տէր պար մը անմահացնել, ժամանակաշրջան մը ձգել, յաւիտենական ձեռք սարսուռն մը փոխանցել ժարդկութեան:

Համեմարնդ ևն անոնք (չա՛տ ստեղծ), որոնք օժտուած են բացառիկ զգայաբանքներով, առտուածային իմացականութեամբ, ևւ մէկ ժայթքով կը գտնան անզերազանցելի ևւ անընդօրինակելի գաղափրներ, կը յեզարջեն գրականութեան կամ պատմութեան ընթացքը (հանճարներու կը հանդիպինք աւելի պատմական ևւ դիտական աշխարհներու, քան գրականութեան մէջ):

Շնորհալի, տաղանդաւոր կամ հանճարեղ՝ բոլոր բախտաւորեալները չմոռնան սակայն, որ որքան իրենք բաժին աւնին իրենց շահած դասինսպասկներուն մէջ, առնուազն նոյնքան մըն ալ կը պարտին իրենց նախորդներուն, իրենց պատկանած հաւաքականութեան, իրենց ազդին, որոնց ներկայացուցիչը ըլլալու պատիւն ունին:

Իսկական տաղանդին ընդհանրապէս կ'ընկերանայ համեստութիւնը, եթէ հոգէախաբանական ցաւէ մը չի տառապիր տաղանդաւորը...

Թ. Գ.





ԿՐԱՆԺ ՊԵՐՇԷԼԻՆԻ Հրատարակչական տունը
շարաքական պրակտիկ էլ հրատարակեց Արտևա-
ներու Համալսարանական մշ. և ՄԻԻԶ, որուն
18րդ թիւին մէջ — Յունուար 21 — ամբողջ
տասնհինգու էջ յատկացուած է Հայաստանի ար-
ւեստին, 15 դունուար նկարներով եւ երեք նկե-
ղանկներու յատկագրերով:

Հաւաքական խմբագրութեամբ հրատարակ-
ւող այս Համալսարանական մէջ, յայտնի չէ
հնչիւնը հայկական այս բաժնին: Մտանկադ-
տութեան բաժնին մէջ էլ չի յիշուին հայկական այն
գործերը եւ ուսումնասիրութիւնները, որոնցմէ
սկսուած է խմբագրութիւնը:

Ստորեւ կու տանք յիշեալ գրութիւնը, որ
ունի համապարփակ ուսումնասիրութեան մը
բնոյթը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՈՒԵՍԵԸ

Հայացուց՝ ՏԻԳՐԱՆ ՈՍԿՈՒՆԻ

Հայաստան, արեւմտեան Ասիոյ եր-
կիր, ուրկէ ծնունդ կ'առնեն Տիգրիս եւ
Եփրատ գետերը, կը տարածուի Կովկա-
սի հարաւը, 1500 միթր բարձրութեամբ
բարձրաւանդակի մը վրայ, շրջապատ-
ւած լեռնաշղթաներով, որոնց յատկա-
պէս մաս կը կազմէ Արարատ լեռը:

Ճարտարապետութիւնը, աշխարհա-

գրական այս դիրքին իսկ բերումով, կը
ներկայացնէ ճշգրտը եւ ինքնայատուկ
նկարագիր մը: Խիստ կլիման, ջերմու-
թեան մեծ տարբերութիւնները եւ մանա-
ւանդ դարերու ընթացքին պատահած ար-
շաւանքներն ու պատերազմները իբրեւ
տաշնահանք շահութեւնութիւն պար-
տադիր դարձուցած են շինութիւններու

ամբակառնող բնոյթը: Նիւթերու առա-
տուծինն ու լաւ որակը եւ անբարեխա-
նութեանց տոկացող տուֆ քարին գոյու-
թիւնը դիւրացուցած են զործը ճարտա-
րապետներու, որոնց նպաստած է նաեւ
աւանդականօրէն ճարտար եւ քանդակ-
արտաւարութիւն մը:

Նորագոյն պեղումները յայտնաբե-
րեցին Երեւանի հոյակապ բերդերը, ինչ-
պէս Կարմիր Բլուր, Արինբերդ եւ Արդիշ-
տիխիլի Արմաւիրի մօտ, որոնք կու գան
նախապատմական քաղաքակրթութիւննե-
րէն (Ուրարտու, Դրդ դարէն և՛ դար,
ն. թ.):

Գտնքի աւերակները կը կրեն հետ-
քերը աւելեւեան եւ յունահռոմէական
դարձման (ճրգէն Յրդ դար): Այդ ժամա-
նակաշրջանի հեթանոսական շէնքերէն
յաճախ մնացած են քանդուած վիճաշար-
ներ, որոնք կը գտնուին քրիստոնէական
եկեղեցիներու հիմերուն մէջ: Սկզբնա-
կան շրջանին, քրիստոնէականները կը զար-
ծածէին հեթանոսական նախկին ուղօթա-
սեղիները:


Ճարտարապետութեան տեսակէտէն,
ամէնէն շահեկանը այն ժամանակաշր-
ջանն է, որ կը հետեւի քրիստոնէութեան
երեւուածին, քանի որ դրեթէ ոչինչ մնա-
ցած է նախորդ ժամանակաշրջաններէն:
Պաղեստինը շատ մօտ ըլլալով, նոր կրօն-
քը արագօրէն կը տարածուի եւ պետա-
կան կրօնը կը դառնայ 295 թուականին:
Հայերը կը շինեն բազմաթիւ եկեղեցի-
ներ, ու այդ պատճառով ալ, ճրդ եւ Դրդ
դարերը կը նկատուին կարեւորագոյննե-
րը հայկական ճարտարապետութեան
պատմութեան մէջ: 387ին, Բիւզանդիոն
եւ Պարսկաստան երկիրը կը բաժնուին ի-
րարու մէջ, իսկ ճրդ դարուն, Դուինի ժո-
ղովէն ետք, կը հիմնուի հայ լուսաւոր-
չական եկեղեցին: Այդ շրջանին, կրօնքը,
եթէ ոչ աւելի, բայց անպայմանօրէն հա-
ւասար կարեւորութիւն կը ստանայ՝ որ-
քան քաղաքական իշխանութիւնը: Ճար-
տարապետութիւնը մասնաւորաբար կը
ծաղկի Դրդ դարուն, ինչպէս կը վկայեն
Ներսէս Գ. Շինարար կաթողիկոսին (640

—661) շինած եկեղեցիները: 855 թուին կը
հիմնուի Բաղրատունեաց հարստութիւ-
նը, որ կը դառնայ Արեւելքի բիւզանդա-
կան կայսրութեան ծիրին մէջ: Թէեւ օկ-
նուական թուրքեր 1064ին կը դրաւնէն Հա-
յաստանը, սակայն Կիլիկիա, կամ Փոքր
Հայաստանը կը պահէ իր անկախութիւ-
նը, որովհետեւ իր աշխարհապական
գերբեզ կը ծովուն վրայ ելք ունենալով,
կը յաջողի աւելի դիւրին, քան երկրին
մնացեալ մասը, յենուլ Բիւզանդիոնի եւ
Արեւմտեքի վրայ:

Հայկական ճարտարապետութեան
կարեւորութիւնը վերջերս միայն ըն-
դունուեցաւ: Մինչեւ 19րդ դար, դայն կը
նկատէին երկրորդական, տեսակ մը նա-
հանգային ճիւղը բիւզանդական ճարտա-
րապետութեան: Եւրոպայի մէջ կատար-
ւած կարգ մը ուսումնասիրութիւններ
եւ յատկապէս հայ ճարտարապետ Թա-
րամանեանի աշխատանքները վերաքննու-
թեան մղեցին այս դառուամբ: 1913ին,
աւստրալիացի դիտնական Սթրիկովսկի
ստիպուեցաւ կատարել ուսումնասիրու-
թիւն մը, որուն արդիւնքները հայկական
ճարտարապետութիւնը դասեցին միջնա-
դարու արեւմտեան ճարտարապետու-
թեան սկզբնական շրջանին մէջ եւ մեծ
հետաքրքրութիւն արթնցուցին մասնա-
դէտներու մօտ: Նման եղբայրացութիւն-
ներ, իրենց ստեղծած արեւելագիտական
յոտակ հոսանքով, հակադրուեցան մինչ
այդ ամէնէն աւելի տարածուած այն տե-
սութեան, թէ քրիստոնէական արուեստը
կը թիւի հռոմէական դառական արուեստ-
տէն, բարեշրջական հոլովոյթով մը: Նո-
րագոյն ուսումնասիրութիւններ, առ նը-
ւազն մասամբ, եկան նոր ծաւալ տալու
Սթրիկովսկիի թէզին:

Արեւելքի եւ Արեւմտեքի միջեւ մը-
շակութային եւ արուեստի փոխանակում-
ները կ'արժարծեն խնդիրներ, որոնց
վերջնական լուսարանումը յաճախ առ-
կարելի է:

Քրիստոնէական կրօնքին երեւումը,
որ մեկնելով իր հոգեկան կեդրոնէն՝
Հոռոմէն, կը ճառագայթէ միջերկրական-
եան ամբողջ աւազանին վրայ, քաղաքա-



կրթութիւններու միջեւ հարստացնող հանդիպումներու աղբիւր մըն է։ Պաշտակարարութիւնները վերջնական առիթ կու տան Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ վերջին մեծ հանդիպումին եւ արուեստի կարգ մը ձեւեր կը փոխանցեն մէկ աշխարհէն միւսը։

Որոշ է, թէ մասնաւորաբար Տրդ դարուն, հայկական ճարտարապետութիւնը կը ներկայացնէ բնորոշ յատկանիւններ, որոնք կը ծանուցանեն արեւմտեան միջնադարեան ճարտարապետութիւնը։ Տարածութիւններու զուգահեռանութեամբ ե կառոյցներու եղանակաւորումով, հայկական ճարտարապետութիւնը կը մտնէր ըստան ճարտարապետութեան, մինչ ուղղահայեացութեան, ուժականութեան եւ ներքին տարածութիւններու աննիւթականացման իր նախատրուութեամբ, կը թուի կանխել կոթականը։


Քաղաքային ճարտարապետութեան նմոշները զրեթէ ամբողջութեամբ անհետացած ըլլալով՝ վերլուծման առարկայ կը դառնան զխառնարար կրօնական շինութիւնները։ Ընդհանրապէս զանոնք կը բաժնեն երկու դասակարգի. կեդրոնական յատակագիծով եկեղեցիներ եւ տաճարաձեւ եկեղեցիներ։ Անոնցմէ իւրաքանչիւրը կրնայ զմբէթով մը ծածկըւած ըլլալ կամ ոչ։ Ամէնէն հին շինութիւնները մէկ կամ երեք թեւի վրայ կամարուած տաճարներ են, իւրաքանչիւրը երկարածողուած խորանով մը, որոնք իրարմէ կը բաժնուին սիններով (Տիբակլար, Քոսաշ, Երեւուկ, Տեկուր, Երզնա)։ Կը թուի թէ այս սարքաւորումը սրբիական ծագում ունի (Ռուլենա, Պապիւքա, Թիւրմանին), բայց հետազային կը լքուի։ Հայկական տիպար եկեղեցիներու յատկանիւններն են. շինանիւթը (հրաբխային քար), զմբէթաւոր ծածկովը եւ ընդհանրապէս կեդրոնական յատակագիծը։ Այդ յատկանիւնները կ'ընծայեն մեծ ալլաղանութիւն մը, համաձայն իրենց տեղադրման։

Վեցերորդ դարէն սկսած, կը շինուին կեդրոնական զմբէթով եկեղեցիներ, որոնց վրայ կը բարձրանայ կոնաձեւ տա-

նիք մը, յենած դաշնակերպ սիւներու, Ծալրերը կը շէջողացուին խորաններով, որոնց զիծերը հետզհետէ կը բարդանան։

Երկարաձիգ յատակագծի վրայ զմբէթաւոր եկեղեցիները երեւան կու գան Տրդ դարուն եւ կը հանդիսանան սկզբնաքայլը խաչաձեւ ուրուագծի մը (Երբեմն հազիւ ձեւաւորուած, երբեմն լայնօրէն զարգացած), ինչպէս Օրդուն, Վաղարշապատի Սուրբ Փայեանէ եկեղեցին, Մրեն, Տրդ դարուն, Անիի մայր տաճարը, դործ ճարտարապետ Տրդատի, 10րդ դարուն։ Նոյնը կը գտնենք նաեւ մականդոնական շրջանի բիւզանդական ճարտարապետութեան մէջ։ Եստ յաճախ ասոնք հռազաւ շինութիւններ են, որոնց կեդրոնական դասը ներսէն ունի կիսաբոլորաձեւ խորան մը, դուրսէն ոչ-տեսանելի (ասորական ձեւով) կամ բազմանկիւն (բիւզանդականին նման)։ Երբեմն երկրորդական դասերը եւս ունին խորան մը, բայց, շատ յաճախ, կը վերջանան իրարմէ անկախ երկու կտորներով երոքիքիսի եւ տիւաքիմնի ձեւով։ Սիւնի մը ներկայութիւնը յաճախակի է, մինչ քրդադիւնները եւ զանազանութիւնները շատ ետքը աւելցուած են։ Պմբէթաւոր կոլուած սրահը, որ Տրդ դարուն կը յայտնուի, ամէնէն աւելի յաճախակիօրէն կը զործածուէր 1000 թուականէն ետք։ Ունի մէկ ընդարձակ դաս, կողմնակի մատուռներով եւ թեւերով, իսկ ամբողջութիւնը կը մտնէ ուղղանկիւն յատակագիծի մը մէջ (Սթըշիկովսիի ասոր մէջ կ'ուզէ տեսնել նախատիպարը Կոնստանդինուպոլիսի վերածննդական յատակագիծին)։

Քառակուսի յատակագիծի վրայ կեդրոնական զմբէթով եկեղեցին, յենարան որմախորշերով (Մասթարա, Արդիկ, Վաղարշապատի Սուրբ Հովսիփ մէկն, Տրդ դար) ամէնէն պարզն է։ Որմախորշերը խորքին մէջ կը զօրացնեն զիմադրութիւնը կեդրոնական զմբէթին ճշտութիւնը ու պէտք չ'ըլլար արտաքին յենարաններու դիմել։ Երբեմն, յըման կողմնակի տարրեր կը զարգանան եւ կը կազմուին բազմաթիւ եւ ալլաղան ձեւերով եւ սարքաւորումով (Աւան, Տրդ



Էջմիածնի տաճարը՝ խաչու մեծ յատակագիծով (Դ. դար)


դար), նույն ատեն չմիջամտելով կեդրոնական ներքին տարածութեան:

Պաշտօնէն եկեղեցիներու կազմը, որուն ամէնէն յստակ արտայայտութիւններէն մէկը կը տրուի կեդրոնական յատակագիծի վրայ միջանկեալ չորս սիւներու վրայ յենած դմբէթի մը շինութեամբ, ներքին տարածութեան կու տայ ինքնայատուկ նկարագիր մը (Բագարան, Էջմիածին, Էրզ դար): Այս շինութիւնները կը ստանան մասնաւոր կարեւորութիւն, եթէ դանոնք բաղդատենք նմանօրինակ, բայց հետագային իրազործուած շինութիւններուն հետ արեւմտեան աշխարհին (Միլանի Սան Սաթիւրոն, Ֆրանսայի Փերմիէն-տէ-Փրէն) եւ բիւզանդական աշխարհին (Աթոս):

Նոյնիսկ երբ ձեւերը աւելի բարդ եւ աւելի աշխատուած կը դառնան, օրինակ երբ բաղմթիւ որմախորշեր կը թացուին դմբէթաւոր դրանով տարածութեան մը վրայ (Անիի Ս. Փրկիչը, 11րդ դար), դարձեալ հայկական եկեղեցիները կը պահեն իրենց կեդրոնական յատակագիծը:

Պարամիջոցի վրայ բացուող որմախորշերով բառարկեալ յատակագիծը (Զուարթնոց, 7րդ դար, Գաղիկի Ս. Գրիգոր Լուսաւորիչը, Անիի մէջ, 11րդ դար) մօտ է Միլանի Սեն Լորանի յատակագիծին (նմոշը՝ Հռովմէական մշակութիւն), յուստինանոսեան ճարտարապետութեանց (յատկապէս Բիւզանդիոնի Սուրբ Սարգիսին), Ռաֆէնի Սուրբ Վիթալին: Մօտ է նաեւ արեւելեան օրինակներուն (Աթենքի Սթոա Աորիէն եկեղեցին, Պոսթայի տաճարը): Եւ սակայն, զլիաւոր սիւներու գործածութեան պատճառով, որ բոլորովին անսովոր է հայկական աշխարհին մէջ, զարդարանքի մտնրամանութիւններուն յունական ճաշակով, կարելի է ըսել, թէ այս ճարտարապետութիւնը օտար նմոշներէ առնւած է: Այս վարկածը կը հաստատուի նաեւ շինութիւններու չքնդութեամբ, ինչ որ համապատասխան չէ հայկական դրեթէ բոլոր եկեղեցիներուն համետ տարածութեան:

Շինութիւնը կ'իրազործուի որմնադրութեամբը հրարխային քարերու, ու



Ամիի մայր եկեղեցին՝ ուղղամկիւն յատակագիծով (Ժ. դար)

րոնք դուրսէն շատ աշխատուած են, բայց մերկ ձգուած են ներսը: Արտաքին տեսքին երկրաչափական ծայրայեղ պարզութիւնը կը հակադրուի ներքին տարածութիւններու զարդանկարային բնունւորման, ոտեղծելով ինքնայատուկ հակապատկեր մը: Պատերու քանդակային զարդացումը երեւան կու գայ հետապնդին ու կը դառնայ շատ մշակուած (Աղթամար, 915-921): Տանիքները շատ ցից են, զմբէթները կը յենուն կշոր սիւներու, որոնք հետզհետէ աւելի սլացիկ կը դառնան եւ կը զարդարուին դոց կամարներով եւ պատուհաններով (կարելի է ըսել, թէ անոնք երևան եկած են մակեդոնական շրջանի բիւզանդական սիւներէն առաջ): Գոց կամարները, շատ վաղելու համեմատութիւններով, երբեմն կը տեսնուին արտաքին կողերուն վրայ, առանց սակայն համապատասխանելու ներքին կառոյցի մը (Անիի տաճարը, 10րդ դար): Այս կամարները շինուած են այնպիսի ուղիով մը, որ կարծէք կը ծանուցանեն ուսման շրջանի բիւզանդական ճարտարապետութեան կարգ մը շինութիւնները:

Բաղրատունեաց լըջանը (9րդէն 11րդ

դար), աչքի կը զարնէ կառուցողական կարեւոր գիւտով մը: Կամարներու տակ գտնուող աղեղներուն կը տրուի անկիւնակազմ յենարաններու դերը: Այդ աղեղները քառակուսի կամ ուղղանկիւն մասերէ կը բաղկանան, յիշեցնելով անկիւններու խաչաձեւումը արեւմտեան կարգ մը տաճարներու մէջ: Անոնք իրենց տուրուտութեամբ եւ մեծ տարողութեամբ կը դառնան շինութեան հիմնական տարրերը եւ ոչ թէ զարդարանքի պարզ միջոցներ:

ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Մանօթ առաջին քանդակները կու գան առաջին հաղարամեակէն: Միակուր արձաններ են, երբեմն հինգ մեթր հասակով եւ ընդհանրապէս կը ներկայացնեն ձուկեր, ինչ որ ինքնայատուկ թիմա մըն է Կովկասի եւ այլ լըջաններու ժողովուրդներուն պարագային, որոնց համար ձուկը խորհրդանշէ է պարարտութեան եւ արգասաւորութեան: Նոյն ժամանակաշրջանէն կու գայ նրբօրէն աշխատուած փայտաւէն կտուք մը, որ գտնուեցաւ Սեւանի եզերքը, ցեղապետի մը դամբարանին մէջ:

Հայկական արուեստի մը մասին իսկապէս կարելի է խօսիլ Ուրարտուի պետութեան կամ Վանի թագաւորութեան ծաղկումէն ետք, Քրիստոսէ առաջ Զրդ եւ Էրզ դարերուն միջեւ: Հելլէնական առաջին երկարատեւ շրջանի մը ընթացքին, որ կը սկսի Քրիստոսէ առաջ Էրզ դարուն եւ կը վերջանայ Քրիստոսէ ետք Զրդ դարուն, քանդակագործութիւնը մեծ թափ կը ստանայ, աստուածներու պրոնդէ եւ ոսկիէ թափու արձաններով: Անահիտ դիցուհին պրոնդէ դուխը անոնց օրինակներէն մէկն է: Փորագործութիւնը ծնունդ կու տայ որակաւոր գործերու:

Եւ սակայն, Հայկական արուեստին ինքնայատկութիւնը երեւան կու դայ Քրիստոսէ ետք Էրզ դարէն սկսեալ, երբ երկրին մէջ կը հաստատուին անկախ քաղաքականութիւն մը եւ ընկերային կառույցներ, կը ստեղծուի ազգային այրութիւնը: Միւս կողմէ, Սուրբոյ, Հռոմ-մէջական կայսրութեան արեւելեան նահանգներուն, Բիւզանդիոնի եւ Կովկասի ժողովուրդներուն հետ յարաբերութիւններու զարգացումը մեծ ազդեցութիւն կ'ունենայ արուեստներու հոլովոյթին վրայ:

Քանդակագործութիւնը շատ լայնօրէն կը զործածուի իբրեւ ճարտարապետութեան զարդարանքի տարր: Եթէ Գաղիկ թագաւորին արձաններուն նման արձաններ հաղուադիւտ են, փոխարէնը սակայն Ուաշթարերու թիւը հազարներու կը հասնի: Ամէնէն ծանօթ գործերուն մաս կը կազմեն Ձուարթնոցի արձանները եւ Աղթամարի եկեղեցիին որմաքանդակները:

Պալթրուզայթիսի Համաձայն, Հայկական քանդակագործութիւնը կարեւոր դեր խաղացած է արիւմտեան բոսան արուեստին մէջ ու անոր միջոցով է որ սուսերական արուեստը փոխանցուած է Արեւմուտք:

ՆԿԱՐՉՈՒԹԻՒՆ

Հայկական նկարչութեան պատմութիւնը Երեւան 2000 տարուան անցեալ

ունի: Երէքունիի մէջ (7րդ դար, Ն.Ք.) փրոֆեսէօր Բիոթրովսկիի ղեկավարութեամբ կատարուած վերջին պեղումները երեւան հանեցին պատկերացական եւ զարդանկարչական գործերով հարուստ սենեակներ: Իր կարգին, Երեւանի հնագիտական վարժարանը դուած է բազմաթիւ որմանկարներ եւ ժողայիքներ, որոնք, կը թուի, թէ ծածկուած են կրա-



Խաչաքար Աղթամարի մէջ



Հայկական արուեստի փառսկրայն բազմագոյն Բմոյշ մը (ՓՆ. դար)

Նանին։ Այլ պեղումներու մէջոցաւ, յառկապէս Ն. Մարի կողմէ կատարուած, երեսունի մօտ եկեղեցիներու մէջ յայտնաբերուեցան Միջին Դարէն եկող շատ գեղեցիկ որմանկարներ եւ մոզայիքներ, որոնք կը թուի, թէ ծածկուած են կրախաւով մը, մինչ Հնագիտական տուեալներ եւ պատմական աղբիւրներ կը յիշատակեն աշխարհական նիւթերով որմանկարներ Դուրնի, Աղթամարի եւ Անիի արքայական պալատներուն մէջ։

Մանրանկարչութիւնը, որուն վարպետները եղած են տաղանդաւոր արւեստագէտներ, լայն զարգացում ունեցած է։ Այս արուեստին ծագումը կը գուշակուի Հայկական գիրերու գիւտին հետ, Ծրդ դար։ Աւետարաններու մէջ գտնուող մանրանկարներէն շատերը կը ներկայացնեն Քրիստոսի կեանքին դժբաղդները, առարկաները եւ հրաշքները (Էջմիածնի աւետարանը ամէնէն հռչակաւորն է)։ Քանի մը մանրանկարներ կը ներկայացնեն նաեւ կրկէսի, թատրոնի կամ որսորդութեան տեսարաններ։ Սակայն ճարտարապետութեան մէջ մանրանկարչութեան հետքը չկայ։ Առաջին աշխարհական մանրանկարը, Արափիարիւնը, կու գայ 1482 թուականէն։

Այս մանրանկարներուն ամբողջութեան մէջ, որոնց լիակատար հաւաքածոն առ նուազն 25.000 կտոր կը հաշուէ, զարդարանքը կազմուած է կամ հեթանոսական նիւթերէ, կենդանական կամ մտաւորական աշխարհէն ներշնչուած, կամ բիւզանդական մոթիւններէ (սկանթի

անրեւներ, սկաւառակ, ծիածան, փղը տեօթ, ծաղիկներու շղթայ)։ Այս գործերէն շատերուն հեղինակները Ծրդ դարու եւ 10րդ դարու վարպետներ են, բայց մանաւանդ կը պատկանին կիլիկեան դպրոցին (13րդ եւ 14րդ դար), որոնց մէնէն ծանօթ ներկայացուցիչն է նկարիչ Թորոս Թոռլին, ու վերջապէս՝ Վանի (14րդ դար) եւ Աղթամարի դպրոցներուն։ Մանրանկարչութիւնը, թէեւ ներշնչուած բիւզանդական արուեստէն, անկէ կը տարբերի սակայն իրականութեան աւելի սուր ըմբռնումով մը, անեթթօսի մտահոգութեամբ եւ առօրեայ կեանքի մանրամասնութեանց ներմուծումով, նոյնիսկ Հնագոյն թեմաներու ներկայացման մէջ, որոնք այդպէսով աւելի մատչելի եւ ըմբռնելի կը դառնան։

15րդ դարէն սկսած, կը ստեղծուի նկարչական դպրոցներ եւ անոնք կը պատրաստեն նկարիչներ, որոնք իրենց տաղանդը ի գործ կը դնեն եկեղեցիներու կամ ընկարաններու զարդարումին եւ գիմանկարչութեան մէջ։ 17րդ դարուն, անոնց մէջ ամէնէն տաղանդաւորներն են Մինաս Զօհրապեան եւ Յովհաննէս Մըրզուզ, իսկ 18րդ եւ 19րդ դարերուն, արւեստագէտներու հռչակաւոր Յովնաթանեան գերդաստանը։

Հայկական արուեստը շատ կը տուտէ, երբ երկիրը կը կցուի ռուսական կայսրութեան։ Արուեստագէտները շատ մը տեսակետներով կը խզուին աղբիւրն աւանդութիւններէն եւ երեւան կու դան ռուսական նկարչութեան շատ յոսանք

աղղեցութիւններ, նոյնի՛սկ ամէնէն հըռ-
չակաւորներուն մօտ, ինչպէս դիմանկա-
րիչներ Ա. Յովնաթանեան (1809-1884) եւ
Ս. Ներսէսեան (մեռած 1884ին), առաջին
տեսանկարիչ Կ. Բաշինջաղեան (1857-
1925) կամ Ս. Աղւսճանեան եւ Բ. Թէր-
լէմէղեան:

Թէեւ 20րդ դարու սկիզբը, նկարչա-
կան հոսանքներու ընդհանուր ձգտումն
է, ինչպէս Ռուսիոյ մէջ, դառնալ դէպի
Եւրոպա ու յատկապէս Ֆրանսացի տպա-
ւորապաշտները, սակայն քանի մը ար-
ւեստագէտներ կը փորձեն վերստին
մտնել զուտ հայկական միջնորդի մը
մէջ: Մարտիրոս Սարեան խարխափումի
այս շրջանին ամէնէն հարազատ ներկա-
յացուցիչն է: Իբր ինքնատուութեամբ եւ
վաւերականութեամբ, կ'անջատուի բազ-
մաթիւ արդիական նկարիչներէ, որոնք
կենթարկուին քաղաքական եւ ընկերա-
յին ելեւէջներու:



Փէօթափայի մէջ շինուած
խնցեղէմ գոթաօր կուժ մը

ԶԱՐԴԱՐՈՒԵՍ

Հին դարերէն սկսած, հայերը մեծ
ճարտարութիւն ունեցած են ոսկիի, ար-
ծաթի եւ պղինձի զործերուն մէջ: Այս
երեք մետաղները առատ եղած են Հա-
յաստանի մէջ: Կանուխէն հայերը ծա-
նօթ եղած են անաղապղինձին եւ պրոն-
զին: Գտնուած ամէնէն հին զործերը կու
դան Քրիստոսէ առաջ երրորդ հազարամ-
եակէն: Սակայն երկրորդ հազարամեա-
կին է որ մետաղազործութիւնը հասած
է դեղարուեստական շատ բարձր մա-
կարդակի մը, ինչպէս կը վկայեն Կիրո-
վականի մօտերը գտնուած առիւծազարդ
ոսկի բաժակը եւ արծաթեայ սրուակը,
ինչպէս նաեւ ծաղիկներով եւ կենդանի-
ներով զարդարուած ապարանջաններ եւ

զէնքեր, որոնք ցոյց կու տան մեծ ճար-
պիկութիւն մը տաճարական աշխատանք-
ներու մէջ:

Մետաղազործութիւնը կը դառնայ
կենդանի աւանդութիւն մը, ինչպէս կը
վկայեն պաշտամունքի բազմաթիւ առար-
կաներ եւ անաղապղինձէ ու արծաթէ
դրուագումն աշխարհիկ կտորներ: Ա-
սոնք կը նկատուին բոլոր ժամանակա-
շրջաններուն մէջ, բայց յատկապէս 17րդ
եւ 18րդ դարերուն:

Բրուտազործութիւնը կը ստանայ
լայն տարածում Հայաստանի մէջ: Տե-
սարանը նախ կը կազմուի կարմիր խորքի
վրայ սեւ նկարներով, ապա կը դառնայ
բազմադոյն եւ կը պարունակէ կենդա-
նակերպ ոճաւոր դժանկարներ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎԱՐՊԵՏՆԵՐԷՆ

ՊԵՌՆԱՐ ԾՕ ԵՒ ԻՐ «ՓԻԿՄԵԼԻԸՆԸ»



ՄԱՐԴՆ ՈՒ ԻՐ ԿԵԱՆՔԸ

Մագուստով իրլանտացի, աշխարհա-
հռչակ գրագէտ Ճորճ Պեռնար Ծօ ծնած
է 1856 Յուլիս 26ին, Տուպլինի մէջ:

Եղած է խման, կեանքին մէջ ժախտ-
դած վաճառական հօր մը եւ երաժշտա-
գէտ մօր մը երրորդ զաւակը: Մեծցած
է երաժշտական դործով Լոնտոն փոխա-
դրուած մօր հետ: Հեռացած անշահ
հօրմէն, ապրած է մօրը հետ, առանց սա-
կայն անոր խնամքն ու հոգածութիւնը
վայելելու: Տիկին Ծօ, աւելի երաժիշտ
քան մայր, իր սիրած արուեստին նուիր-
ւած՝ ժամանակ չէ ունեցած գրադելու
իր զաւակներու դաստիարակութեամբ:
Այս ընդհանուր անտարբերութեան մէջ՝
պատանի Պեռնար Ծօ, իր հոգեկան, մը-
տաւորական եւ ընկերային անձնաւորու-
թիւնը զարգացուցած է քիչ մը անկա-
նոն, անկախ, քաջութեամբ եւ համար-
ձակութեամբ դիմակալելով կեանքի բո-

լոր անակնկալները: Առանձինն, դըժ-
ւար, բայց կրցած է ո՛չ միայն տոկալ,
այլեւ ինքզինք պարտադրել մարդոց,
յաղթահարել տնտեսական ու ընկերային
բոլոր խոչընդոտները, դառնալու համար
Պեռնար Ծօ մը:

Մօրը հոգածութենէն դուրկ, բայց
ժառանգած է անկէ երաժշտութեան եւ
արուեստներու նկատմամբ բացառիկ տա-
ղանդ եւ խոր հասկացողութիւն:

Նրադրական ասպարէզ մասն է 19
տարեկանին, կրօնական քննադատական
բուռն ելոյթով մը: Այս մուտքը չէ կա-
րելի յաղթական կոչել, այնքան հեշտ
պիտի չըլլար յաջողութիւնը իրեն հա-
մար: Ան, զարմանալի կերպով, երկար
տարիներ պիտի մնար լրադրութեան մէջ,
առանց դրական հակումներ ցոյց տալու,
այլ իբրեւ արուեստի, թատրոնի եւ երա-
ժշտութեան քննադատ: Արուեստի քրո-
նիկադիրը հետզհետէ կը հակէր ընկերա-
յին հարցերուն վրայ ու կը ստորագրէր

ընկերային յախուռն, խորթմատ քննադատութիւններ: Պոռթկումները չէր կրքնար երկար ատեն իր մէջ զսպուած պահել, չէր կրնար հանդուրժել ամէն օր տեղի ունեցող ընկերային անարդարութիւնները... Այս հոգեկան թռչունահան մէջ է, որ 1879ին, կը փորձէ գրականութիւն մշակել: Բայց մինչեւ 1885, յաջորդաբար հրատարակած իր հինգ վէպերը հաւասարապէս ձախողութեան կը դատապարտուին, նոյնիսկ հեղինակին շուրջ տեղեկելով հակակրական տպաւորութիւններ, զգացումներ:

Բայց իր խիզախութիւնը, ինքնափառութիւնն ու ճշմարտութիւնները, մարդոց ճակատին խփելու քաջութիւնը, յուսահատութեան փոխարէն նոր կորովներ շնչեցին զրազէտին, որ վերջապէս կրցաւ բարձրացնել իր ձայնը եւ ստիպել որ մարդիկ մտիկ ընեն զինք:

ԹԱՏԵՐԱԳԻՐԸ

Պեռնար Ծօ, առաջին անգամ ըլլալով կը յաջողի գրական շրջանակներու իր նկատմամբ ոչ-գրական կարծիքը հիմնովին յեղաշրջել 1892-ին, հրատարակելով «Այրիւիմ Տուրք» թատերախաղը, որ իր թեմային նորութեամբ եւ ոճային ցնցիչ ինքնատուութեամբ կու գայ նոր զիմազիծ տալու Լոնտոնեան թատրոնին: Այս յաղթական մուտքը գրական քննադատները կը մղեն ուշի ուշով հետեւելու սկսնակ թատերագրին քայլերուն, իսկ հեղինակը կը յաջողի իր վրայ դրուած յոյսերը արդարացնել:

Պեռնար Ծոյի գրիչին նոր գլուխ-դորձոցներ կու գան ցնցելու Լոնտոնը եւ հետզհետէ կը բարձրացնեն իր համբաւը: Թաջորդաբար լոյս կ'ընծայէ «Տիկ. Ուարըմի Ասպարէզը», «Ջէմմեր Իւ Մարդ», «Մատամայի Հետեւորդներ», «Հարիւրապետ Պրասպասիոնի Դարձը», որոնք բոլորն ալ թատերախաղեր, ընկերային թէզեր կը պաշտպանեն, երեւոյթներ կը ձագկեն, բռնաբարուած խաղաղութեան իրաւունքը կը փորձեն վերահաստատել:

1905-ին լոյս կ'ընծայէ «Մարդ Իւ Գիւրմարդ» անգուղական խորքով եւ ընկերային լուրջ մասնագութիւններով յագեցած թատերախաղը: Այս զործով է որ Ծոյի անունը դուրս կու գայ Մեղլիայէն, հռչակուելու համար «Ազատ մտաւորականութեան համաշխարհային խոյռնան»:

Իր այս կոթողական գործին ակնարկելով՝ Ծօ գալիս կոչած է «կատակերգական իմաստասիրութիւն»: Մտքերու հեղեղով մը աշտեղ կը փորձէ ցոյց տալ մարդկային կարելիութիւններու անչափելիութիւնը, որոնք մարդուն ներսիդին ամբարուած «կեանքի զօրութենէն» կը բխին եւ որոնք մարդս կը դարձնեն գերմարդ:

Գրազէտ ու տաղանդաւոր թատերագիր, այս գործով ան կը սկսի վայելել լայն ժողովրդականութիւն եւ իր անունը կը յիշուի Եւրոպայի կողմէն:

Եւրոպայիցի իր գրական ստեղծագործութիւնները՝ Ծօ կը հրատարակէ ալ թատերախաղեր, ինչպէս «Փիկմիլիքն»ը, «Սէմ ձօն», «Վերադարձ դէպի Մեքսիսըլան» եւ «Թեմ Սիլ Գարք»:

1925-ին կ'արժանանայ Նոպէլեան գրական մրցանակին, թէեւ այս եւ իրեն առաջարկուած բազմաթիւ պաշտօններ ու մրցանակներ կը մերժէ: Իր միւս գործերն են «Հարքայրէյ Լաուգ», «Քամետիտա», «Մէյմըր Պարպարա» եւ «Տաֆթըր Տիլեմա»:

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Արդարադատ, ընկերային քաղաքացիական գործունէութեան զէմ բաւուն կերպով պայքարող՝ ան 1884 Սեպտեմբերին, օր մը, պատահականօրէն ներկայ կ'ըլլայ ամերիկացի մեծ տնտեսագէտ Հէնրի Ճորճի մէկ գասախօսութեան եւ անկէ ետք կը դառնայ բուռն ընկերվարական մը: Ծուռով կը միանայ Կոմունիստական ընկերակցութեան, որ զէմ էր յունի միջոցներով եւ յեղափոխութեամբ ժողովուրդները ցրնացելու սկզբունքին եւ կ'առաջարկէր աս-

տիճանական բարելավումներով ընկերությունները առաջնորդել գէպի ընկերություններին:

Պեննար Ծօ ընկերային եւ քաղաքական ապագայի կը մտնէ խօսքով, գրիչով, կը պայքարի եւ փորձառական կեանքին մէջ կու գայ ա՛յն եզրակացութեան, թէ լաւ ընկերություն մը կազմելու համար լաւ օրէնքներ միայն չեն բաւեր, այլ պէտք է մարդոց մէջ պարկեշտութեան, ազնուութեան եւ դրական տրամադրություններու ոգին զարգացնել: Լաւ ժողովուրդը անպայմանօրէն լաւ օրէնքներ կը մշակէ եւ լաւ օրէնքները իրենց կարգին կը բարելաւեն զանգուածներու պայմաններն ու ձգտումները:

Ժողովուրդին ուղղակի իր խօսքը ուղղելու բուռն տենչը զինք կը դարձնէ մեծահամբաւ հետաքրքիր, կրքոտ, բայց զարմանալիօրէն պայծառամիտ եւ տրամաբանօրէն:

Որքան մեծ թատերագիր, նոյնքան մեծ հրապարակախօս մը կը հանդիսանայ եւ էր 1933-ին կը հրախրուի բանաստեղծ Նիւ Եօրքի Մեթրֆոլիթըն Օփերայի Տան մէջ, ժամանակէն առաջ իրմով հիացողներ կը գրուեն իրենց տեղերը հսկայ սրահին մէջ եւ մեծ թիւ մը սիրահարներու կը զրկուի անոր ձայնի ջերմութենէն ու զօրութենէն:

Ընկերվարական իր համոզումները զինք կը մղեն կատարելու աշխարհի շրջանը: 1931, ապա 1932-33 թուականներուն, առիթը կ'ունենայ այցելելու Ռ. Միուիին, Մայրաքոյն Արեւելք, կը հանդիպի բաղմաթիւ միջազգային դէմքերու, կը ծանօթանայ անոնց ձգտումներուն եւ մտահոգութիւններուն:

Հետագային հրատարակած իր յուշերուն մէջ, այս հանդիպումներու մասին հարուստ եւ վաւերագրային վկայութիւններու կը հանդիպինք, որոնք կը փաստեն զօրութիւն ունեցող համամարդկային տաղանդներ, հասարակաց ձգտումներ, որոնք ա՛յ աշխարհագրական սահմաններ կը ճանճան, ա՛յ ցեղային խլտբականութիւն:

Ընկերային եւ քաղաքական կեանքին

մէջ իր հանգանակը եղաւ գործին առակ մարդիկ միայն տեսնել պատասխանաւոր զիրքերու վրայ: Այս մտահոգութեամբ, ան բուռն կերպով պայքար կը մղէր քաղաքական ղեկավարներուն դէմ, զանոնք որակելով ազէս եւ ղեկավարութեան անկարող, որովհետեւ անոնցմէ շատեր տակաւին երբ բուռնօրէն կը թուրին շունչէն, ինչպէ՞ս պիտի կարենային ժողովուրդներու առաջնորդներ հանդիսանալ: Կատարելիքը, ըստ Պեննար Ծոյին, դերագոյնն է բոլոր արուեստներու մէջ:

ՀԱՆԱԿՐՈՒՄ, ԲԱՅՑ ՀԱՒԱՏՔԻ ՄԱՐԴ

Պեննար Ծօ, առաջին առթիւ կը ծառանայ քրիստոնէութեան դէմ, քրիստոնէութիւնը իրեն դիմակ դարձնող եւ հակառակը քարոզող կղերին դէմ, որուն գաւառած սկզբունքը շատ հեռու էր Գրիստոսի քարոզած ճշմարտութեան սկզբունքներէն:

Գրիստոնեայ չէր անունով, բայց կատարեալ քրիստոնեայ կարելի է կոչել զինք իր գիտակցութեան զօրութեամբ, առողջ դատումներով եւ սկզբունքներով: Մաքրակենցաղութեամբ եւ ծոմապահութեամբ սաստիկ պայքար մը կը շղթայագործէ մասկերութեան, ալքոլամոլութեան, ծխախոտի գործածութեան դէմ: ան իր ժամանակին ճանչցուած էր իրրեւ ընկերային տիպար անձնաւորութիւն մը, ազնիւ, գթասիրտ, մաքուր եկարազրի տէր, ճշմարտի կեանքով ապրող: Կը հաւատար որ բոլոր ընկերային առաքիչութիւններն ու բարոյական սկզբունքները ա՛յ թէ մեր հաւատքին, այլ՝ ծընունդ են մեր տրամաբանութեան:

Բացառիկ իմացականութեան տէր այս մարդը իր ամբողջ զօրութեամբ կը պայքարէր մաքրամաքուր ընկերութեան մը կերտման ի խնդիր, ընկերություններ մը, որ կատարարուի իմաստութեամբ եւ առաքիչութեամբ, ջնջուին յաւէտ պատերազմն ու բռնութիւնը աշխարհի վրայէն: Պեննար Ծօ կը հաւատար, որ իւրաքանչիւր մարդուն մէջ անսպառ զօրութիւն մը՝ եմբական կ'առաջնորդէ ներ-

շնչումի եւ զրազան ստեղծագործութեան, բայց ընկերութեան գլխաւոր պարտականութիւնը պիտի ըլլայ նախ մարդուն տալ այդ գործութեան դիտակցութիւնը, ապա զայն մշակելու եւ ուսնացնելու հնարաւորութիւնը:

«Փիկվիլիլըն» ԺԱՊԱԻԿԻՆ ՎԵՐԱՄ-
ԻԱՄ՝ MY FAIR LADY ԽՈՐԱԳՐՈՎ

Ինչո՞ւ Պեռնար Շոյի գործերէն այս թատերախաղը ընտրեցինք: Անո՛ր համար, որ ընկերային, քաղաքական, դրական եւ հրապարակագրական ասպարէզներու մէջ իր ամբողջ էութիւնը դրած Մարդը լուսապէս կը ներկայցուի այս գործին մէջ: Կը ներկայացունի մարդկային խոր տաղանդներ, ձգտումներ, ընկերութիւնը վերէն դիտուած ու անոր բարիքին համար եղած առաջարկներ, արոնք, սակայն, կը բախին պահպանողականութիւն կոչուած ապառաժեայ վարդապետին: Մեծ իմացականութեան տէր, սակայն ամբողջ իր կեանքին նպատակը եղաւ հասկնալի գառնալ ժողովուրդին, մատչելի մնալ զանգուածներուն, մատչելի՝ զաղափարականօրէն, լեզուականօրէն, նոյնիսկ հնչական գետնի վրայ: Ժողովուրդին կարելի է ծառայել՝ անոր հոգեկան եւ մտաւոր ձգտումներուն մասնակից դառնալով, իսկ այս մասնակցութիւնը կ'իրականանայ միայն անոր մօտենալով: Ահա թէ ինք, Շո, ինչպէս կը բացատրէ ինքզինքն.

«...Ժողովուրդէն հասկցունելու համար, խօսնալ պէտք է վերստին արժի աշխարհը, իրաւաբանիւր բազմաւնոյն անսահմանաբար եւ յստակութեամբ կ'ապէ տառ, օտար ծայրաւորները պէտք է գտնազանութիւն անգլիականէն. ես անգլիերէն հմտակամ մարգարէիմ կը հետեւիմ այնպէս, ինչպէս երգիչը երգանալէսէն առաջ կը պատրաստուի իր երգիքին...»:

Այստեղ, հնչական դաստիարակչական իր ճիգերը կը խտանան վէպի եւ պատմութի տարազներու տակ:

Ի՞նչ է սակայն իր առաջարկը:

Պեռնար Շո, որքան ընկերութիւններ

րու բարեկաման, նոյնքան եւ լեզուական մաքրութեան համար կ'աշխատէր: Ան զայրոյթով կը նշմարէր բոլորին մօտ հաւատարմապէս աղաւաղուող լեզուն: Այս վտանգին առաջը առնելու համար՝ կ'առաջարկէր հնչական փոփոխութիւններ, պնդելով, որ նոյնիսկ անգլիերէն լեզուի աշխարհին թիւը պէտք է բարձրանայ նուազագոյնը քառասունի, որպէսզի իւրաքանչիւր տառ ներկայացնէ մէկ հնչիւն միայն եւ ոչ աւելի, այդպիսով հարթելու համար երկու կամ աւելի միացեալ տառով առաջ եկած հնչիւններու արեւածած գծաւարութիւններն ու տգեղութիւնները:

Դժբախտաբար այս ուղղութեամբ իր թափած ճիգերը մասնաւոր արդիւնքի մը չանգած չլլալով՝ իր հասուն տարիքին եւ կազմուած զաղափարաբանութեան ծանրութեան տակ՝ ծնունդ կու տայ այս թատերախաղին:

ՈՒՐԿԷ՞ ԱՅՍ ԱՆՈՒՆԸ

«Փիկվիլիլըն» անունը առնուած է յունական գիցարանութենէն: Այնտեղ, համանուն արուեստագէտը շատ գեղեցիկ կընդ մը արձանը կը շինէ, բայց ա՛յնքան կը սիրէ իր այդ ստեղծագործութիւնը, որ կը սիրահարուի անոր: Ափրոսիդէ, սիրոյ աստուածուհին, Փիկվիլիլընը փրկելու համար սիրոյ տառապանքէն, այդ արձանը կը վերածէ կենդանի աղջկայ մը, որ կը դառնայ յետոյ անոր կինը, Կալաթիա անունով:

Այս պարզ աւանդավէպին վրայ հիմնուած է Շոյի «Փիկվիլիլըն»ը: Փրոֆեսօրը Փիկվիլիլընն է, որ հասարակ ծաղկավաճառ աղջկան՝ Էլզային կը սորվեցնէ լաւ ու ազնուական առողջանութեամբ խօսիլ, մէկ անգամէն զայն բարձրացնելով արքունական շրջանակներուն: Էլզան կը յաջողի, լաւ լաւ կը սկսի հընչել անգլիերէն լեզուն, բայց այդ շփումներէն ու իր երախտադիտական զգացումներէն կը ծնի բուռն սէր մը հանդէպ իր ուսուցիչ-փրոֆեսօրին: Սակայն, փրոֆեսօրը կը սիրահարուի իր արուես-

տին, այսինքն իր ճիշդին, ան կ'արհամարհէ աղջիկը իրրեւ մարդ եւ հողի, կը շարունակէ անոր մէջ տեսնել միայն իր ձգտումներուն եւ ստեղծագործութիւններուն յաջողութիւններն ու յաղթանակները:

Այս թատերախաղը գառտիարակչական եւ հողերանական հարցեր եւ կը ջանայ վերլուծել: Փրոֆեսէօրը կը ներկայացուի իրրեւ շատ յաջող ուսուցիչ մը, ընկերային յեղաշրջիչ մը աւելի ճիշդ, որ իր նուաճումներով գիտովցած՝ չի կրնար ըմբռնել իրեն հանդէպ ցոյց տրուած բուռն սէրը:

Ծաղկավաճառ էլզա, ընկերութեան խոնարհ խաւէն եկած, շնորհիւ հնչարանական դասերուն, կը դադրի երէկուան ծաղկավաճառը ըլլալէ, շփումներ հաստատած ըլլալով աղետական շրջանակներուն հետ, բայց ասիկա կ'ըլլայ նաեւ աղքատ աղջկան դժբախտութիւնը: Իր սիրոյն մէջ անտեսուած՝ աղջիկը կը մընայ շուարած երկու դասակարգերու կտմուրջին վրայ: Դժուար չէր եղած իր բարձրացումը: Այնտեղ, իր վերելքին մէջ մարդկային կիրք, ստեղծագործութիւն, գերմարդու զօրութիւն մը կար, բայց հիմա, այդ գիտակցութեանն ու դժուարութեան ձգտումէն ետք, միթէ կարելի՞ էր գիտակցաբար գիմել անկման... Կարելի չէր գիտակցաբար առնել այսպիսի քայլ, բայց սիրոյ կիրքն ու աղետական դասակարգին երեսին չարտուած թուքի համազօր քայլ մը կ'առնէ էլզա, իջնելով փողոց եւ գիջնելով ամուսնանալ աղքատ տղեկի մը, Ֆրէտին հետ: Էլզա արձան էր երէկ, բայց այժմ դադարած էր արձան ըլլալէ, մաքր էր, սիրտ ունէր, զգացումներ ունէր, եւ ահա կ'իջնէր շուկայ, ո՛չ թէ ինք կ'իջնէր լոկ, այլեւ իրեն հետ սնապ ու սկզբունքներու պատնէշին ետեւ յղփացած դասակարգը կը նուաստանար: Այսպիսով լուծում կը գտնէին հարցումներ, որոնք կը շարունակէին ուղեղը խեղճ աղջկան, թէ Վոնչիմ նա, Բոլք Կիտի երթաւ, ի՞նչ պիտի ընէմ, ի՞նչ կրնամ ըլլալ:

Այստեղ կանգ կ'առնէ դործին Թա-

տերական բաժինը եւ կը սկսի վէպը, այսինքն մնացեալը կը պատմուի պարզապէս: Հեղինակը կը թողու, որ ընթերցողը իր երեւակայութեամբ ու ճաշակով կերտէ դէպքերու յաջորդականութիւններն ու շարունակէ դրուագներու ծալքերէն եզրակացութիւններ քաղել:

Բազմաթիւ հարցեր կը ծնին յանկարծ այս հատորի ընթերցումի աւարտին: Գլխաւոր հարցը կը մնայ անուծելի. հարց մը, որ մշակոյթին չափ հին է ու անոր հետ կապուած՝ երկնակութեան ուժ: Արդեօք գիտութիւնն ու ուսումը, նոր հորիզոններով ու լոյսով նորանոր բարգաւթիւններու եւ մտահոգութիւններու չճշմարտութիւններու մարդկութիւնը, արդեօք երջանկութիւնը ձգտումներու եւ վերելքի ճամբուն հանդիսութիւնն ու հանգրուաններու գոյութեամբ չէ՞ պայմանաւորուած... Իր ամբողջ կենսով փորձած է Ծօ այս հարցումներուն պատասխանել եւ ճիշդ այդ հարցումներու պատասխաններուն վրայ կը բարձրանան իր թատերագրութիւնները, որոնք, ունեց կողմէ, նոյնիսկ ողբերգութիւններ կը հռչակուին: Այս, ողբերգական կենսի մը խոտելի երկուցթեւերն են որ կը մաղկուին իր գրիչով, բայց Վիլհիմի լիքնէ մէջ այդ մաղկումը տեղի կ'ունենայ առաւելաբար հիմունքով ու քմիքով, որովհետեւ համբալ ընկերութիւններն ու աղետական հովերու սնանկութիւնն է, որ կը շնչառի առաւելաբար:

Այս թատերախաղը մասնաւորաբար, եւ, ընդհանրապէս, Պեռնար Ծոյի այլ գործերը, լեզուական եւ հնչական բազմաթիւ նորութիւններ եւ մտահոգութիւններ բեմ հանեցին, ընկերային բարդ ու այժմէական այլ տաղանդներու կողքին:

Բերուած նորութիւններէն կարելի է յիշել լեզուական կարգ մը ինքնատուրութիւնները: Անգլիական խօսակցական լեզուին մէջ կրճատումներ կատարել ընթացիկ օրէնք դարձած էր, բայց առաջին անգամ ըլլալով Ծօ, դանդաղ օգտագործեց դրականութեան մէջ, ջնջելով կըրճատումները քայքայալուող բոլոր ապաթարցներն ու նշանները:

Թատերական թեքնիքի մարզին մէջ, ան ջնջեց թատերախաղին սկիզբը դերակատարներու անուանացանկը տալու սովորութիւնը, այն պատճառաբանութեամբ, որ հեղինակը իրաւունք չունի ի յառաջագունէ իր հերոսները ծանօթացընելու եւ նախատրամադրութիւններ ստեղծելու ընթերցողին մօտ։ Պէտք է հերոսները ծանօթացունին իրենց յայտնութեամբ եւ կատարած դերերով։

Անձամբ ինք հսկած է իր բոլոր դործերուն տպագրութեան։ Ասիկա է պատճառը հաւանաբար, որ հետադային, իր գործերու բազմաթիւ վերհրատարակութեանց ընթացքին սրբազրութիւններ դրեթէ չեն կատարուած։ Բժականդիր եղած է լեզուին հանդէպ եւ կատարելութեան հասցուցած է ոճը, որ կշռութաւոր է եւ երաժշտութեամբ օժտուած։ Կարծէք իր հերոսները խօսելէ աւելի կ'երգեն։

Այսպէս, այսօր եւս, իր մահէն վերջ

Պեռնար Շօ կը շարունակէ մաս կազմել միջազգային թատրոնի մնացուն խաղացանկերուն։ Այսօր, դասական մնալով հանդերձ՝ կը փնտռուն անոր գործերը եւ հաւասարապէս կը կարգացունին նաեւ երիտասարդ սերունդներու կողմէ։ Անոնք եւս Շոյի գործերուն մէջ կը գտնեն այժմէականը, արդի մարդկային ձգտումներն ու պահանջները։

Պեռնար Շօ, 20րդ դարու մեծագոյն դրական դէմքերէն, դժուար մուտք մը ունեցաւ դրական անդադտանէն ներս, բայց մեծ ճիգով նպաստեց այդ անդադտանին մշակման ու իր այդ ճիգերուն շնորհիւ միշտ մնաց յաղթական, միշտ դերադանցեց ինքզինք, արժանանալով նորանոր դափնիներու։

Երկար ու ամբողջութեամբ բովանդակալից կեանքէ մը հոտք, խոր ծերութեան մէջ մահացաւ՝ 1950ին։

ԱՐՄԷՆ ՏՕՆՈՅԵԱՆ





Բ Ա Յ
Ն Ա Մ Ա Կ
Ծ Ա Հ Ա Ն
Ծ Ա Հ Ն ՈՒՐԻՆ



Այս աղերքը գրուած պահանջ, հաստատարէն կարելի է ըսել այլևս, որ Եսահան Եանուրին ուղղուած Վահագն Դաւթեանի բաց նամակը ծանօթ է արտասանմանի բոլոր ընթերցողներուն: Վայրենիքի ձայնն հայտնաբերուած չարաթաթիւրի մէջ լոյս ածուած այդ նամակը արտասուողն ալ գրեթէ բոլոր թերթերուն կողմէն ու չարտասուողներէն որեւէ մէկը չկրցաւ դիմանալ այդ մասին խօսք մը ըսելու փորձութեան:

Ոմանք բուն յարձակումի մը թիրախ դարձուցին Վահագն Դաւթեանը ո՛ր մեղադրանքով, որ տեղեկէ չէր Սկզառն Կոմիտաս-ի հին գրութիւն մը ըլլալու հանգամանքին եւ տեսեղեկութեան այդ փաստէն ծնունդ առած էր իր բաց նամակը:

Այս պնդումը, կը կարծենք, լատ հիմնաւոր չէ: Երբ գրութիւն մը ապուած է տեղ մը եւ այդան տարի ետք պէտք կը դրացուի տնոր արտասուումին, նոյնին բանիւ ոչտանիլ է, որ զայն նոր կարգացող մարդը բռնէ հոն արտայայտուած մտանումները կամ դիմէ հակադրացութեան: Նոր խօսքի տոբթ տուող հին յղուածին ծննդեան թուականը առանձին ոչ մէկ կէտ ունի հոս: Երեսունըհինգ տարի առաջ գրուած գրութիւն մը զատարարուած չէ տեղայման թերթերու դերեղմանառան մէջ մնալու: Կրեայ որեւէ որ կարգացուիլ եւ նա թարգմտի տարբեր սերունդի մը գնահատումին, ինչպէս ըրած է ինքը՝ Եսահան Եանուր իր ծնունդէն առանձեակներն ու հարիւրամեակներն առաջ գրուած յղուածներուն ու գիրքերուն տոբթով:

Ոմանց համար Եանուրի ծայրայեղութիւնները արդիւնք են հայութեան հանգիւղ ունեցած դրական համարումին: Կրեայ ըլլալ իսկ ուրիշներու համար հայութենէ պարզուած մարդն է ահ, Վարդ մը, որ Արարատ լուծի իր հուզոյն խորքը: Ա՛յդ եւս կրեայ ճիշդ ըլլալ: Մնաց որ, Եանուրին կապուած վարկանները, ինչպէս նաեւ Վահագն Դաւթեանի բաց նամակին մէջ կգտնուած պարագայական կէտերը նկատի չունենք, երբ կ'անդրադառնանք ծագած հարցին: Մեզի համար գրագէտ մը, Եսահան Եանուր, մտանումներ արտայայտած է, եւ բաւարարող մը, Վահագն Դաւթեան, այդ տոբթով կ'արտայայտէ իր մտանումները: Այդքա՛ն:

Հակառակ երեսունըհինգ տարիներ առաջ գրուած ըլլալուն, Եանուրի Սկզառն Կոմիտաս-ը ծանօթ է ընթերցողին: Ուստի, կու տանք Վահագն Դաւթեանի բաց նամակը առ ի խորհրդանշութիւն:

ՅԱՐԳԵԼԻ ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐ.

Երբ Բէյրութում հրատարակուող «Սփիւն» շաբաթաթերթում տեսայ
կոմիտասի մասին Ձեր գրած յօդուածը, նախապէս շատ ուրախացայ։ Մտա-
ծեցի. վերջապէ՛ս... Հայ կեանքից, Հայ գրից հեռացած առաջնադար գրո-
ղը չի կաթողացել անտարբեր մնալ իր ժողովրդի համազգային տօնին՝ կոմի-
տասի ծննդեան 100-ամեայ յորելեանին եւ հոգու պարտքն է համարել վե-
րադառնալ Հայ գրին, այդ գրով սրաի խօսքն առել։

Բայց, աւա՛ղ, ուրախութիւնս վայրկենական եղաւ։

«Կը խորհիմ որ մեր աշխարհը բան մը չի կորսնցներ, Եթէ իր վրայէն
Հայը չբռնայ, անհետանայ, կորսուի վերջնապէս»։

Սա Ձեր յօդուածի առաջին նախադասութիւնն է, որը, բնականաբար,
ամէն Հայի (նոյնիսկ ոչ Հայի) պիտի ստիպէր զարմանքով ու տարակուսան-
քով մի պահ կանգ առնել, խորհրդածել եւ նոր միայն անցնել յաջորդ նա-
խադասութեանը։

«Իսկայ վստահ եմ, որ մեր աշխարհը բան մը կը շահի, եթէ Հայը իր
վրայ մնայ յաղթանակելով, ինքզինքը փառքի մէջ պարտադրելով, անմա-
հանալով»։

«Իսկ մը չի կորսնցներ»...

«Իսկ մը կը շահի»...

Մի կողմ թողնելով այդ երկու նախադասութիւնների ակներեւ Հակա-
սութիւնը, տարակուսում էի, ի՞նչ է սա, թեթեւ ձեռքով արուած ճարտա-
սանական մարզա՞նք, թեթեւ գրո՞յց թղթախաղի կամ առեւտրական մտնք
գործարքի մասին, թէ՞ գրողի լուրջ խօսակցութիւն մի ամբողջ ժողովրդի
(հարազատ ժողովրդի) հակառակգրի վերաբերեալ։

Եւ ահա Ձեր յօդուածի յաջորդ պարբերութիւնը եկաւ փարատելու իմ
տարակուսանքները։

«Ի վերջոյ ի՞նչ ենք մենք այսօր, եթէ ոչ թշուառ ու թշուտական բա-
րիաներու խումբ մը, սարուկ, հարածական ու նշաւակ վերջնական արհա-
մարհանքի։ Ի՞նչ ենք այսօր, եթէ ոչ եղբրականօրէն անգոր, բայց կոուսղան,
կատարելապէս անխելք, քէնով ու չարութեամբ լեցուն պղծութիւն։ Եղկելի
տղրուկ՝ պատարագաւորի արիւն ծծող։ Երբեմն ոչ իսկ այդ»։

Սա Ձեր առաջին նախադասութեան տրամաբանական շարունակութիւնն
է, որ ժխտելով երկրորդը, գալիս է հաստատելու, որ, այո՛, նման մի ժո-
ղովրդի անհետացումով աշխարհը զբաւնէ ինձ. ո՞վ է այդ տողերի հեղի-
նակը, ինչի՞ց են ծնուել սեփական ժողովրդի հասցէին նետուած այդ դա-
ւը, մաղձոտ եւ մանաւանդ անարդար տողերը։

Ու, մեղքս ինչ թաքցնեմ, առաջին մտածումս եղաւ այն, որ դրանք սեփական ժողովրդից հեռացած, նրան խորթացած, նրա գիրն ու լեզուն ուրացած մարդու հոգեբանութեան բացատրելի դրսեւորումներ են, սեփական խիղճը հանգստացնող ջանքեր: Իսկապէս, ի՞նչ գործ ունի ինքը «Թշուառ ու թշուառական բարիաներուն», «քէնով ու շարութեամբ լեցուն պղծութեան», «արին ծծող եղկելի տղրուկներին» հետ, առաւել արգար չի՞ վարուել, որ փոխել է անունը, դարձել Արմէն Լիւպէն, փոխել է լեզուն, Փրանսերէն բառաւորներով լեզուներ է գրում, շահում փառք ու մրցանակներ:

Բայց, ճիշդն ասած, այդ մտածումս երկար ժամանակ չէր ուզում հասնուի խղճիս հետ, քանի որ իմ դէմ մի առաջնորդող գրող է կանգնած, իսկ առաջնորդը, իմ համոզմամբ, իրաւունք չունի լինելու մանր, անարդար, մազձոռ ու եսական:

Ու ես այլ կերպ էի փորձում բացատրել սեփական ժողովրդի դէմքին նետած Ձեր այս նշանաւոր խօսքերը. մաքիս մէջ վկայակոչում էի այն ճշմարտութիւնը, թէ Հայրենասիրութեան դրսեւորման տարբեր ձևեր են լինում, որ կայ նաեւ բացասելով հաստատելը, վկայակոչում էի դէպքեր, երբ գրողներ, Հայրենասէ՛ր գրողներ, իրենց ժողովրդի պարտութիւններէ յոգնած ու շարացած, նշանաւոր խօսքեր են ասել, նրան աւելի բարձր, կատարեալ ու հաւաքական տեսնելու միտումով:

Բայց Ձեր յօդուածը երկարօրէն ծանր ու թեթեւ անելով, նրա ոգու մէջ խորանայով, ես այնտեղ այդ միտումի նշույն անգամ չգտայ ու եկայ այն անդամակցութեան, որ իմ առաջին ենթադրութիւնն ամէնից աւելի մօտ է ճշմարտութեան, որ, այո՛, Ձեր այդ յօդուածը սեփական ժողովրդից հեռացած, նրա գիրն ու լեզուն ուրացած մարդու հոգեբանութեան մի հիւանդագին դրսեւորում է:

Այլապէս ինչո՞վ բացատրել այն դարձմանի երևոյթը, որ դուք Ձեր յօդուածում, որը ոչ այնքան կոմիտասի մասին է, որքան Հայ ժողովրդի ճակատագրի, բացարձակապէս անտեսելի եւ ուրացել էք այսօրուայ Հայաստանի գոյութիւնը, մի գոյութիւն, որ ամբողջ Հայ ժողովրդի գոյութեան խարխիւն է, պատուարը, մի գոյութիւն, որտեղ գրում է Հայ ժողովրդի նոր ճակատագիրը: Երբ ես ընթերցում էի Ձեր յօդուածը, այն տպաւորութիւնն էի ստանում, թէ դրա հեղինակը 50 տարի առաջ լեթարգիական քնով քնած ինչ-որ մէկն է, որ յանկարծ զարթնել ու գրել է առել ձեռքը: Բայց եթէ դուք անգամ 50 տարի առաջ դրած լինէիք այդ խօսքերը, դարձեալ ճշմարիտ չէիք լինի, եւ դարձեալ չէր կարելի ներել Ձեզ: Ու ես Ձեր յօդուածից նաեւ այն տպաւորութիւնն էի ստանում, թէ 50 տարի առաջ Հայ ժողովրդի թշնամիներին իսկապէս յաջողուել է աշխարհի քարտէզներէ ի սպառ ջնջել Հայաստանը եւ Հայ ժողովրդից թողնել միայն «Թշուառ ու թշուառական բարիաների խումբ մը»:

Ձեր յօդուածում բազում այլ կամայականութիւններ էի միտախնդուք առաջադրել էք մի թէպէտ, ըստ որի Հայ ժողովուրդը իր բազմադարեան պատմութեան ընթացքում միայն չորս հոգեւոր յաղթանակ է ունեցել. «Անոնք կը կոչուին Ս. Մեսրոպ, Կոմիտաս, Կաթողիկէ, Անդրանիկ»: «Ասոնցմէ զատ, — գրում էք դուք, — ինչ որ առնես հայէն, կը զգաս թէ կիսկատար կամ կեղծ է, փթուկ կամ թափթփուած է, գոյնը դուրս կու տայ կամ կը նեխի»:

Ձեր նախասիրութիւններին ու խղճին եմ թողնում Աւարայրն ու «Մասմայ ծները»՝ համաշխարհային այդ էպոսը, մեր հոգեւոր մեծագոյն յաղթա-

նախնեքից մէկը անտեսելը, մեր միջնադարեան հանճարեղ քնարերգութիւնը, մանրանկարչութիւնը, Սարգսրապատը եւ շատ ու շատ այլ քաներ շրջանցելը, ռակայն Ձեր նախասիրութիւններին ու խղճին չեմ կարող թողնել հայ ժողովրդի հողիկան ու Ֆիդիքական վերջին մեծագոյն յաղթանակը՝ 20րդ դարի ուսումնական դարում եղեռնից, նախնիներից, արեւելից ու մոխրից նրա յառնումն ու վերածնունդն ուրանալը:

Վերածնունդը եւ մեծատառով եմ գրում, որովհետեւ առ սովորական բոլոր չէ հայ ժողովրդի համար: Սա արիւն է ու զրտինք, առաքալանք է ու ուշիատանք, զոհարարութիւն է ու մաքրում: Սա մէկտեղ հաւաքուած աւելի քան երկու միլիոն հայութիւն է, 700 հազարնոց մայրաքաղաք Երեւան, 1500ից աւելի հայկական դպրոց, 12 հայկական բարձրագոյն ուսումնական հաստատութիւն, հայկական տնտեսական: Սա հայկական ծաղկող մշակոյթ է, մէկընդմիջ փրկուած հայոց լեզու...

Որքան ինձ յայտնի է, դուք գրական ու բարեկամական կտպեր ունէք մի շարք Փրանսացի գրողների հետ: Նրանցից ոմանք եղել են Հայաստանում եւ զբոլ աշտուրայ Հայաստանի մասին: Ձեզ համար գիտար չէր լինի կարողալ նրանց գրածները կամ գէթ նրանցից տեղեկութիւններ ստանալ՝ Սովետական Հայաստանի իրավիճակի մասին ճշմարտութիւնն իմանալու համար:

Բայց ես սեփական փորձով եմ համոզուել, որ դա չի հետաքրքրում Ձեզ: Եթէ չէք մոռացել, անցեալ տարուայ դարնալը Փրանսիա կատարած մեր ուղեւորութեան ժամանակ, Սփիւռքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէի նախագահ Վ. Համադասպեանը եւ ես այցելեցինք Ձեզ: Մենք մեր երթուղուց բաւականին չեղուել էինք՝ Սան Ռաֆայէլում Ձեզ հանդիպելու, անուանի գրողիդ հետ սփիւռքի ու հայրենիքի, հայապահպանութեան ու հայ գրականութեան հարցերի շուրջ գրուցելու համար: Բայց այդ ամէնը Ձեզ չհետաքրքրեց: Այնքան մանր հարցերի շուրջ տարաք դուք Ձեր խօսակցութիւնը, որ ես հիմա նրանցից ոչինչ չեմ յիշում: Բայց մի մանրամասնութիւն մեր խօսակցութեան մէջ եւ հիմա, Ձեր յոգումը կարդալուց յետոյ, դա նոր լոյսի տակ երեւաց ինձ: Դուք մօտեցաք Ձեր գրադարանին (որտեղ, ի դէպ, ես հայերէն ոչ մի գիրք չտեսայ), վերցրիք Փրանսերէն մի հատոր, սկսեցիք թերթել եւ ինչ-որ բան որոնել: Գտնելով, թարգմանեցիք. Փրանսիացի նշանաւոր գրողներից մէկը իր գործում Ձեր գրական տաղանդը հաւաստող մի տող էր գրել...

Անուշա, Փրանսիացի գրողի հաւատումից չէ, որ մենք պիտի իմանայինք Ձեր տաղանդի չափի ու ծաւալի մասին: Բայց ինձ շատ դարձացրեց այն, որ Փրանսիացի գրողի կարծիքին այդքան մեծ նշանակութիւն տալով, դուք ամենեւին չհետաքրքրուեցիք, թէ հայրենիքում ինչպէս է ընդունուել այնտեղ վերահրատարակուած Ձեր գիրքը: Եւ դրա պատճառը ինձ հասկանալի է գառնում այժմ, Ձեր յոգումը կարդալուց յետոյ:

Թուելով հայ ժողովրդի հողեւոր զորք յաղթանակները եւ գրականութեան մէջ ոչ մի յաղթանակ չտեսնելով, որովհետեւ գրականութիւնը անհամեմատորէն բարձրագոյն եւ կատարելատիպ բան է եւ մտաւորական աւելի մեծ կարողութիւն կը պահանջէ, դուք գտնում էք, որ հայ ժողովրդին միշտ պակասել են «մտաւորական մեծութիւնն ու հասունութիւնը... ոչ միայն ստեղծելու, այլեւ գոնէ օտարը ըմբռնել կարենալու համար»:

Այո՛, սեւով սպիտակի վրայ հենց այդպէս էլ գրել էք: Ու եթէ հայը «գոնէ օտարը ըմբռնելու» կարողութիւն չի ունեցել, էլ ինչո՞ւ հետաքրքրուէիք, թէ ինչպէս է ընդունել Ձեր գիրքը:

Բայց, զարմանալի բան՝ Խորհնացուց ու Եղիշէից մինչեւ Նարեկացի, Քուչակից ու Սայաթ-Նովայից մինչեւ Թումանեան, Վարուժան ու Զարինց ժխաող Զեք գրիչը յանկարծ շատ է բարեհաճ դառնում ու գրում. «Ս', որքան պիտի ուզէի չորսերու (այսինքն՝ Ս. Մեարտի, Կոմիտասի, Կաթողիկէի, Անդրանիկի) կողքին յիշել Ինարան եւս, մեր մեծագոյն գրագէտը»:

Դարձեալ ուզում եմ Զեք նախադրութիւններին ու խղճին թողնել Ինարային մեր մեծագոյն գրագէտը հռչակելը, բայց Զեք խղճին չեմ կարող թողնել հայ ժողովրդի մասւոր կարողութիւնները կասկածի տակ առնելու, հայ ժողովրդի ազգային արժանապատուութիւնը վիրաւորելու Զեք վտանգաւոր փորձերը, որովհետեւ ազգային արժանապատուութեան դիտակցութիւնն այսօր փրկութեան գոյատեւման ամենագորաւոր ազդակներէն է: Այդ մասին հանգամանակից խօսակցութիւն եղաւ Հայկական բարեգործական ընդհանուր միութեան Փարիզում կայացած համագումարում: Աշխարհի տարբեր ծայրերից եկած պատգամաւորները միաձայն հաւատարմ էին, որ հայադատանքի դոյութիւնը, նրա աշօրուայ իրավիճակը, նրա տնտեսական ու մշակութային նուաճումները, հայ ժողովրդի համընդհանուր ճանաչումը պատճառակցործական կարողութիւնները նոր սերնդի մէջ գնալով աւելի ու աւելի են զօրացնում ազգային արժանապատուութեան դիտակցութիւնը, եւ դա մեծապէս նպաստում է հայապահպանութեանը:

Ասկայն ի՞նչ էք դուք մատուցում այսօր ուժացման վտանգին դէմ առ դէմ կանգնած հայ երիտասարդութեանը. այն, որ նրա ժողովուրդը մտաւոր մեծութիւնից ու հասունութիւնից, գոչ միայն ստեղծելու, այլեւ օտարը ըմբռնելու կարողութիւնից զուրկ, «թշուառ ու թշուառական բարիաներու խումբ» է, «բարին ծծող», «եղկելի տղորուկ» եւայլն, եւայլն:

Եւ առաւել վտանգաւոր մի բան. դուք Զեք յօդուածում չէք խորշել նաեւ հայ ժողովրդի երկու հատուածներն ու նրանց լեզուները միմեանց հակադրելու ամօթալի, հայ գրողին պատիւ չբերող, հայ ժողովրդի հաւաքականութեանը հարուածող քայլ անելուց:

«Մինչդեռ մեր յետամնաց զարմիկները, ըսել կ'ուզեմ արեւելահայերէ, կը խաբխափէին ու դեռ կը խաբխափէին թափթփուած, լոյծ բարբառի մը մէջ, մենք կերտեցինք ձեւը...», գրում էք դուք:

Հենց սկզբից ասեմ, որ ես արեւելահայ չեմ, եւ այն, ինչ պիտի ասեմ այս տողերի կապակցութեամբ, վիրաւորուած արժանապատուութեան հետեւանք չհամարէք:

Նախ՝ այդ ո՞ր օրուանից նոյն ժողովրդի արհեստականօրէն զտուած հատուածները «զարմիկներ» դարձան (նոյնիսկ ոչ եղբայրներ), ընդ որում, նրանցից մէկը՝ յետամնաց: Եւ ինչո՞վ է յետամնաց:

«Մենք կերտեցինք ձեւը» ասելով ի նկատի ունէք, ինչպէս նշել էք: «Ասատուրներու քերականութիւնը»: Ու եթէ քանը միայն քերականութիւնն է, ապա կ'ասէի, որ Ասատուրների քերականութիւնը Արեղեանի քերականութեան հետ համեմատած, այնքան էլ կատարեալ չէ: Բացի այդ, ուզում եմ յիշեցնել, որ հայ ժողովրդի երկու հատուածների վրայ իջած դարաւոր խաւարից յետոյ ազգային զարթոնքի սուսիին չեփորահարը Պալատուր Արմիւսեանը եղաւ, որը, կարծեմ, Զեք «յետամնաց զարմիկներէց» էր, այսինքն արեւելահայ:

Բայց չարունակենք այս «կարծեմներ»ը: Դա ոչ մի իմաստ չունի: Արմիւսեանն ու Ալիշանը, Պէշիկթաշլեանն ու Բաֆթին, Վարուժանն ու Զարին-

ցը, Մեծարհնցն ու Տէրեանը հայ մէկ ու միասնական ժողովրդին են, հայ ազգինը:

Բայց «հայ ազգ» բառերը դրելով, յիշեցի, որ դուք դա էլ էք ժխտում: «Դեռ չկայ ազգն հայոց» յայտարարում էք դուք Ձեր յողուածում:

Ճիշդն ասած, ես էլ եմ երբեմն այդպիսի մտածումներ ունենում, բայց դա լինում է միայն այն պահերին, երբ Ձեր յողուածի նման յողուածներ եմ կարդում, երբ հայ ժողովրդի երկու հատուածները միմեանց հակադրելու միտումներ եմ տեսնում, երբ «Սփիւռք» շարաթաթերթն եմ ընթերցում, երբ Հայաստանի հասցէին լուսանքներ եմ լսում... Ու մտածում եմ. «Ձէ, դեռ ազգ չենք»: Բայց յայնորդ վայրկեանին իսկ սթափւում եմ. ի՞նչ մեղք ունի ազգը: Ձէ՞ որ դրանք անհատներ են միայն:

Նամակս աւարտելուց առաջ կ'ուզէի ասել նաեւ հետեւեալը. անձամբ ես ոչինչ չունեմ այն բանի դէմ, որ դուք հեռանալով հայ գրից, Ֆրանսերէն էք գրում: Ամենեւին: Իմ դէմ է վիճում Սարոյեանի պայծառ կերպարանը: Նրա Հայրենասիրութեան մասին ես երկար չեմ խօսի, կ'ասեմ միայն, որ նա իր վերջին Խարինրի պատմութեան ծննդից մէկը վերնագրել է այսպէս. «Ուր որ երթաս, Հայաստան պոռա»: Իմ դէմ է նաեւ Լեւոն Ջալեֆի Սիրմէլեանը, նա, որ անդլիախօս բազմամիլիոնանոց աշխարհին մատչելի դարձրեց մեր հանճարեղ էպոսը:

«Ուր որ երթաս, Հայաստան պոռա»: Իր ժողովրդի զոյատեւութեամբ չահախնդիր ամէն հայ մարդու խղճի պարտքն է սա:

Յարգելի Շահան Շահնուր,

Նամակիս վերջում աւղում եմ մի ամբողջ ժողովրդի մասին ասուած Ձեր նախադասութիւնները մի փոքր չըջասելով, ուղղել հնչց Ձեզ:

Կը խորհիմ, որ հայ գրականութիւնը բան մի չի կորսնցներ, եթէ իր մէջէն Շահան Շահնուր չջանայ, անհետանայ, կորսուի վերջնապէս:

Բայց վստահ եմ, որ հայ գրականութիւնը բան մը կը չահի, եթէ Շահան Շահնուր իր մէջ մնայ հայ ժողովրդի զոյատեւութեան մասին հողալով, հայ ժողովրդի ազգային արժանապատուութեան ու հաւաքականութեանն ի նպաստ դործելով, նոր, բարձրարուեստ դործերով հայ դպրութիւնը հարստացնելով:

Նման բարեմաղթութիւններով էլ ցանկանում եմ աւարտել իմ այս անկամայ նամակը:

Յարգանքներով՝ ՎԱՀԱԳՆ ԴԱԻԹԵԱՆ





SOLJENITSYNE, VU PAR DAVID LEVINE

ՍՈՆԺԵՆԻՅԻՆԻ ՊԱՐԱԳԱՆ

Անաթոլի Կուզնեցովն էտք, որ «Ազատութիւնը ընտրեց» եւ աստա-
տանեցաւ Անգլիա, Խորհրդային դրականութեան մէջ պատահած մեծագոյն
դէպքը եղաւ. գրողներու միութենէն Ալեքսանդր Սոլժենիցինի վտարումը:

1945-ին, առանց դատ ու դատաւարութեան ճամբար քշուած եւ ամ-
բողջ տասնամեակ մը ստալինեան սահմուկեցոյցիչ բաժակները ցմբուր ըմ-
պած այս գրագէտը, վաթսունական թուականներէն ասդին, շարունակ իր վը-
րայ կեդրոնացուց իշխանութիւններուն ուշադրութիւնը, յաջորդաբար են-
թարկուելով անոնց գրական ու բացասական ծայրագոյն վերաբերումներուն:
Իրրեւ գրագէտ Սոլժենիցինի յայտնութիւնը առաջին անգամ ըրաւ «Նովի
Լիբ» հանդէսի գլխաւոր խմբագիր Տվարզովսկին եւ անոր գրած «Իվան Դե-
միտվիչի մէկ օրը» յանձնարարեց Պրուշինսկի, որ խանդավառուեցաւ գործով

և ևր կարգին թելագրեց մեծ ասպետանակով լոյս ընծայել զայն: Յրուշէւի օրերուն ձիւնհալ էր խորհրդային կայսրութեան մէջ, բայց Յրուշէւի անկումին հետ սկսաւ նոր ձիւնամբրիկ մը փչել հոն, ցրտացնելով հետզհետէ բոլոր հողիները ու առաջին հերթին՝ մտածող մարդը, գրագէտը: Նոր ձիւնամբրիկին հարուածած առաջին զէմքերը եղան Անտրէ Սինեափոկի և Եուրի Տանիէլ, յետոյ Կինզպուրկ և ընկերները, ու վերջինը՝ ըստ միջազգային քննադատներու միահամուռ կարծիքին՝ ուստ գրականութեան վերջին մեծը, Ալեքսանդր Սուփենիցին:

Յատկապէս վերջին չորս-հինգ տարիներուն, բերրոկրատ դատուն կամայականութեանց ու դրաքննիչներու աստիճանաբար խտացող սեղմումներուն դէմ մղած իր պայքարին համար՝ Սուփենիցին կը նկատուէր վարչականորէն խորթ զաւակը: 1967-ին գրած իր զոյգ նամակները բոլորովին անբարեյոյս դարձուցին զինք: Առաջինը այդ նամակներէն ուղղուած էր Յորհրդային Գրողներու Կարգ համադրութեան, գրաքննութիւնը ջնջելու առաջադրանքով, և երկրորդը՝ գրողներու միութեան վարչութեան, որով կը պահանջէր իր Բաղդադի քաղաքէն տալաւարք հրատարակել Յորհրդային Միութեան մէջ, որոնք ըլլալով որ այլապէս ինք ի միճակի պիտի չըլլար արգիւն անոր հրատարակութիւնը արտասահմանի մէջ:

Ի հարկէ, Նկատի չառնուեցան իր առաջարկներէն և՛ առաջինը և՛ երկրորդը, և, ինչպէս կը նախատեսէր գրագէտը, իր երկրին մէջ մերժուած ձեռագրիները անցան արտասահման և հրատարակուեցան հոս ու հոն, տեղ մը հատուածաբար, ուրիշ տեղ մը ամբողջութեամբ: Փարիզի Ժիլիսը հրատարակչականը լոյս ընծայեց անոր «Իվան Դեմիտրիչի մէկ օրը», «Մատրիսանի տունը», «Քաղցկեղաւորներու տաղաւարը» իսկ Լաֆոն հրատարակչութիւնը հրատարակ հանեց «Ռեքուզիթեր եւ մանր պատմութիւններ» և «Առաջին շրջանակը» անուն երկերը:

Այս ամէնը կատարութեամբ լեցուցին իշխանութիւնները և պատճառ դարձան գրողէտին վտարման:

Վտարումը տեղի ունեցաւ հետեւեալ պայմաններով:—

4 Նոյեմբեր 1969-ին, Սովետ Գրողներու Միութեան Ռեալանի մասնաճիւղը ժողով մը գումարեց, ի ներկայութեան 6 գրողներու, Սուփենիցինի, տեղական կուսակցութեան քարտուղարին և Մոսկուայէն Ռեալան եկած Յորհրդային Գրողներու Միութեան քարտուղարութեան անդամներէն մէկուն: Այդ ժողովին մէջ, հինգ ձայներով ընդունուեցաւ Սուփենիցինը հեռացնելու բանաձեւը, իսկ քանի մը օր ետք, Յորհրդային Գրողներու Վարչութիւնը հաստատեց Ռեալանի որոշումը, առանց հնարաւորութիւն տալու գրագէտին, որ պաշտպանէ ինքզինքը:

Ըստ դատախազներուն՝ երկու մեղք ունէր Սուփենիցին. առաջինը ա՛յն, որ իր վէպերուն մէջ շատ անգամ զոյներով պատկերացուցած էր Յորհրդային իրականութիւնը, և երկրորդը՝ արտասահմանի մէջ չէր արգելած անոնց հրատարակութիւնը:

Երբ «Լիտերատուրնայա կադէթա» թերթը հազորդեց լուրը, առաջի իմաստով բողոքի աննախընթաց ալիք մը բարձրացաւ աշխարհի մէկ ծագէն միւսը: Բոլոր երկրներու մտաւորականները, ալիքը, ձախերը, պահպանողականները, ամէնքը մէկ մարդու պէս ձայն բարձրացուցին ի նպաստ Սուփենիցինի:

Բողոքարկուններու հետաքրքրական թիւը, անշուշտ, համայնապար Գաղտնի թիւն էր ու առաջին հերթին ուստ համայնապար թիւը: Վնալի Միք

Հանդէսի գլխաւոր խմբագիր Տվարդովսկի, ինչպէս նաեւ բանաստեղծներ Եւստոյնկո, Արմաղուշինա եւ ուրիշներ, առաջ քաղմաթիւ գրողներն ու մտաւորականներ բողոքագիր մը յղեցին Գրողներու Միութեան Վարչութեան, պահանջելով, որ վերականգնեն հնթարկեն Սոլժենիցինի դէմ արձակուած ծանր վճիռը եւ վերականգնեն անոր գրողի իրաւունքը:

Պակաս հետաքրքրական չեղան այլ երկիրներու ձախակողմեան մտաւորականութեան ելոյթները ու յատկապէս Ֆրանսայի Համայնավար կուսակցութեան օրգան «Լիւմենիք» թերթին կողմի գրեթէ Սոլժենիցինի պաշտպանութեան գործին մէջ:

«Լիւմենիք»-ն, որուն գլխաւոր խմբագիրը Ֆրանսական Համայնավար կուսակցութեան կեդրոնական կոմիտէի անդամ Լուի Արակոնն է, 19 նոյեմբերի թիւին մէջ հրատարակութեան առաւ Ֆրանսացի գրողներու ազգային կոմիտէի յայտարարութիւնը, զոր, բացի Արակոնէն, ստորագրած էին ձախակողմեան եւ ձախակողմեան հակում ունեցող գրողներ, ինչպէս Վէր-կէրը, Էլշտ Տրիւլէն, Ալէն Պրէվոն, Ժան Փոլ Սարթրը եւ քաղմաթիւ ուրիշներ: Ետհեկանութենէ զուրկ չէ այդ յայտարարութեան կարգ մը հաւաքածները յիշել հոս:

«Գրողներու Միութենէն Սոլժենիցինի վտարումը ամբողջ աշխարհի աչքին կը հանդիսանայ խոշորագոյն սխալ մը, որուն մշտնակութիւնը չի ստեմանափակուիր այն երեւոյթի մէջ, որ այդ արարքը կը վնասէ հորինողային Միութեան: Կատարելով այդ արարքը, հորինողային զեկավարութիւնը կը նպաստէ աղիւսիզմի մասին տիրող այն կարծիքի հաստատումին, որուն կառչած են սոցիալիզմի բշտամիները: Զե՛» որ մտնի սխալ մը արդէն կատարուած էր Պորիս Փասթերնակի նկատմամբ: հորինողային Միութեան մէջ մի՞թէ իսկապէս ամենաժնշտ է մեծ գրողներու հետ վարուիլ իբրեւ վնասակար տարրեր: Մենք, այն յայտարարութիւնը ստորագրողներս, պատրաստ էինք հաւատալու, որ ամենա մեծ այն ժամանակները, երբ հռոմեացի Միստայիլ կոյցովի, Օսիփ Մանդելշտայնի, Իսաակ Բարելի եւ քաղմաթիւ ուրիշ խորհրդային գրողներու տրիւնը: Մենք կը հաւատայինք, որ այդ սարսփելի ժամանակները չեն վերադառնար այլեւս, բայց ի՞նչպէս կրնամք հաւատալ ատոր այսօր: Մենք կ'ուզեմք հաւատալ, թէ հորինողային Միութեան մէջ կը գտնուին մարդիկ, որոնք ընդունակ են հասկնալու Սոլժենիցինի ծանցեալ կատարուած չարիքը, որովհետեւ այդ չարիքը պէտք է վերջ գտնէ: Պէտք է որ մտաւորիկները համարեն:

Ձախակողմեան թիւին պատկանող կաղմակերպութիւններէն ոչ առաջինը եղաւ Ֆրանսայի վերոյիշեալ գրողներու ելոյթը, ոչ ալ երկրորդը մը՝ նաց: Ուրիշ քաղմաթիւ միութիւններ, թերթեր, անհատ մտաւորականներ հանդէս եկան ի պաշտպանութիւն Սոլժենիցինի, հարց տալով նոյն պահին, թէ ի՞նչ կարելի է մտածել այնպիսի վարչակարգի մը մասին, որ իր գոյութենէն աւելի քան կէս դար հոգ, տակաւին վտանգաւոր կը համարէ անկախ գրողի մը ձայնը:

Աւելորդ պիտի ըլլար խօսիլ ոչ-համայնավար ճակատի թերթերուն եւ անկախ մտաւորականներու ելոյթներու մասին, որոնք անըմբռնելի ու անհանդուրժելի զանկելով արուեստագէտի մը վրայ բռնացող որեւէ գործ, բնականօրէն աւելի բուռն եղան, համարելով Սոլժենիցինի վտարումը իշխանութիւններուն փափուկ կացութեան յուսահատական մէկ գրեթէ արտաքին միջոցով: Սոլժենիցինի մեղքը ուրիշ բան չէր, եթէ ոչ իր տաղանդին ուժը, իրականութիւնը զօրութեամբ տալու անոր քաջատիկ ընդուն



նակութիւնը, համոզականութիւնը, բռնի ուժով դրախտային յորջորջուած կեանքի մը խախուտ հիմերը պատկերացնելու այն հեանդական յանդգնութիւնը վերջապէս, որ բնաւ ցանկալի չէ, բնդհանրապէս չէ եղած օուտի վերայ իրենց կացութիւնը յարգարած բռնակալներուն:

Ոչ-համայնավար նախադի արտայայտութիւններէն զօրաւորագոյնը հաւանաբար եղաւ միջազգային համբաւի տէր 31 դրողներու «Թայմզ»-ի մէջ լոյս ընծայած ազդարարութիւնը, որ կը սպառնար ժշակութային պոյֆօթի ենթարկել Խորհրդային Միութիւնը, եթէ վերջ շարուէր արուեստագէտներուն ու մասնաւորաբար Սոյժենիցիի դէմ կազմակերպուած հայածանքին: «Թայմզ»-ի ազդարարութիւնը ստորագրողներուն մէջ էին լուսանկարչական լիբրի պատնէնին մէջ երեւոյց դէմքերը՝ Փիէր Էմմանուէլի, Մաք Քարթիի, Կրասի, Կրիսի, Միլլըրի պէս դէմքեր, որոնցմէ առաջինը, Էմմանուէլ յատուկ յօդուածով մը վերլուծեց երեւոյթը, առանձնապէս ընդգծելով, որ «Աւելի քան յիսուն տարի կ'ընէ, որ Խորհրդային Միութեան գրաքննաւարին մը ռստիկանութիւնը կ'արգիլեն, որ կրօնքի մարդերը աղօթեն, փիլիսոփաները մտածեն եւ գրադէտմերը ստեղծագործեն: ...Ու եթէ կազմուի բնաջնջութիւն կամ յաւիտեանապէս լուսնային դատաւարտուած արուեստագէտներուն ու մարտիրոսներուն ցանկը, աշխարհը ապշահար պիտի մնայ կարուստի միտքներով անգիտ:»

Անկարելի է Սոյժենիցիի առիթով կատարուած արտահանադրականներէն ու Խորհրդային Միութեան համադրութիւն մը կազմել, բայց կարելի չէ չիշել ձեռնարկարար Վազէթեան թերթին մէջ անոր վերաբերմամբ ծանուցանող Գրողներու Վարչութեան հաղորդագրութեան միւս կէտը, այն՝ որ կ'արտօնէր Սոյժենիցիի մեկնիլ իր ուղած վայրը: Գրողներուն հանդէպ դրախտութիւնը շարունակելու մասը կազմուած նոր թակարդ մըն էր շնորհուած այդ զապատութիւնը, որուն մէջ չիսկաւ Սոյժենիցիին, մնաց իր հայրենիքին մէջ, շարունակեց պայքարը: Յետ վտարման մղած իր պայքարին առաջին դրսեւորումը եղաւ Գրողներու Վարչութեան ուղղած 12 Նոյեմբեր թուակիր իր նամակը, որ, անուշադ, չհրատարակուեցաւ: Խորհրդային մամուլին մէջ, անուղղակի նամակներով անցաւ արտասահման եւ ամէնուն ծանօթ է արդէն անոր բովանդակութիւնը: Արուեստագէտի մը վայել արուեստի դրուած այդ նամակով՝ Սոյժենիցիին կը բողոքէր դէմքը վերաբերող անձներուն կամայական վճիռին դէմ, յայտարարելով, որ հետո չէ այն օրը, երբ զինքը վտարող բանաձեւին տակ ստորագրող անձերը պիտի ուզեն ընել իրենց անունները:

Ի հարկէ՝ պիտի ուզեն ընել: Ո՞վ պիտէ, թերեւս Սոյժենիցիին վտարողները աւելի դժբախտ են այս պահու: Այս յիշուած տարիներուն ընթացքին տարբեր վիճակներ ապրեցա՞ն միթէ: Խորհրդային դրադէտը ե՞րբ դժբախտ չէ եղած...

ՍՈՒժԵՆԻՑԻՆԻ ՆԱՄԱԿԸ



Ամօք է, որ ռոմակսիս ըրի՛ք ձեր կանոնագիրը: Զիս վտարեցի՛ք՝ բացակայութեան ընթացքի՛ն, կարծես կրակ կար, վտարեցի՛ք, առանց հրաւիրագիր կամ հեռագիր գրկելու, առանց նոյնիսկ նամարդութեան անհրաժեշտ չարս ժամը շնորհելու, որպէսզի Ռեազացէն գամ եւ ներկայ գտնուիմ նիստին:

Ռեաթի, հարկադրուած եմ պատասխանս փոխարինել այս նամակով:

Մաքրեցէ՛ք ձեր ժամացոյցները, որոնք ետ մնացած են՝ նոր ժամանակներու հետ բազդատմամբ: Բացէ՛ք ձեր այնքա՛ն ուրաւ թանձրածալ վարագոյրները: Նոյնիսկ չէ՛ք ունդրադառնար, քէ դուրսը լսյո է արդէն: Խուլերու ժամանակը չէ այլեւս, ոչ ալ մութ այն շրջանը, երբ ել՛ք չկար, երբ հաճոյ թուեցաւ ձեզի վտարել Ախմաթովան: Նայեալէս երկչոտութեան ժամանակը չէ, երբ փառքէրնաբը վտարեցի՛ք գոռալով:

Այդքան ամօք չբաւեց ձեզի: Աւելի՞մ կ'ուզէ՛ք: Սակայն մօտ է ժամը, երբ ձեզմէ՛ իւրաքանչիւրը պիտի մզնիս որքել իր ստորագրութիւնը, որ կ'երեւայ այսօրւան որոշումին տակ:

Կոյրերու առաջնորդ կոյրե՛ր, չէ՛ք ըմբռներ նոյնիսկ, քէ կ'ընթանա՛ք ձեր յայտարարած .ուղղութեան հակառակ: Տագնապալի այս օրերուն, անկարող է՛ք մեր հիւանդ ընկերութեան ներկայացնել շինարար եւ լաւ միտք մը: Կ'առաջարկէ՛ք միայն ձեր ասեղութիւնը, ձեր հսկողութիւնը, որպէսզի սանձը մնա՛յ ձեր ձեռքը:

Ձեր թանձր յօդուածները բզիկ-բզիկ կ'իյնան, ձեր յիմարաբանութիւնը թուութեամբ կը վառի: Միայն միաձայն ճաշարկութիւնը կայ եւ վարչական միջոցները: Ահա քէ ինչա՛ւ, այն ճամակին, զոր Լիտիա Զուկովսկայա գրած էր, — այս վերջինը հպարտութիւնը կը կազմէ առաւ արի գրականութեան — ոչ Շալոխովը եւ ոչ ալ դուք համարձակեցա՛ք պատասխանել: Սակայն վարչական ունելիները պիտի սեղմեն գայն: Խոնջալէս կրցար ընդունիլ, որ գիրքդ կարգան առանց հրատարակուած ըլլալու: Երբ իշխանութիւնները կ'առաջեն չհրատարակել՝ անյայտացիր, գոյութիւն մի՛ ունենար, քոյլ մի՛ տար ուրէ՛ մէկուն կարդալ գայն:

Կը պատրաստեն նաեւ հեռացումը Լեւ Կոպելեւի, նախադի նախկին ռազմիկ մը, որ արդէն տասը տարի

արգելափակուած է, հակառակ այն իրողութեան, որ անմեղ է: Սակայն եիմա յանցաւոր է: Ինչո՞ւ ուրեմն միջամտել ի նպաստ հալածուածներուն: Ինչո՞ւ յայտնեց, թէ տեսակցած է ազդեցիկ անձնաւորութեան մը հետ: Սակայն ինչո՞ւ այս բնոյթի խօսակցութիւններ գաղտնի կը պահե՛մք ժողովուրդէն: Զխոստացա՞մ մեզի, յիսուն տարի առաջ, որ այլեւս երբեք գաղտնի դիւանագիտութիւն, գաղտնի բանակցութիւն, գաղտնի նշանակումներ եւ պաշտօնադրկումներ տեղի պիտի չունենան, այլ, ընդհակառակն, ժողովուրդը իրացէ ի թաց պիտի վիճի այդ մասին:

«Թշնամիս կ'իմանայ», — ահա՛ւստիկ ձեր արդարացումը: Տախտեմական եւ տեսական «բշնամիները» դիրքին արդարացումն են ձեր պաշտօններու գոյութեան, ինչպէս նաեւ այն, որ գոյութիւն չունիք: Կործնա թէ Թշնամիներ չկային, երբ մեզի խոստացան, որ ճշմարտութիւնը անմիջապէս եւ միշտ պիտի ըսուի մեզի: Սակայն ի՞նչ պիտի ընէ՛ք դուք, առանց Թշնամիների: Զէ՛ք կրնաք նշնիսկ ապրիլ առանց Թշնամիների: Ատելութիւնը, միայն ատելութիւնը, որ ոչինչով եւ կը մնայ ցեղային ատելութենէն, դարձած է ձեր ամուլ մթնոլորտը: Բայց այսպէս է, որ կը կարսնցնեն ամբողջական եւ միակ մարդկութեան զգացումը, որուն կորուստը կը մօտենայ: Եթէ վազը հիւսիսային սառնամանիքը հալի՝ ամբողջ մարդկութիւնն է, որ պիտի ընկղմի: Իսկ այդ պարագային՝ ո՞վ պիտի համագէտ ձեր «դաւաճարգային պայքարի» գաղափարով:

Եւ դեռ չեմ խօսիր այն մասին, թէ ի՞նչ պիտի ստատանի, երբ ճանի մը ողջ մնացած երկոտանիներ քափառին աշխարհի վրայ, որ դարձած է *հատիսաքթիվ* եւ, հետեւաբար, մեռնելու վրայ է: Ժամանակն է մթնածեղի, որ մենք նախ կը պատկանինք մարդկութեան, որ մարդը կը գտնուի ինքնանիւն իր մտածումով եւ լեզուով: Եւ որ մարդիկ, բնականաբար, պետք է ազատ ըլլան: Եւ եթէ գտնուէ շղթայեմք, կը վերադառնանք կենդանական աստիճանին:

Իրողութիւններու հրապարակումը՝ համընթեան, պարկեշտ եւ ամբողջական ձեւով — ահա՛ առաջին պայմանը ընկերութեան առողջութեան համար, մէջն ըլլալով մե՛րք: Այն՝ որ չ'առաջնորդուիր ասով, այն որ չի մտահոգուիր հայրենիքով, իր շահը փնտռող մըն է լոկ: Այն՝ որ չ'մբռներ այս ճշմարտութիւնը եւ չ'ազեր որ կիրարկուի իր հայրենիքին մէջ, կը ճշանակէ, թէ չ'ուզեր փրկել հայրենիքը իր հիւանդութիւններէն, այլ՝ կ'ուզէ որ այդ հիւանդութեան ներմուծումով խկ փտուի դառնայ իրականութիւն:

ԱԼԵԿՍԱՆԴՐ ՍՈՒԺԵՆԵՒՆ

«ՉՈՍԹԱՔՈՎԻՉԻ ԱՄՕԹԸ»



ՆՍ. ՇՈՍՏԱԿՈՎԻՉ

Հակառակ հոս երեւոյող զրահարական նկարին, ուստի երաժիշտ Չոսթաքովիչին լսուած ձայնը քնարական ձայն մը չէր այս անգամ, այլ խռպոտ ձայն մըն էր, որ վիրաւորեց մարդոց բարոյական հասկացողութիւնն ու խղճմանքը:

Խնդիրը կը վերաբերէր Չոսթաքովիչի այն կոչին, որ կ'առաջադրէր արուեստագէտներու եւ մտաւորականներու միջադասին կոմիտէ մը կազմել, փրկելու համար յոյն երաժիշտ Թէոտորաքիսը, որ ներկայիս արգելափակուած է իր երկրի իշխանութիւններուն կողմէ:

Այս օրերուն, Ալեքսանդր Սուքենիցինը խիսակի մը վերածող երկրէն եկած այս կոչը, ըստ էութեան ազնիւ ըլլալով հանդերձ՝ հեղեանքի մը պէս հնչեց ու վրդովեց միջազգային բազմաթիւ մտաւորական գէմքեր, որոնց հակազդեցութիւնը շատ հաճելի չեղաւ անպայման Չոսթաքովիչի նրբասցեալ ականքներուն:

«Ո՞վ արդեօք, — կ'ըսէր Փրանսացի մը, — պիտի ուզէր գործակցիլ իրեն: Թո՛ղ նայս սկսի իր սեփական տունը մաքրել: Ուրիշներ, ամենամեր աւրիշներ, պատրաստ են գրադելու Թէոտորաքիսով եւ իրեն կը ձգեն ամբողջ ժամանակը, պայքարելու համար ի նպաստ Սուքենիցինի, Սինեալսկիի, Տանիէլի, Կիլգայուրիի: Բայց քեքեւս ինք կը նայըմտրէ շիտով այդ մասին, որովհետեւ այդ մարդերը իր ամօքն են»:

Ստալինի կողմէ ահաբեկուած ու ժողովրդի միջոցով խոնարհազոյն աստիճաններուն իջած այս երաժիշտը շատ լաւ գիտէ, թէ ինչ կը նշանակէ բիրտ ուժ, ուժեղի կամայականութիւն ու ճիշդ այս պատճառով, ազատութեան արժէքը գիտցող մարդու հողին պոռթկացող խօսք կրնար համարուիլ իր խօսքը, եթէ կարծիր մարդասպանին հետ չքացած ըլլային նաեւ կարծիք բարձրը, յետնորդները շնչելի գարձուցած ըլլային միլիոններու մը՝ նոյրաբար, բայց երբ աշխարհ գիտէ, թէ Բեռլինը քան մը այնտեղ, կը կատարուի մաքրում մէջը, տարբեր երկրի մը արուեստագէտը փրկելու համար խորհրդային սահմաններէն եկած մտածումը մարդոց զիջին խնդալ է պարզապէս:

Ի հարկէ, այնքան միամիտ չենք, կարծելու համար, որ այս նախաձեռնութիւնը կը պատկանի Չոսթաքովիչին: Տեղի ունեցածը դժբախտ երաժիշտին գտնադրութեան շարունակութիւնն է պարզապէս, այն տարբերութեամբ, որ եթէ Ստալինն ու ժողովրդի բրտութիւններով յարգելի խաչակիրի մը վերածուած էր, նոր իշխանութիւններուն օրով դրուած է արգահատելի կացութեան մը մէջ:

ՆՇԱՆ ՊԵՇԻԿԹԱՇԼԵԱՆ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԱԾ

«ԳԷՈՐԳ ՄԵԼԻՏԻՆԵՑԻ ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ»-ի դատական դատը այսու կը յայտնէ, թէ 4 Դեկտեմբեր 1968-ի իր նիստին ներկայացուած գործերուն մէջէն, իր ցանցի արժանի համարեց դրացէտ Նշան Պէշիկթաշլեանի «ԹԱՏԵՐԱԿԱՆ ԴԷՄՔԵՐ» անուն ծաւալուն աշխատութիւնը:

«ԳԷՈՐԳ ՄԵԼԻՏԻՆԵՑԻ ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ»-ի պայմաններուն համաձայն, դրացէտ Նշան Պէշիկթաշլեանին յատկացուեցաւ 1000 լիւր. ոսկիի պարգևը եւ ձեռնադրները յանձնուեցան տպագրութեան:

Պատկերազարդ եւ 1150 մեծադիր էջերէ բաղկացած մեծածաւալ այս գործին խնամուած տպագրութիւնը աւարտեցաւ 1970 Յունուար 20-ին:

Ըստ «ԳԷՈՐԳ ՄԵԼԻՏԻՆԵՑԻ ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ»-ի պայմաններուն, 500 օրինակ պիտի շնորհուի հեղինակին, իսկ դատական պիտի տրամադրութեան տակ դրուած օրինակներէն պիտի ուղարկուի Հայաստանի եւ Սփիւռքի մշակութային բոլոր հաստատութիւններուն, մամուլին եւ գրական ու մտաւարական ծանօթ դէմքերուն:

Այն դատուները եւ ընթերցողները, որոնք կը փափաքին ունենալ Նշան Պէշիկթաշլեանի «ԹԱՏԵՐԱԿԱՆ ԴԷՄՔԵՐ»-ը, պէտք է դիմեն Կիլիկիոյ Կաթողիկոսարանին, հետեւեալ հասցեով. —

CATHOLICOSSAT ARMENIEN DE CILICIE
ANTELIAS — LIBAN

Գիրքին գինն է, Միջին Արեւելքի համար՝ 15 լիւր. ոսկի, այլ երկրներու համար՝ 6 տոլար:

ԴԻՒԱՆ

ԳԷՈՐԳ ՄԵԼԻՏԻՆԵՑԻ ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ ԴԱՏԱԿԱԶՄԻ

ԾՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՅԱՆՔ

ՍԻՐՈՑ ԵՒ ԿԱՐՕՏԻ ԱՂԱԽՆԻՆԵՐ (Բանաստեղծութիւն), Վարուժան Պետիկեան, Պէշքուք, 1969

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՏՕՆԵՐԸ (Մտածումներ), Արտակ Արք. Մամուկեան, Թեմքան, 1969

ՏԱՐԵԳԱՆ ԲԱԺԵՆԳԻՆ

ԼԻՐԱՆԱԾ	22 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՌԱՆԻՐԱՆ	8 ՏՈՒՐ
ՀԱՏԱՎԱՃԱՌ	2 Լ. ՈՍԿԻ



Պրոֆեսոր Խոսրով

G. SASSOUNI

Rue Sélim Boustani,
Beyrouth - Liban